ԱՅՍ ԳԻՐՔԸ ԼՈՒՄԱԿԱՆԱՑՎԱԾ Է

"ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻ

www.freebooks.do.am ԿՈՂՄՈՒ:

ԿԱՅՔԸ ՆՐ ԱՌԱՋ ՆՎԱՏԱԿ Է ԴՐԵԼ ԹԱՓԱՆԱՍՏԵԼ ԵՎ ԱՆԱՐԺ ՆՐ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒՄ ԳՈՐԾԵՐ, ՈՐՈՆՔ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ ԵՆ

ՏԱՐԱՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎԵՐՈՎ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔՈՒՄ:

ՑԱՆԿԱԼՈՒՄ ԵՆՔ ՀԱՋԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅԱՆԸ:

www.freebooks.do.am

www.freebooks.am

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ՊԱՏԿԵՐԱԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՌԱՖԱՅԵԼ
ԻՇԽԱՆՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

ՊԱՏԿԵՐԱԿԱՐԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

կատարվել է 1 թվականից 95 տարի առաջ: Կամ՝ եթե կարդում ենք «մ. թ. ա. 8-րդ դարում կատարվում է Մեծ Հայքի առաջին միավորումը», նշանակում է 1 թվականից սկսած պետք է հետ հաշվենք 8 հարյուր տարի, և միավորումը կատարվել է 8-րդ հարյուրամյակի մեջ: Իսկ եթե կարդում ենք՝ **մ. թ. ա. 3-րդ հազարամյակ,** նշանակում է 1 թվականից հետ ենք հաշվում 3 հազար տարի, և հենց 3-րդ հազարամյակի մասին է գրվածը:

Իմանալու համար, թե մ.թ.ա. ընկած որևէ դարից կամ թվականից մինչև մեր օրերն ինչքան ժամանակ է անցել, մ թ.ա. եղած թվականին գումարում ենք այսօրվա մեր թիվը՝ 1988: Օրինակ, մ.թ.ա. 95 թվականը եղել է մեզնից 2083 տարի առաջ (95 + 1988 = 2083):

Պետք է հիշել նաև, որ մ.թ.ա.-ով նշվում են 1 թվականից առաջ եղած տարիները, դարերը, հազարամյակները, իսկ մեկ թվականից հետո եկող տարիները որևէ ձևով չեն նշվում: Օրինակ, չենք գրում մ.թ.հ. 1920 թվականին: Դրա կարիքը չկա: Եթե մ.թ.ա. տառերը չկան, նշանակում է խոսքը 1 թվականից այս կողմ եղած ժամանակի մասին է:

Պետք է նաև ճիշտ տարբերել դարերը: Օրինակ, մեր դարը 20-րդն է, այն սկսվել է 1901 թվականից և կվերջանա 2000-ին: Այսինքն՝ 19 թվով սկսվող քառանիշ թվականները 20-րդ դարի մեջ են մտնում (չհաշված 1900-ը, որը 19-րդ դարի մեջ է): Նույն կերպ էլ 18-ով սկսվողները՝ 1801, 1858, 1890 և այլն 19-րդ դարի մեջ են մտնում: Կամ՝ 10-ով սկսվողները (չհաշված 1000-ը) 11-րդ դարի մեջ են՝ 1021, 1045 և այլն: Եռանիշ թվականների դեպքում՝ 9-ով սկսվող թվականները 10-րդ դարի մեջ են մտնում. օրինակ 951, 969 և այլն: Կամ 3-ով սկսվող թվականները 4-րդ դարի մեջ են մտնում: Օրինակ, կարդում ենք, որ 387 թվականին Հայաստանը երկու մասի է բաժանվել. նշանակում է, որ դեպքը եղել է 4-րդ դարում: Գրիգոր Նարեկացին ծնվել է 951 թվականին, ուրեմն՝ 10-րդ դարում է ծնվել և այլն:

Այժմ պատմական աղբյուրների մասին: Մի ժողովրդի պատմությունը գրվում է պատմական աղբյուրների օգնությամբ: Այդ աղբյուրներն են՝ տվյալ ժողովրդի լեզուն, այդ ժողովրդի մասին պատմող գրավոր հուշարձանները՝ արձանագրություններ, հին մատյաններ, ապա հնագիտական նյութերը, տվյալ ժողովրդի ժողովրդական ստեղծագործությունը, հնում գործածված դրամները և այլն:

Հայ ժողովրդի պատմության աղբյուրներից առաջինը հայոց լեզուն է: Հիշենք հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի խոսքերը. «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը».

Այո՛, իրոք, հայոց լեզուն հայ ժողովրդի հեռավոր անցյալի կախարդական բանալին է: Մենք դեռ կտեսնենք, որ հայերի ծագում նշանակում է հայոց լեզվի ծագում, և երբ որոշում ենք, թե երբ ու որտեղ է ծնվել հայոց լեզուն, դրանով որոշում ենք, թե երբ և որտեղ են ծնվել այդ լեզվով խոսողներն ու մտածողները՝ հայերը: Հայոց լեզուն իր բառապաշարով մեզ վկայություններ է տալիս նաև իր անցած պատմական ուղու մասին: Օրինակ, հարևան հին լեզուներից հայերենի մեջ անցած և հայերենից այդ լեզուների մեջ թափանցած բառերը մեզ պատմում են հնագույն ու հին հայերի բնակության վայրի, այլ ժողովուրդների հետ նրանց ունեցած հարևանության ու հարաբերությունների մասին:

Հայ ժողովրդի պատմության մյուս կարևոր աղբյուրը տարբեր լեզուներով գրված արձանագրություններն են, նաև՝ պապիրուսները, գրքերը: Դրանց մեջ էական են հայերեն գրված հին մատյանները: Դրանցից են ամենից առաջ հայ հին պատմիչների գրքերը: Ամենահին հայ պատմիչները, որոնց գրքերը հասել են մեզ, ապրել են 4-րդ և 5-րդ դարերում: Դրանցից Ագաթանգեղոսը և Փավստոս Բուզանդը, ըստ տեղեկությունների, ապրել են և իրենց պատմությունները գրել 4-րդ դարում: Իսկ Կորյունը, Եղիշեն, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին ապրել ու

ստեղծագործել են 5-րդ դարում: Հետագա դարերում նույնպես ապրել և գրել են շատ հայ պատմիչներ, որոնցից են Սեբեոսը, Մովսես Կաղանկատվացին, Ղևոնդը, Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Ստեփանոս Ասողիկը, Արիստակես Լաստիվերցին, Մատթեոս Ուռհայեցին, Սամուել Անեցին, Մխիթար Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը և շատ ուրիշներ:

Հայ պատմիչների գրածները լրացնում են հայերեն քարագիր արձանագրությունները, հին ձեռագրերի հիշատակարանները և այլն:

Հայոց պատմության ամենահին ժամանակների մասին հայ հեղինակներից առաջինը գրել է Մովսես Խորենացին: Եվ նա գրեց հայոց ամբողջական պատմություն՝ հայերի ծագման ժամանակաշրջանից մինչև իր օրերը՝ 5-րդ դարը: Խորենացու գրած «Հայոց պատմությունը» այսօր մեզ վստահելի շատ տվյալներ է տալիս հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանների մասին: Սակայն Խորենացու պատմությունը հաճախ էլ անհրաժեշտ է լինում լրացնել այլ, ավելի հին աղբյուրների տվյալներով: Պարզ է, որ Խորենացու նկարագրած դեպքերը որքան մոտ են նրա ապրած ժամանակաշրջանին, այնքան ավելի արժանահավատ են: Իսկ իրենից 1000, 2000 և ավելի տարիներ առաջ կատարված դեպքերի մասին գրելիս՝ Խորենացին կարող էր սխալվել, քանի որ ինքն էլ օգտվել է այլ աղբյուրներից, որոնցում նույնպես անճշտություններ են եղել, նաև՝ բանավոր խոսքից, որտեղ շատ դեպքեր շփոթված են լինում: Այդպիսով, վստահելով Խորենացուն և մյուս հայ պատմիչներին, նրանց գրածներն անհրաժեշտ է լրացնել ու ճշտել ավելի հին ժամանակներում գրված արձանագրությունների և այլ երկերի մեջ հայտնված փաստերով:

Ահա, հայ ժողովրդի պատմության աղբյուրների մեջ շատ կարևոր են հնադարյան գրավոր հուշարձանները: Մարդիկ սկսել են գրել մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերում, մեզնից ավելի քան 5000 տարի առաջ: Գրում էին քարերի, կավե սալիկների վրա կամ բույսերից, ծառի կեղևից, տերևներից թղթի պես բան էին պատրաստում ու դրանց վրա գրում: Տարածված էր պապիրուսը, որ նման էր այժմյան թղթին: Այն պատրաստում էին պապիրուս կոչված ջրային բույսից: Եղջերուների, հորթերի կաշվից էլ էին «թուղթ» պատրաստում ու գրում վրան. դա էլ հայերեն կոչվում է մագաղաթ, այլ լեզուներով՝ պերգամենտ (փոքրասիական Պերգամոն քաղաքի անունից):

Հնագույն ժամանակներից պահպանվել են տարբեր ժողովուրդների ստեղծած գրավոր շատ հուշարձաններ, որոնց մեջ տեղեկություններ կան նաև հին ու հնագույն հայերի և Հայաստանի մասին: Հայերի մասին այդպիսի վկայություններ կան պահպանված մ.թ.ա. 3-րդ հազարամյակից սկսած

Հնագույն վավերագրերը, հատկապես փորագիր արձանագրությունները վստահելի տեղեկություններ են տալիս, քանի որ գրվել են այն ժամանակ, երբ տեղի են ունեցել դեպքերը: Ուստի և նրանց հաղորդած տեղեկություններն ու հայ պատմիչների գրածը համեմատում ենք իրար հետ, ժամանակներն ու դեպքերը ճշտում և գրում հայ ժողովրդի պատմության հնագույն ժամանակների, ինչպես և այլ, ժամանակաշրջանների մասին: Դրան մեծապես օգնում են նաև հին հույն, հռոմեացի (լատին), ասորի, արաբ և այլ ազգերի պատկանող պատմիչների գրքերը, որոնցում նույնպես շատ բան կա ասված հայերի ու Հայաստանի մասին:

Հայ ժողովրդի պատմության մի այլ աղբյուր է ժողովրդական բանահյուսությունը: Օրինակ, մենք դեռ կտեսնենք, որ «Արա Գեղեցիկի և Շամիրամի» ժողովրդական առասպելը իր մեջ պարունակում է տեղի ունեցած պատմական դեպքերի արձագանք: Իսկ «Սասունցի Դավիթ» հայոց դյուցազնավեպը կարևոր տեղեկություններ է տալիս մ.թ.ա. 7-րդ դարում Հայաստանի և Ասորեստանի հարաբերությունների, ինչպես և 7 — 9-րդ դարերում հայերի ու արաբների հարաբերությունների մասին:

Հայ ժողովրդի պատմության շատ կարևոր աղբյուր է հնագիտությունը. հնագետները գետնի տակից հանում են հին ժամանակների բնակավայրեր, պալատներ, տաճարներ, հնադարյան գանձարաններ՝ խեցեղեն, դրամներ,

զարդեր, զենքեր և այլն: Հայաստանի հողի տակից հնագետները գտել են մեզնից 4—5 հազար տարի առաջ ապրած մարդկանց գանգեր, տարբեր ժամանակների կճուճներ, կարպսներ, զարդեղեն, արձաններ, բարձրաքանդակներ, հայոց Արարատյան թագավորության բերդաքաղաքներ, հին Հայաստանում տարբեր ժամանակ, զանազան լեզուներով գրված արձանագրություններ, դրոշմված դրամներ և այլն:

Պատմական բոլոր աղբյուրները տալիս են փաստեր հայ ժողովրդի պատմության վերաբերյալ: Բայց մի ժողովրդի պատմությունը գրելու համար փաստերը բավական չեն: Անհրաժեշտ են պատմաբանի գիտելիքներ, պատմական ժամանակների զգացողություն և տրամաբանություն: Հմուտ պատմաբանն է, որ խոսեցնում է փաստերը, ինքն էլ հասկանում նրանց լեզուն, բովանդակությունը: Օրինակ, Երևանի մոտ գտնվող Կարմիր բլուրում հողի տակից հայտնաբերվեց մ.թ.ա. 7-րդ դարում կառուցված բերդաքաղաք, որի նկուղներում գտնվեց գարեջուր պատրաստելու սարք: Պատմաբանը գիտի, որ մ.թ.ա. 5-րդ դարում հույն Քսենոփոնը գրել է, որ Հայաստանում ինքը գարեջուր է խմել: Այդպես պարզվում է, որ դեռ Քսենոփոնից առաջ էլ հայերը գարեջուր էին պատրաստում:

Այսպիսով, մեր օրերում որևէ ժողովրդի հին պատմությունը ճիշտ գրելու համար անհրաժեշտ են փաստեր և տրամաբանություն: Այս երկու սյուների վրա էլ հենվում է հայ ժողովրդի պատմությունը. դրանք երկուսն էլ ամուր պետք է լինեն, որ նրանց վրա հենված պատմական աշխատությունը ճշգրիտ, արժանահավատ լինի

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ ԿԱՄ ՄԵԾ ՀԱՅՔ

Հին Հայաստանը երկու մասից է եղել բաղկացած՝ Մեծ Հայք և Փոքր Հայք: Հայերի ծագման ու հետագա ամբողջ պատմության գլխավոր տարածքը Մեծ Հայքն է: Այն կոչվում է նաև Հայկական լեռնաշխարհ, քանի որ իր շրջակայքի համեմատ կարծես մի մեծ լեռնային կղզի լինի: Նրա սահմաններն են՝ հյուսիսից Քուռ (Կուր) գետը, հարավից Հայկական Տավրոս լեռնաշղթան ու Միջագետքը, արևելքից Կասպից ծովը, արևմուտքից Եփրատի այն մասը, որ թեքվում է դեպի հարավ ու հոսում մինչև Հյուսիսային Միջագետք: Այդ տարածքը շուրջ 300 հազար քառակուսի կիլոմետր է, մի փոքր ավելի: Սև և Կասպից ծովերն այդ տարածքի լավագույն նշաններն են. Մեծ Հայքի արևմտյան շրջաններն ընկած էին Սև ծովի հարավ-արևելյան ափերից սկսած մինչև Միջագետք: Սև ծովից հարավ՝ սկսած Բոսֆորից՝ Փոքր Ասիան է կամ Անատոլիան. ահա դրա արևելյան շրջաններից սկսվում է Մեծ Հայքը և հասնում մինչև Միջագետք (հարավից) և Կասպից ծով (արևելքից)

Արևմուտքից Մեծ Հայքին հարում է Փոքր Հայքը՝ շուրջ 60 հազար քառակուսի կիլոմետր տարածքով. Դրանից էլ արևմուտք՝ Միջերկրական ծովի ափին Կիլիկիան է. այնտեղ տարբեր ժողովուրդների ու ցեղերի հետ միասին հնուց ի վեր եղել է նաև հայ բնակչություն, բայց հայկական պետություն Կիլիկիայում ստեղծվեց ավելի ուշ ժամանակում՝ միջնադարում (11 — 14-րդ դարեր):

Հայկական լեռնաշխարհը որպես գլխավոր Հայաստան եղել ու ըմբռնվել է շատ հին ժամանակներից: Փաստերը վկայում են, որ Ք.ա. 9-րդ դարում այդ ըմբռնումն արդեն կար Արարատյան պետության թագավորների մեջ: Իսկ թե երբ է առաջացել **Մեծ Հայք** անվանումը՝ ի հակադրություն Փոքր Հայքի, դժվար է ասել: Պարսիկները և հույները շատ հնուց են այդ տարածքը կոչել Մեծ Հայք. պարսկերեն՝ **Բազուկ Արմենան,** հունարեն **Արմենիա Մեգալե:** Հռոմեացիները նույնպես այն կոչում էին Մեծ Հայք՝ **Արմենիա Մայոր:**

Մեծ Հայքի տարածքում կան երեք մեծ լճեր՝ Վանա լիճը, որն ասորեստանցիները անվանում էին Նաիրիի վերին ծով: Սրանից հյուսիս-արևելք գտնվում է Սևանա (կամ Գեղամա) լիճը: Իսկ Վանա լճից դեպի արևելք գտնվում է Ուրմիա (կամ Կապուտան) լիճը, որն ասորեստանցիները կոչում էին Նաիրիի ներքին ծով. Մեծ Հայքում կամ Հայկական լեռնաշխարհում սկիզբ են առնում չորս մեծ գետեր՝ Եփրատը, Տիգրիսը, Քուռը, Արաքսը

(Երասխ): Եփրատը Հայկական լեռնաշխարհի արևմտյան կեսից, իսկ Տիգրիսը միջին մասից, իրենց մեջ մի քանի վտակներ առնելով, հոսում են դեպի հարավ, դուրս գալիս Հայկական լեռնաշխարհից և անցնում Միջագետք: Միջագետք հենց նշանակում է այդ երկու գետերի միջև գտնվող երկիր: Դա Հայաստանի հարավային հինավուրց հարևանն է, որ ինքն էլ շատ հետաքրքրական ու փոթորկալի պատմություն է ունեցել. Միջագետքի հարավում Եփրատն ու Տիգրիսը միանում են և թափվում Պարսից ծոցը. Իսկ Արաքս և Քուռ գետերը սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասերից, Սև ծովից հարավ՝ և հոսում են դեպի արևելք, ապա միանում են իրար ու թափվում Կասպից ծովը:

Եփրատ ու Տիգրիս գետերը Միջագետքի ժողովրդի կենսատու երակներն են եղել. երևի այդ է պատճառը, որ Միջագետքի հին բնակիչները՝ աքքադացիները Հայկական լեռնաշխարհը հաճախ անվանում էին Նաիրի՝ որ աքքադերեն նշանակում է ջրերի երկիր:

ԾԱԳՈՒՄԸ

Հայերը ծագման մասին խոսելուց առաջ անհրաժեշտ է պարզել, թե ո՞րն է հայերի ամենակարևոր առանձնահատկությունը, առանց որի հայեր և հայ ժողովուրդ չկան: Ի՞նչն է դարեր շարունակ հայերին տարբերել աշխարհի մյուս ժողովուրդներից, իրենց հարևաններից:

Ամեն մի ժողովուրդ մի շարք առանձնահատկություններ ունի: Այդպես է նաև հայ ժողովուրդը: Կան **էթնիկական հատկություններ,** որ նշանակում է ժողովրդացեղային կամ լեզվացեղային հատկություններ: Դրանց մեջ մտնում են տվյալ ժողովրդի մարդաբանական առանձնահատկությունները: Հայերն ունեն իրենց մարդաբանական կերպարանքը, որը մարդաբանության մեջ կոչվում է **արմենոիդ:** Դրա առանձնահատկություններից են, օրինակ, կլոր, հետևում տափակ գանգը, ատամների որոշ ձևն ու կարգը, հայկական բնորոշ քիթը և այլն: Մարդաբանական արմենոիդ տեսակով հայերը տարբերվում են շատ ժողովուրդներից: Սակայն հայերի հին ու նոր հարևան ժողովուրդներից մի քանիսն էլ իրենց մարդաբանական կերպարանքով նույնպես արմենոիդ են: Մարդաբանական գիտությունը՝ արմենոիդ տեսակի մեջ է դնում նաև շումերներին, խուռիներին, քրդերին, արևելյան վրացիներին, թալիշներին և այլն: Իրոք, գանգի ու դեմքի կառուցվածքով հայերը երբեմն չեն տարբերվում իրենց որոշ հարևաններից: Իսկ սա էլ նշանակում է, որ հայկական մարդաբանական տեսակը՝ արմենոիդը, վճռական առանձնահատկություն չէ՝ հայերին հարևան ժողովուրդներից տարբերելու համար. դա միայն հայ ժողովրդինը չէ:

Ապա՝ մարդաբանականից բացի, մի ժողովրդի կարևոր առանձնահատկությունն է նրա ազգագրությունը, որի մեջ մտնում են սովորությունները, հավատալիքները, տարազը, արվեստը, ազգային կերակուրները և այլն:

Հայերի ազգագրական հատկություններն, իհարկե, նույնպես յուրատեսակ են, տարբերվում են մյուսներից (քիչ հետո կտեսնենք թե ինչով): Բայց երբեմն էլ այդ հատկություններից մեկը կամ մի քանիսը նմանվում կամ նույնանում են հարևան ժողովուրդների նույն կարգի հատկություններին: Օրինակ, տարազը. պատմական Հայաստանի հյուսիսային մասերում ապրող հայերի և վրացիների տարազներն իրար նման են եղել: Որոշ վայրերում էլ իրար նման են եղել հայկական ու արաբական տարազները և այլն: Կամ՝ երբ նայում ենք Արարատի թագավորության հայկական հին բարձրաքանդակներին ու զարդերին և համեմատում Ասորեստանի կամ Բաբելոնի ժամանակներից պահպանված աքքադական բարձրաքանդակների ու զարդերի հետ, շատ նմանություններ ենք տեսնում: Նույնը վերաբերում է նաև հայերի գործածած զենքերին, այդ թվում՝ վահաններին, սաղավարտներին նետերին: Դրանք նման են եղել հայերի հարևան մարերի կամ փռյուգիացիների զենքերին: Եվ կամ սովորություններ՝ նիստուկացը, ժողովրդական արվեստը. օրինակ՝ [illegible] հայկական պարի ազգային ձևերից է, բայց այդպիսի պարեր հայերից բացի ունեն կամ ունեցել են Հայաստանի հարևան մի քանի այլ ժողովուրդներ, այդ

թվում հույները, խեթերը և այլն: Նույնը վերաբերում է հայ ազգային ուտելիքներին. օրինակ, խորոված ինագույն հայկական կերակուր է, բայց խորոված անում են նաև հայերի հին ու նոր հարևանները: Լավաշ հնուց ի վեր թխել են հայերը, դա հայկական հացի տեսակ է, բայց պարզվում է, որ հնում լավաշ թխում էին նաև աքքադացիները:

Այո՛, հայերի ազգագրական առանձնահատկությունների մի զգալի մասը շատ յուրօրինակ է, բայց և այդ առանձնահատկությունները վճռական չեն հայերին տարբերելու համար աշխարհի ժողովուրդների ու մանավանդ հարևանների մեջ:

Ինչ վերաբերում է հայկական երաժշտությանը, ապա այն խիստ յուրահատուկ է և նման չէ այլ ժողովուրդների երաժշտությանը. դրա պատճառն այն է, որ հայկական երաժշտությունը ծագել է հայոց լեզվից, այդ լեզվի հընչերանգից: Երբ ավելի խորն ենք ուսումնասիրում հայկական կերպարվեստը և ճարտարապետությունը, նկատում ենք, որ դրանց զուտ ազգային յուրահատկություններն էլ առնչված են հայկական լեզվամտածողության հետ: Այդպես, զուտ հայկական ամեն առանձնահատկություն իր հիմքում ունի հայոց լեզուն:

Իրոք, դարերի ընթացքում հայերի գլխավոր ու վճռական առանձնահատկությունը, որը միայն հայերինն է եղել և որը չի ունեցել ու չունի ուրիշ որևէ ժողովուրդ, լեզուն է՝ հայոց լեզուն: Դրանով հնուց ի վեր, իր ծագման օրերից խոսել են հայերը, հայ ժողովուրդը, և դա եղել է միայն հայերի մայրենի լեզուն՝ խոսելու, մտածելու և դատելու լեզուն: Առաջին հերթին հենց իր լեզվով էլ հայ ժողովուրդը տարբերվել ու տարբերվում է աշխարհի մյուս բոլոր ժողովուրդներից, իր հին ու նոր հարևաններից: Հայ մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանը գրել է, որ Հայաստան նշանակում է հայոց լեզու: Ավելացնենք, որ հայ ժողովուրդ նշանակում է հայոց լեզու: Հայ ժողովուրդ՝ հանած հայոց լեզու, հավասար է ոչ հայ ժողովուրդ: Եվ այսպես, հայ ժողովրդի գոյության փաստը միշտ եղել և մնում է հայոց լեզուն, հայերեն լեզվամտածողությունը, այլ լեզուներ հայերենով սովորելը:

Իհարկե, այսօր կան մարդիկ, որոնք հայերեն չգիտեն կամ վատ գիտեն, բայց իրենց հայ են համարում ըստ ծագման: Այդպիսիներն իրենց հայ են համարում, քանի որ աշխարհում կա հայ ժողովուրդ, այսինքն՝ հայախոս ու հայերեն մտածող ժողովուրդ, հայոց կենդանի լեզու:

Աշխարհի բոլոր ժողովուրդների համար չէ, որ մայրենի լեզուն գլխավոր տարբերիչ առանձնահատկությունն է: Օրինակ, իսպանացիները, արգենտինացիները, չիլիացիները, ուրուգվայցիները խոսում ու մտածում են իսպաներեն. նրանց ազգային տարբերությունները գալիս են պետական հպատակությունից և այլ գործոններից: Նույնը վերաբերում է անգլիախոս ու անգլերեն մտածող ժողովուրդներին (Անգլիա, ԱՄՆ, Ավստրալիա և այլն): Բայց այդ ժողովուրդների համար անգամ մայրենի լեզուն գոյության էական փաստ է: Այլ է հրեաների հարցը, որոնց ազգային գլխավոր հատկանիշը մովսեական կրոնն է. շատ հարյուրամյակներ հրեաները գերմանախոս (իդիշ), իսպանախոս, անգլիախոս, վրացախոս էին, բայց պահպանվում էին:

Պատմական ու աշխարհագրական այն շրջանում, այսինքն հարավ-արևմտյան Ասիայում, որտեղ ծագել են հայերը և որտեղ ընթացել է հայոց ամբողջ պատմությունը, բոլոր ժողովուրդների համար հնուց ի վեր մայրենի լեզուն հիմնական տարբերիչ գործոնն է եղել, և այդ շրջանի բոլոր լեզվացեղային (էթնիկական) միավորներին ու ժողովուրդներին միմյանցից տարբերելու համար պետք է նկատի ունենալ նախ լեզվական գործոնը: Եվ աշխարհագրական այդ շրջանում եթե ժողովուրդներ են վերացել, ապա դա եղել է մայրենի լեզուն կորցնելու, այսինքն լեզվափոխության պատճառով, եթե նոր ժողովուրդներ են ծնվել, ապա դրա պատճառը որևէ մայր լեզվից մի նոր լեզվի ծնունդն է եղել:

Հիմա բնախոսներն ապացուցել են, որ մարդու մայրենի լեզվով է պայմանավորված նրա ուղեղի խոսքային կենտրոնների կառուցվածքը և որ մարդու նյարդային համակարգում գլխավորն ու գերիշխողը լեզվական և խոսողական կենտրոններն են: Ահա թե ինչու մի ժողովրդի լեզուն զգալապես պայմանավորում է նաև նրա արվեստի, նաև ազգագրության բնույթը:

Մի ժողովրդի լեզվամտածողությունն իր կնիքն է դնում նույնիսկ այդ ժողովրդի ներկայացուցիչների կեցվածքի, հայացքի, շարժուձևի վրա:

Եվ այսպես. հայերի ամենագլխավոր, տարբերիչ առանձնահատկությունը հնուց ի վեր եղել է և մնում է հայոց լեզուն: Բայց լեզուն ինքը մարդն է: Քանի որ մարդն է խոսողը, լեզվով մտածողը: Մարդուց անջատ լեզու չկա: Ուրեմն, եթե մենք իմանանք, թե որտեղ և երբ է ծագել հայոց լեզուն, դա կնշանակի, որ կիմանանք, թե որտեղ և երբ են ծագել այդ լեզվով խոսողներն ու մտածողները, այսինքն՝ հայերը:

ՄԻ ՔԻՉ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ամեն մարդ մի ընտանիքի անդամ է կամ որևէ ընտանիքից է ծագել, այնպես էլ ամեն մի լեզու որևէ լեզվաընտանիքի անդամ է, այդ լեզվաընտանիքի մորից է ծնվել: Այդպես. ամեն լեզու ունի իր մայրը և քույրերը: Այդ մայրը լեզվաբանության մեջ կոչվում է նախալեզու:

Աշխարհում շատ լեզվաընտանիքներ կան: Հիշենք դրանցից մի քանիսը: Սեմական լեզվաընտանիք, որի մեջ մտնում են արաբերենը, ասորերենը (արամեերենը), եբրայերենը, աքքադերենը (ասուրաբաբելերենը) և այլն: Սեմական այս լեզուները ծագել են մայր սեմական լեզվից: Ապա կա իբերակովկասյան ընտանիք, որի մեջ մտնում են վրացերենը, լազերենը, աբխազերենը, ավարերենը և այլն: Թուրքական լեզվաընտանիք, որի մեջ մտնում են յակուտերենը, կիրգիզերենը, ուզբեկերենը, ղազախերենը, ույգուրերենը, ադրբեջաներենը, թուրքերենը և այլն: Հնդեվրոպական լեզվաընտանիք, որի մեջ մտնում են հնդկերենը, պարսկերենը, հայերենը, հունարենը, ալբաներենը, լիտվերենը, լատվիերենը, սլավոնական լեզուները (ռուսերեն, չեխերեն, ուկրաիներեն և այլն), գերմանական լեզուները (գերմաներեն, հոլանդերեն, նորվեգերեն, անգլերեն և այլն), ռոմանական լեզուները (ֆրանսերեն, իտալերեն, ռումիներեն, իսպաներեն և այլն): Այս լեզվաընտանիքներն էլ ունեցել են իրենց մայր լեզուն: Նկատի ունենանք, որ այժմյան որոշ լեզուների համար տվյալ լեզվաընտանիքի մայրը տատ է գալիս: Օրինակ, անգլերենի, արդի գերմաներենի, հոլանդերենի, նորվեգերենի և գերմանական մյուս լեզուների մայրը հնագույն ընդհանուր գերմանական լեզուն է, իսկ սրա մայրը ընդհանուր հնդեվրոպական լեզուն է:

Կան նաև ուրիշ շատ լեզվաընտանիքներ, որոնց մասին կարելի է կարդալ լեզվաբանական գրքերում:

Իսկ ինչպես են ծնվում լեզուները: Ոմանք կարծում են, թե նոր լեզու առաջանում է երկու կամ մի քանի տարբեր լեզուների խառնվելուց: Սա սխալ պատկերացում է: Ճիշտ հակառակը, նոր լեզուներ ծագել ու ծագում են որևէ լեզվի տրոհվելուց, բաժան-բաժան լինելուց:

Կարևոր է հիշել, որ ամեն լեզու ժամանակի ընթացքում փոփոխվում է, զարգանում, նաև տրոհվում, այսինքն՝ մասերի բաժանվում: Լեզուն հաճախ այնքան է փոփոխվում, որ նույն ժողովուրդը իր լեզուն, որը խոսել է 1000—1500 տարի առաջ, դժվարությամբ է հասկանում կամ չի հասկանում: Օրինակ, 5-րդ դարում խոսված հայերենը այսօր հայերը դժվարությամբ են հասկանում և կոչում են գրաբար (գրքի լեզու): Իսկ 5-րդ դարի հայերն էլ դժվարությամբ էին հասկանում իրենցից 1500 կամ 2000 տարի առաջ խոսված հայերենը: Այդպես, ժամանակի ընթացքում փոփոխվում է լեզուն:

Լեզուն նաև տրոհվում, բաժան-բաժան է լինում, և այդ կերպ առաջանում են բարբառներ: Նոր լեզուներն էլ են այդպես առաջանում: Երկու, երեք բարբառներ իրարից շատ հեռանալով, դառնում են առանձին լեզուներ:

Հիշենք, թե ինչպես է բազմանում միաբջիջ ամեոբան՝ տրոհվելով, մասերի բաժանվելով: Մայր ամեոբան բաժանվում է մասերի, և առաջանում են նոր ամեոբաներ: Այսպես էլ լեզուներն են բազմանում: Ժամանակի ընթացքում մայր լեզուն բաժանվում է մասերի, և առաջանում են նոր լեզուներ, որոնք իրար նկատմամբ քույրեր են:

Մի մորից ծնված լեզուներն իրարից տարբերվում են, բայց և շատ կողմերով իրար նման են լինում, քանի որ իրենց բառերի ու քերականության գլխավոր մասը ժառանգել են միևնույն մորից: Այդպես, հնդեվրոպական ընտանիքի լեզուներն իրարից տարբեր են, բայց նրանց մեջ կան և շատ նմանություններ: Հայերեն ունենք **սիրտ** բառը, որը հայոց լեզուն ժառանգել է մայր հնդեվրոպական լեզվից: Այդ նույն բառը միևնույն իմաստով, բայց քիչ ձևափոխված ժառանգել են նաև հնդեվրոպական մյուս քույր լեզուները. լատվիերեն **սիրդս,** լիտվերեն՝ **շիրդ(իս),** ռուսերեն՝ **սերդ(ցե),** հին պարսկերեն՝ **զըրդ,** գերմաներեն՝ **հերց** և այլն: Կամ՝ հայերեն **կով** բառը, որը նույնպես մայր լեզվից է գալիս և մյուս քույր լեզուներում որոշ չափով փոփոխված ձևեր է ստացել. հին հնդկերեն՝ **գաուս,** լիտվերեն **գուվս,** գերմաներեն **կուհ,** ռուսերեն **կոռով(ա)** և այլն:

Այսպիսով, ինչպես հնդեվրոպական ընտանիքի մյուս լեզուները, հայերենը ևս ծագել է հնդեվրոպական մայր լեզվից: Եթե մենք իմանանք, թե որտեղ է խոսվել մայր հնդեվրոպական լեզուն և երբ է նրանից առանձնացել հայերենը, կիմանանք, թե որտեղ և երբ են առաջացել հայոց լեզուն ու նրանով խոսողները՝ հայերը:

Հայոց լեզվի, ուստի և հայերի ծագման համար, պարզ է, որ կարևոր է հնդեվրոպական լեզվաընտանիքի խնդիրը, քանի որ, ինչպես ասվեց, հայոց լեզուն հնդեվրոպական լեզվաընտանիքի անդամներից է:

Այս լեզվաընտանիքը կոչվում է հնդեվրոպական այն պատճառով, որ ձգվում է Հնդկաստանի արևելյան եզրից մինչև Եվրոպայի արևմտյան եզրն ընկած տարածքում: Նախքան թուրքերի գալը, այսինքն 10-րդ դարը, հնդեվրոպական լեզուների ու նրանցով խոսող ժողովուրդների շարքը Հնդկաստանից սկսած չէր ընդհատվում:

Եվ այդպես, քանի որ հայոց լեզուն հնդեվրոպական է, և հայերը՝ հնդեվրոպացի, հայերի պատմությունը պետք է սկսել հնդեվրոպական մայր լեզվի տրոհման ժամանակներից:

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ամեն մի լեզվաընտանիքի ծնողը՝ մայր լեզուն ունեցել է իր հնագույն մայր հայրենիքը: Դա այն վայրն է, որտեղ որ խոսվել է տվյալ լեզվաընտանիքի մայր լեզուն: Լեզվաբանության մեջ, ինչպես վերն ասվեց, մայր լեզուն կոչվում է նախալեզու: Մայր հայրենիքն էլ լեզվաբանության մեջ կոչվում է նախահայրենիք: Բայց մենք կգործածենք **մայր լեզու** և **մայր հայրենիք** կամ **հնագույն հայրենիք** անվանումները, որոնք ավելի լավ են ներկայացնում հարցերի էությունը:

Համեմատական լեզվաբանությունը մանրամասն ուսումնասիրություններով որոշում է մայր լեզուների հնագույն հայրենիքի տեղը: Այդպես՝ որոշվել է սեմական մայր լեզվի հնագույն հայրենիքը, որը գտնվել է Միջագետքից ու Սիրիայից սկսած մինչև Աֆրիկայի հյուսիսն ընկած տարածքում, ներառյալ Արաբական թերակղզու մի մասը: Թուրքական մայր լեզվի հնագույն հայրենիքը գտնվել է Արևելյան Սիբիրում, Մանջուրիայից հյուսիս ընկած տարածքում և այլն: Դժվարություն առաջացրեց հնդեվրոպական մայր լեզվի հայրենիքը գտնելու հարցը. լեզվաբանները տարբեր տեղեր էին նշում: Նորագույն լեզվաբանությունը մաթեմատիկական ճշտությամբ որոշեց նաև այդ մայր հայրենիքի տեղը՝ այն գտնվել է կենտրոնական Փոքր Ասիայից մինչև Պարսից սարահարթ ընկած տարածքում: Որոշ լեզվաբաններ, օրինակ, Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը հնդեվրոպական մայր հայրենիքի ավելի փոքր տարածք են նշում, որի կենտրոնը, ըստ այդ գիտնականների, եղել է Հայկական լեռնաշխարհում[1]: Ուրիշները ցույց են տալիս, որ հնդեվրոպական մայր լեզվի հնագույն հայրենիքն ավելի մեծ է եղել և ընդգրկել է Փոքր Ասիայի արևելյան շրջաններն ու հասել մինչև այժմյան Աֆղանստանի սահմանները, գուցե՝ մինչև Հնդկաստան:

---

[1] Հնդեվրոպական մայր լեզվի, նրա հնագույն հայրենիքի մասին գրված գրքերից ամենամանրամասնն ու ամենածավալունը Թամազ Գամկրելիձեի և Վյաչեսլավ Իվանովի «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիներ» գիրքն է (ռուսերեն) Թիֆլիս, 1984, 1328 էջ:

Բայց բոլոր դեպքերում հնդեվրոպական մայր հայրենիքը Փոքր Ասիայի կենտրոնական շրջանից ավելի արևմուտք չի տարածվել, մեծ մասամբ համընկել է Հայկական լեռնաշխարհի հետ:

Ինչպես որոշվեց այս մայր հայրենիքի տեղը: Դրա համար նկատի առնվեցին մի շարք փաստեր: Օրինակ, հնդեվրոպական մայր լեզվի բառապաշարում լեռներ, գետեր, բույսեր, կենդանիներ նշանակող բառերը ճիշտ և ճիշտ բնութագրում են Փոքր Ասիայի արևելյան մասի լեռներն ու գետերը, բուսականությունն ու կենդանական աշխարհը: Ապա. հնդեվրոպական մայր լեզվի մեջ եղած այն բառերը, որոնք նշանակում են հասարակական կարգ, պետություն, մեր առաջ կենդանացնում են այնպիսի կարգեր և պետական-կառուցվածք, ինչպիսիք եղել են միայն Հարավ-արևմտյան Ասիայում՝ մասնավորապես Շումերում, Բաբելոնում, Ասորեստանում, Հայքում.

Շատ կարևոր էր այն, որ հնդեվրոպական մայր լեզվի բառապաշարում հայտնաբերվեցին բառեր, որոնք այս լեզվին անցել են շումերերենից, սեմական մայր լեզվից, հարավ-կովկասյան մայր լեզվից, և հնդեվրոպական մայր լեզվից էլ այս երեք լեզուներին են բառեր անցել: Հայտնի է, որ շումերերենը խոսվել է Միջագետքում, իսկ մայր սեմական լեզուն Արևելյան Փոքր Ասիայից հարավ ու հարավ-արևելք, հարավ-կովկասյան լեզուն խոսվել է Կովկասյան լեռների հարավում, Քուռ գետից հյուսիս: Լեզուները միմյանցից բառեր են վերցնում, երբ երկար ժամանակ հարևան են լինում: Ուրեմն, հնդեվրոպական մայր լեզուն պետք է խոսված լինի Միջագետքից հյուսիս, Կովկասյան լեռներից ու Քուռ գետից հարավ: Դա հենց Արևելյան Փոքր Ասիան է: Հիշենք շումերերենից և մայր սեմական լեզվից անցած բառերից մի քանիսը. շումերերեն կա **ագար** բառը, որ նշանակում է վարելահող, մարգագետին, նույն իմաստով այդ բառն անցել է հնդեվրոպական մայր լեզվին ու այնտեղ ստացել **ագրո** ձևը, որ հետո ժառանգություն է մնացել դուստր լեզուներին, օրինակ՝ հունարենում **ագրոս,** լատիներենում **ագեր,** գերմաներենում **ակկեր,** հայերենում **արտ** ձևերով և այլն: Շումերերենից է հնդեվրոպական մայր լեզվին անցել նաև **տուռ** բառը, որ նշանակել է դուրս, բակ: Մայր լեզվում այն ստացել է **դուեր** ձևը դուրս և դուռ իմաստներով և ժառանգություն է մնացել դուստր լեզուներին՝ հին հնդկերեն **դվարաս,** գերմաներեն **տյուռ,** հայերեն **դուռ, դուրս,** լիտվերեն **դուռուս,** ռուսերեն **դվեր, դվոռ** և այլն:

Մայր սեմական լեզվից հնդեվրոպական մայր լեզվին անցած բազմաթիվ բառերից են 7 թվանշանի անունը. մայր սեմականում **սաբ** կամ **սաբատ,** որ հնդեվրոպական մայր լեզվում ստացել է **սեպտըմ** ձևը և պահպանել իմաստը, ու ժառանգություն է մնացել դուստր լեզուներին. օրինակ՝ հին հնդկերենին՝ **սապտա,** լատիներենին՝ **սեպտեմ,** գերմաներենին՝ **զիբըն,** հունարենին՝ **էպտա,** հին հայերենին՝ **էվթն** ձևերով: Կամ մայր սեմականից **վայնու** բառը խաղող, գինի նշանակությամբ անցել է մայր հնդեվրոպականին և այստեղ ստացել **վոինո** ձևը ու ժառանգություն մնացել դուստր լեզուներին՝ խեթերենին **վիյանա,** լատիներենին **վինում,** միքենյան հունարենին **վոնո,** հայերենին **գինի** ձևերով և այլն: Եվ կամ՝ մայր սեմականից **աստար** բառը, որ նշանակել է աստվածային աստղ, անցել է մայր հնդեվրոպական լեզվին, այստեղ ստացել **աստեր** ձևը՝ աստղ իմաստով և անցել դուստր լեզուներին, օրինակ՝ հին հնդկերենին **ինստր,** խեթերենին **աշտիրա,** հին հունարենին **աստեր,** հայերենին **աստղ, աստեղ** ձևերով և այլն[1]

Եվ այսպես. հնդեվրոպական մայր ժողովրդի բնակավայրը եղել է մի տարածքում, որն սկսվում է Կենտրոնական Փոքր Ասիայից,- իր մեջ է առնում Հայկական ամբողջ լեռնաշխարհը, հասնում մինչև Պարսից սարահարթ և գուցե նրանից էլ արևելք: Հնագույն ժամանակներում այդ տարածքում է հնչել մայր հնդեվրոպերենը: Հնդեվրո-

---

[1] Սեմական մայր լեզվից հնդեվրոպական մայր լեզվին անցած բառերի մի ցուցակ տրված է Վլադիսլավ Իլիչ-Սվիտիչի «Հնդեվրոպական սեմական լեզվական հնագույն շփումները» աշխատության մեջ (տեսնել «Հնդեվրոպական լեզվաբանության հիմնահարցերը» գրքում, Մոսկվա, 1964 (ռուսերեն): Շումերերենի, մայր սեմերենի և հարավ-կովկասյան լեզուների հետ հնդեվրոպական մայր լեզվի շփումների մասին գրված է նաև Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի վերոհիշյալ գրքում (էջ 870 — 883):

մեռական քանդակ

պական մայր ժողովուրդն իր այդ հին հայրենիքում էլ տրոհվել է՝ բաժան-բաժան եղել: Առաջացել են մայր լեզվից ծագած քույր լեզուներով խոսող մի շարք ցեղեր

Լեզվաբանները մոտավորապես հաշվել են նաև, թե երբ է կատարվել հնդեվրոպական մայր լեզվի տրոհումը: Այն կատարվել է մ.թ.ա. 5-րդ հազարամյակի կեսերից մինչև մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերը: Ահա այդ ժամանակներում էլ մայր լեզվից անջատվել են հնդեվրոպական հնագույն լեզուները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հնդեվրոպական մայր լեզվի տրոհումից նախապես գոյացած խոշոր բարբառներից մեկը եղել է հարավայինը, որն իր հերթին տրոհվելով՝ գոյացել են արևելքից հնդկաիրանյանը, կենտրոնում հայկականը, արևմուտքում հունականը[1]:

Այս տեսակետը հաստատվում է շատ փաստերով. կարևոր է նաև այն, որ հայոց լեզուն հնդեվրոպական քույր լեզուներից ամենից մոտ է իրանյանին և հունարենին:

Հիշյալ երեք լեզուների դասավորության կենտրոնը Հայկական լեռնաշխարհն է, որի ինչ-որ մասերում էլ նախապես տարածված են եղել հնագույն հայոց լեզուն ու այն կրող հայկական ցեղերը: Հնդկաիրանյան ամբողջու-

[1] Այս մասին մանրամասն ուսումնասիրություն ունի լեզվաբան Օլեգ Շիրոկովը (տեսնել «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, № 5)

թյունը հետո տրոհվեց հնդկականի և իրանյանի. այն նախապես տարածված էր Հայկական լեռնաշխարհից դեպի հարավ-արևելք, մինչև Հնդկական թերակղզին, ապա նաև դեպի հարավ (Միջագետքի հյուսիսում), այն տարածվեց նաև Կովկասյան լեռներից դեպի հյուսիս՝ Սև ծովից հյուսիս ընկած տարածքում: Հունականը Փոքր Ասիայի հարավային և արևմտյան մասերում էր տարածված: Ապա հունական ցեղերի մի մասը փոխադրվեց Բալկանյան թերակղզի և Էգեյան ծովի կղզիները:

Մայր լեզվի տրոհումից առաջացած հնդեվրոպական մի շարք այլ լեզուներ ու նրանցով խոսող ցեղեր, նոր բնակավայրեր և արոտավայրեր փնտրելով, աստիճանաբար սկսել են հեռանալ, իջնել մայր հայրենիքի լեռնային շրջաններից ու շարժվել դեպի արևելք, ապա դեպի հյուսիս, դեպի արևմուտք: Դրանցից են եղել գերմանակելտական, սլավոնական, իլիրիական և այլ խմբեր: Դրանց մեծ մասը հեռացել է Փոքր Ասիայից և սրան արևելքից կից տարածքներից: Իսկ հնդեվրոպական ցեղերի մի մասն էլ մնացել է մայր հայրենիքում կամ նրա շրջակայքում՝ փոքր տեղաշարժեր անելով: Դրանցից էին խեթերը, լուվիացիները, հուները, հայերը, փռյուգիացիները, հնդկաիրանյանները, թոխարները և այլն:

Այսպես. հայոց լեզուն և հայերը ծագել են մ.թ.ա. 4-րդ հազարամյակում, հավանաբար, այդ հազարամյակի կեսերին կամ երկրորդ կեսին, Հայկական լեռնաշխարհում:

Դա մեզնից ավելի քան 5000 տարի առաջ էր, և այդ ժամանակներից էլ սկսվում է հայոց ինքնուրույն պատմությունը:

ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ԲԱՌԵՐԸ

Հայոց լեզուն հայ ժողովրդի պատմության մշտական վկան է: Ստորև կտեսնենք, որ հայոց լեզուն է վկայում Հայկական լեռնաշխարհում վաղնջագույն ժամանակներից հայերի տարածված լինելու, ինչպես և նրանց հին ու նոր հարևանների մասին:

Երբ հայկական ցեղերը, լիովին անջատվելով հնդեվրոպական մայր ժողովրդից, ինքնուրույն կյանք էին վարում, նրանք հարաբերության մեջ մտան հարևան այլալեզու ցեղերի ու ժողովուրդների հետ, և լեզվական փոխազդեցություններ տեղի ունեցան: Լեզվական այդ փոխազդեցությունների շերտերը պահպանվել են հայերենում: Բայց, իհարկե, հայոց լեզվի առանցքը, հիմնական բառապաշարը և քերականությունը մայր լեզվից ժառանգվածն է: Դարերի ընթացքում հայոց լեզուն շատ փոփոխվեց, ձևափոխվեցին նաև մայր լեզվից ժառանգված բառերը, բայց որքան էլ փոփոխվեցին նրանք, միևնույն է, այսօր էլ իմացվում է, որ հնդեվրոպական են, մայր լեզվից եկող: Այդ բառերը կոչվում են բնիկ հայկական: Հիշենք դրանցից մի քանիսը՝ **հայր, մայր, եղբայր, քույր, որդի, դուստր, թոռ, աչք, ձեռք, ականջ, ոտք, լեզու, քար, ջուր, լույս** և այլն[1]:

Այլ լեզուներից հայերենին անցած բառերը կոչվում են փոխառություններ:

Այդպիսով, հայոց լեզվի մեջ հնդեվրոպական կամ բնիկ բառերը ամենահինն են, ավելի քան 5000 տարեկան: Այդ բառերի մեջ շատ են նաև բույսեր, կենդանիներ, գյուղատնտեսական աշխատանք ու կենցաղ նշանակող բառեր. դրանք բոլորն, առանց բացառության, սերտորեն առնչված են Հայկական լեռնաշխարհի հետ: Օրինակ, հայերենում կան բույսերի և պտուղների բնիկ հայկական այսպիսի անուններ՝ **ծառ, բույս, խոտ, գարի, ծաղիկ, թելուկ, բարդի, եղևնի, բողկ, դեղձ, ծիրան, ընկույզ, մոշ, սունկ** և այլն: Կենդանիների ու թռչունների անուններ՝ **այծ, եզ, գառ, էշ, աքաղաղ, հավ, մաքի, աղվես, արծիվ, արջ, բորենի, ինձ, լուսան, ոզնի, ծիծեռնակ, կռունկ, ուրուր, ցին,**

---

[1] Բնիկ հայերեն (հնդեվրոպական) բառերի վերաբերյալ տեղեկանքներ կարելի է ստանալ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» աշխատության մեջ (հ. 1 — 4, Երևան, 1971 — 1979):



Հայկական ցեղերի տարածումը (մոտավոր) մ. թ. ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսում

իժ, օձ և այլն,—բոլորը Հայկական լեռնաշխարհին (Մեծ Հայքին) են վերաբերում: Բնիկ հայկական են նաև գյուղատնտեսություն ու կենցաղ նշանակող այնպիսի բառեր, ինչպես՝ **մածուն, թան, չիր, ածու, գինի, արոտ, արոր, արտ, երկան, աղորիք, գոմ, թակ** և այլն, դարձյալ բոլորն առնչված Մեծ Հայքի հնագույն կյանքի հետ:

Հայոց լեզվի ամենահին բառերի մի մասն էլ, ինչպես ասվեց, փոխառություններ են հայերի հնագույն հարևանների լեզուներից: Այդ հարևանները վաղուց չկան, նրանց լեզուները հազարամյակներ է, ինչ չեն խոսվում, բայց այդ լեզուների մի շարք բառեր պահպանվել են հայերենի մեջ:

Աշխարհի ամենահին ժողովուրդներից են եղել շումերները, որոնք հարուստ մշակույթ ստեղծեցին, նրանք են ստեղծել նաև ամենահին գրերը, այդ թվում սեպագրերը:

Շատ հնում շումերները բնակվում էին ամբողջ Միջագետքում, Մեծ Հայքից հարավ, հետո նրանք կամաց-կամաց քաշվեցին դեպի ավելի հարավ: Եվ ապա՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջում, մեզնից շուրջ 4000 տարի առաջ շումերները վերացան, ձուլվեցին այլ ժողովուրդների մեջ: Եվ այդ ժամանակներից նրանց լեզուն այլևս չի խոսվել: Չխոսվող լեզուն կոչվում է մեռած

Մեռած լեզուների մասին գիտնականներն իմանում են հին արձանագրություններից: Շումերերեն շատ արձանագրություններ կան: Երբ այդ արձանագրությունները կարդում ենք, իմանում ենք, որ այդ լեզվից հայերենի մեջ բառեր են մտել: Վերն արդեն ասվեց, որ շումերերենից բառեր են անցել հնդեվրոպական մայր լեզվի մեջ: Բայց երբ հնդեվրոպական մայր լեզուն տրոհվեց, շումերերենը դեռ մնում էր: Եվ ահա մայր լեզվից անջատված հայերենն արդեն ինքնուրույն շփվել է շումերերենի հետ և բառեր վերցրել նրանից: Դրանցից են, օրինակ՝ **արագիլ, ագարակ, պատ, ուշ, փակ, մութ** բառերը և ուրիշներ

Ե՞րբ էին կարող այդ բառերը շումերերենից անցնել հայերենին: Պարզ է՝ այն ժամանակ, երբ շումերներ կային և երբ նրանց լեզուն խոսվում էր Միջագետքում: Այսինքն՝ մինչև մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջը: Սա էլ նշանակում է, որ մինչև այդ ժամանակը հայերը և շումերները շփվել են միմյանց հետ: Ուրեմն, հայերենում եղած շումերական բառերը այսօր մեզ պատմում են, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, գուցե նաև ավելի առաջ (շուրջ 4—5 հազար տարի մեզնից առաջ), հայերի ու շումերների միջև տարբեր բնույթի հարաբերություններ են եղել՝ առևտրական, մշակութային և այլն:

Հայերենում կան նաև աքքադական (ասուրաբաբելական) բառեր: Աքքադացիները նույնպես բնակվում էին Մեծ Հայքի հարավում՝ Միջագետքում: Նրանք Միջագետքի երեք հզոր պետությունների՝ Աքքադի, Ասորեստանի և հին Բաբելոնի ժողովուրդն էին: Նրանց լեզուն երկու գլխավոր բարբառ ուներ՝ ասուրերեն և բաբելերեն: Այդ պատճառով այս հին լեզուն երբեմն կոչվում է ասուրաբաբելերեն, բայց նորագույն գիտության մեջ այն ընդունված է կոչել աքքադերեն: Աքքադացիները սեմական ժողովուրդ էին, նրանք Միջագետքում սկզբում շատ չէին, ապա գնալով ավելի ու ավելի շատացան և շումերներին նախ քշեցին հարավ, ապա ձուլեցին իրենց մեջ: Աքքադերեն լեզուն խոսվել է մինչև մ.թ.ա. 7 — 6-րդ դարերը, այսինքն մինչև այդ ժամանակը կային աքքադացիներ: Հետո նրանք էլ վերացան և նրանց լեզուն էլ մահացավ:

Աքքադերեն լեզվի մասին էլ այսօր գիտնականները գաղափար են կազմում հին սեպագիր արձանագրություններից: Ըստ այդ արձանագրությունների գիտնականները կազմել են աքքադերենի բառարաններ: Եվ ահա դրանց օգնությամբ մենք իմանում ենք, որ հայոց լեզվի մեջ կան աքքադերեն շատ բառեր: Դրանցից են՝ **շոր, կնիք, կշիռ, կաշառք, կմախք, խոր, քուրմ, կիր, թոնիր** և այլն

Այս բառերն էլ վկայում են, որ երեք, չորս հազար տարի առաջ հայերն ու աքքադացիները իրար հետ շփվել են, առևտուր արել, այցելել միմյանց երկրներ. ըստ երևույթին, հայերը կարողացել են նրանց լեզվով խոսել, նրանք՝ հայերի: Աքքադերենի մեջ էլ հայերեն բառեր են անցել: Բայց ավելի շատ աքքադերենից են հայերենին բառեր անցել: Դրա պատճառն այն է, որ այն հին ժամանակներում Միջագետքը մշակութային գլխավոր կենտրոն էր, և շրջակա բոլոր երկրները օգտվում էին նրա բարձր մշակույթից: Հայերը բացի շումերական և աքքադական բառերից, ինչպես դեռ կտեսնենք, վերցրել են և օգտագործել նաև Միջագետքի սեպագիրը, կրել են Միջագետքի մշակութային այլ ազդեցություններ:

Լեզվական քննությունները՝ հայոց լեզվի բնիկ, հնդեվրոպական բառապաշարը և հնագույն փոխառությունները, ինչպես և այլ փաստեր ցույց են տալիս, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին Մեծ Հայքի հիմնական տարածքը հայալեզու էր, բնակեցված էր հայկական ցեղերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհը, որ, իրոք, լեռնային մի հսկա կղզի է և շրջակա երկրների համեմատ բարձր դիրք է գրավում, իր հողերի տակ մշակութային բազմաթիվ շերտեր է թաքցնում, տարբեր հազարամյակներից պահպանված հնավայրեր:

Հնագետները Հայկական լեռնաշխարհում բազմաթիվ որոնումներ են կատարել և հողի տակից գտել են քաղաքներ, գյուղեր, տաճարներ, գործիքներ, արվեստի առարկաներ:

Հնագիտությունը (արխեոլոգիան) զբաղվում է մարդկանց պատմությանը վերաբերող նյութերի հայտնաբերմամբ, իսկ հին կենդանիների ուսումնասիրությամբ զբաղվում է հնէաբանությունը (պալեոնտոլոգիան):

Հնագետները գետնի տակից հանել են 3 միլիոն տարի առաջ ապրած մարդկանց ոսկորներ: Այդ հեռավոր ժամանակներից էլ սկսվել է մարդկության պատմությունը: Մարդու գլխավոր հատկանիշներից մեկն էլ աշխատանքի գործիքներ պատրաստելն է: Ամենահին մարդիկ քարե գործիքներ էին պատրաստում, հետո սկսեցին պղինձը գործածել, ավելի ուշ՝ բրոնզը, երկաթը: Դրա համաձայն էլ հնագետները մարդկության պատմության հնագույն և հին ժամանակաշրջանները մասերի են բաժանում: Ահա այդ մասերը.

1) Հին քարի դար (կամ՝ պալեոլիթ, որ հունարեն նշանակում է հին քար): Այս ժամանակաշրջանն սկսվել է մեզնից 2 — 3 միլիոն տարի առաջ, մարդկության պատմության սկզբից և տևել է մինչև մ.թ.ա. մոտ 12 — 11-րդ հազարամյակները: Այդ ժամանակ մարդիկ քարերը կոպիտ ձևով սրում էին և օգտագործում որպես գործիք ու զենք, զբաղվում էին որսորդությամբ, ինչպես և պտուղներ էին հավաքում: Քոչվոր էին, բնակվում էին քարայրներում ու կիրճերում:

2) Միջին քարի դար (կամ մեզոլիթ, հունարեն նշանակում է միջին քար). սկսվում է մ.թ.ա. մոտ 11-րդ հազարամյակից և տևում մինչև մ.թ.ա. մոտ 9 — 8-րդ հազարամյակները: Այս ժամանակաշրջանում մարդիկ քարերը ավելի վարպետորեն էին տաշում ու սրում և պատրաստում քարե դանակ, կացին ու այլ գործիքներ: Ոսկորից ու եղջյուրներից էլ էին զանազան գործիքներ պատրաստում: Գործածում էին նետուաղեղ: Զբաղվում էին ոչ միայն որ-



Ոկղունքներ՝ գտնված Աշտարակի մոտակայքից
մ. թ. ա. 2-րդ հազարամյակ

Վիշապ (Գեղամա լեռներում)

սորդությամբ, ձկնորսությամբ, պտուղ հավաքելով, այլև պատրաստում էին քարե մանգաղներ ու հնձում վայրի ցորեն, գարի: Բնակվում էին ոչ միայն քարայրների մեջ, անտառների խորքերում, այլև՝ գետնափոր տներում

3) Նոր քարի դար (կամ նեոլիթ, հունարեն նշանակում է նոր քար). սկսվել է մ.թ.ա. մոտ 8-րդ հազարամյակից և տևել մինչև մ.թ.ա. 6-րդ հազարամյակը: Այս ժամանակաշրջանում քարից ու ոսկորից ավելի հղկված գործիքներ ու զենքեր էին պատրաստում, գործածում էին լաստեր, նավակներ, սայլեր: Սկսում են մշակել հողը, ցանել գարի, ցորեն, պահում են կենդանիներ՝ այծ, ոչխար, խոզ և այլն: Մարդիկ ավելի նստակյաց են դառնում, առաջ են գալիս մշտական բնակավայրեր: Սկսվում է խեցեգործությունը՝ կավից ամաններ էին պատրաստում: Կառուցում էին տներ: Բնական պղնձից, առանց հալելու, իրեր էին պատրաստում: Այս ժամանակաշրջանի վերջում նաև հալում էին պղինձը:

4) Պղնձի-քարի դար (էնեոլիթ). սկսվում է մ.թ.ա 5-րդ հազարամյակից և տևում մինչև մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջը: Այս ժամանակաշրջանում մարդիկ պղնձից բազմատեսակ գործիքներ և զենքեր էին պատրաստում և դրանց զարդ գործածում էին նաև ոսկի, արծաթ: Երևան են գալիս քաղաքներ, ավելի է զարգանում խեցեգործությունը: Որոշ տեղերում բարձր զարգացման են հասնում ճարտարապետությունը, նկարչությունը, քանդակագործությունը,

Մեծ Հայք

ոսկերչությունը: Իսկ ամենակարևորն այն է, որ մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերում երևան են գալիս գրի ամենահասարակ տեսակները

5) Բրոնզի դար. սկսվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբից և տևում մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբը: Պղնձի և անագի համաձուլումից ստանում էին բրոնզ, որը գործիքներ ու զենքեր պատրաստելու համար շատ ավելի ամուր էր, քան պղինձը: Մարդիկ սկսում են գրել: Որոշ երկրներում բարձր զարգացման է հասնում մշակույթը: Առանձին վայրերում սկսում են նաև երկաթ ձուլել և երկաթե գործիքներ պատրաստել:

6) Երկաթի դար: Այս անունով կոչվում է մի ժամանակաշրջան, որ սկիզբ է առնում մ.թ.ա. մոտ 10-րդ դարից և տևում մի քանի հարյուրամյակ: Այս ժամանակաշրջանում ավելի առատ է գործածվում երկաթը գործիքներ, զենքեր պատրաստելու համար:

Աշխարհի բոլոր երկրների համար այս բաժանումները նույնը չեն: Օրինակ, մի տեղ բրոնզի դարը կարող է ավելի ուշ սկսված լինել, մի այլ տեղ՝ ավելի շուտ և այլն:

Հայկական խեցեղեն. մ. թ. ա. 2-րդ հազարամյակ

Ժայռապատկերներ Հայաստանի լեռներում. մ. թ. ա. 3-րդ հազարամյակ

Հայկական լեռնաշխարհի տարածքում մարդկության զարգացման այս բոլոր շրջաններն էլ ներկայացված են:

Հայկական լեռնաշխարհի շատ վայրերում գտնված են հին քարի դարից մնացած գործիքներ. դրանք մեծ մասամբ օբսիդիան (սատանի եղունգ) կոչվող քարից պատրաստված գործիքներ են: Մեծ Հայքի ամբողջ տարածքում, տարբեր տեղեր՝ Արտին լեռան շրջակայքում, Արզնու մոտ Հրազդանի աջ ափին, Հատիս լեռան մոտ, Սասունում, Խարբերդում (Ծոփք), Երևանի ու Լուսակերտի քարայրներում, Շանիդար քարայրում (Մեծ Հայքի հարավում), Ուրմիա լճի մոտ և այլ վայրերում հայտնաբերվել են հին քարի դարի մարդկանց կայաններ և քարե շատ գործիքներ:

Միջին և նոր քարի դարի մարդկանց կայաններ ու գործիքներ են հայտնաբերվել Թալինի շրջանում (Բառոժ, Ջաղաներ). Արարատյան դաշտում և շատ այլ վայրերում:

Այս ժամանակներից է, որ մարդիկ սկսում են ժայռերի վրա նկարել զանազան պատկերներ: Ժայռապատկերներ կան Մեծ Հայքի շատ լեռներում՝ Գեղամա, Սյունիքի, Նախիջևանի, Դարանաղյաց և այլն:

Հայկական լեռնաշխարհի հարավում, Դիարբեքիր քաղաքի մոտ, վերջերս գտնվեց նոր քարի դարից պահպանված մի բնակավայր (մ.թ.ա. 8-րդ հազարամյակ), որտեղ բնական (հում) պղնձից պատրաստել են գործիքներ: Դա մարդու կողմից մետաղի մշակման առաջին օրինակն է: Այս ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում բնակվում էին հնդեվրոպական մայր ժողովրդի ցեղերը՝ հայերի նախնիները:

Ուլունքներ և դաշույն՝ դաղված Աշտարակի մոտակայքում. մ. թ. ա. 2-րդ հազարամյակ

Պղնձի-քարի դարի բնակավայրեր են գտնվել Էջմիածնի, Խաթունարխի, Կարինի, Կանի, Նախիջևանի մոտակայքներում և Հայաստանի շատ այլ վայրերում: Այս ժամանակաշրջանում է (մ.թ.ա. 5 – 4-րդ հազարամյակ), որ Փոքր Ասիայի արևելքում ու Հայկական լեռնաշխարհի տարածքում ինդեվրոպական մայր ժողովուրդը մասերի էր բաժանվում, և առանձնացած հայկական ցեղերը շարունակում էին իրենց ինքնուրույն գոյությունը. սկսվում էր բուն հայոց պատմությունը:

Ուշագրավ է Երևանի Շենգավիթ թաղամասում հայտնաբերված բրոնզեդարյան բնակավայրը: Բրոնզեդարյան ժամանակաշրջանից Հայկական լեռնաշխարհում գտնվել են նաև այլ քաղաքներ, բերդեր, կավե բազմատեսակ ամաններ, մետաղե գործիքներ, մետաղաձուլական սարքեր, արվեստի շատ առարկաներ:

Հայոց պատմության բրոնզի դարը այն ժամանակաշրջանն է, երբ հայկական առանձին ցեղերից կազմվում էին ցեղային խոշոր միավորումներ, որոնք պետության նախատեսակն էին: Բրոնզի դարի երկրորդ շրջանում և Երկաթի դարի ամբողջ ժամանակաշրջանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից սկսած, կազմվում են հայկական պետական հզոր միավորումներ: Այս ժամանակաշրջանում Մեծ Հայքում արդեն երկաթ էին ձուլում:

Հայաստանի հնագիտությունը ցույց է տալիս, որ մարդկության պատմության բոլոր ժամանակաշրջաններում Մեծ Հայքի ամբողջ տարածքում մարդիկ են բնակվել, որ Հայաստանը խեցեգործության հայտնաբերման, մետաղաձուլության, կենդանիների ընտելացման, բույսերի մշակման. արհեստական ոռոգման տեսակետից աշխարհի առաջին երկրներից է եղել՝

Հայկական լեռնաշխարհում հնագույն դարերից մինչև նոր ժամանակները զարգացել է միևնույն սշակույթը, որն ունեցել է զարգացման տարբեր փուլեր:

Մեծ Հայքի տարածքում հնագետները գտել են նաև մ.թ.ա. 5-րդ հազարամյակից սկսած տարբեր ժամանակների վերաբերող մարդկային ոսկորներ ու գանգեր, որոնց մի մասը պատկանում է մարդաբանական արմենոիդ (հայկական) տեսակին:

Հայաստանում՝ Գեղամա լեռներում, Արագածի լանջերին, Ձորոխ գետի մոտակայքում և այլն գտնվել են քարե հսկա արձաններ ձկան կերպարանքով, որոնց ժողովուրդը հին ժամանակներից անվանում է **վիշապ:** Դրանք քանդակվել են հավանաբար սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից և ջրի պաշտամունքի հետ են եղել առնչված, որովհետև մեծ մասամբ դրվել են աղբյուրների, ջրանցքների մոտ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԱՄԵՆԱՀԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Երբ մարդիկ հնարեցին գիրը, նախ սկսեցին գրել հղկված քարերի կամ կավե սալիկների վրա: Հին թագավորները հրամայում էին գրագետ ծառաներին փորագրել իրենց արշավանքների, վարած պատերազմների կամ կառուցած շենքերի ու ջրանցքների մասին: Պահպանվել են այդպիսի շատ արձանագրություններ, որոնցում բազմաթիվ երկրների ու ժողովուրդների անուններ կան:

Արդ. Երբ են հնադարյան արձանագրությունների մեջ առաջին անգամ հիշատակվել Հայաստանը և հայը:

Եթե ուզում ենք հին դարերում գրված արձանագրությունների մեջ որևէ երկրի ու ժողովրդի մասին տեղեկություն իմանալ, պետք է նախ իմանանք, թե ինչ անուններով են նրանք կոչվել: Մի ժողովուրդ հնում էլ, հիմա էլ հաճախ մի քանի անուն է ունեցել կամ ունի: Օրինակ, գերմանացիներն իրենք իրենց անվանում են դոյչ, իսկ ֆրանսերեն նրանք կոչվում են ալեման, ռուսերեն և ուկրաիներեն՝ նեմեց: Կամ՝ վրացիներն իրենց անվանում են քարթվելի, իսկ ռուսերեն նրանք կոչվում են գրուզին, գերմաներեն՝ գեորգիեր, հայերն էլ հին ժամանակներից սկսած իրենց այդ հարևաններին կոչել են վրացի: Նույնն էլ երկրներն են. մենք ասում ենք Գերմանիա, իրենք գերմանացիներն իրենց երկիրը կոչում են Դոյչլանդ, ֆրանսիացիները՝ Ալեմանյը, ուկրաինացիները՝ Նեմեչինա: Կամ հայերն ասում են Վրաստան, Վիրք, իրենք վրացիներն իրենց երկիրն անվանում են Քարթլի կամ Սաքարթվելո, ռուսները՝ Գրուզիա, գերմանացիները՝ Գեորգիեն և այլն:

Հայաստանն ու հայերն էլ հնուց ի վեր տարբեր անուններով են կոչվել: Հայերն իրենք իրենց **հայ** են անվանում, երկիրը՝ **Հայք** կամ **Հայաստան, հայ** անվանումը նույն իմաստով գործածել են նաև հայերի որոշ հարևաններ, իսկ վրացիները հայերին անվանել ու անվանում են **սոմեխի,** երկիրը՝ **Սոմխեթի,** ուրիշ շատ ժողովուրդներ հնում էլ, այժմ էլ հայերին ու Հայաստանը կոչել են **արմեն** անվան զանազան ձևերով. երկիրը՝ **Արմենիա, Արմանի, Արմինա, Արմանստան, Արմենիեն, Էրմանստան** և այլն, մարդկանց՝ **արման, արմինիյա, արմյանին, արմենիեր, էրմանի** և այլն:

Աքքադի թագավոր Նարամ-Սուենը (բրոնզ, Նինվեից)

Հայաստանը և հայերը ուրիշ անուններ էլ են ունեցել, որոնց մասին դեռ կխոսենք:

Տարբեր ժողովուրդների կողմից հայերին տրվող ամենատարածված **արմեն** (կամ **արման**) անունը առաջին անգամ հանդիպում է մեզնից ավելի քան 4000 տարի առաջ գրված սեպագիր արձանագրություններում: Միջագետքի Աքքադ պետության թագավոր Նարամ-Սուենը շատ արշավանքներ է կատարել դեպի հարևան երկրները: Նա մի քանի արձանագրություններ է փորագրել տվել: Նրանց մեջ հիշվում են այն երկրները, որոնց դեմ թագավորը պատերազմել է մ.թ.ա. մոտ 2270 — 2230 թվականներին: Այդ երկրներից մեկը կոչվում է Արմանի (Նաև՝ Արմանում)[1]:

Արձանագրություններից մեկում **Արմանի**-ն հիշվում է **Էբլա** անվան կողքին: Հին Էբլան գտնվել է այժմյան

---

[1] Նարամ-Սուենի արձանագրությունները մի քանի անգամ են հրապարակվել. տես, օրինակ, K. Riemschneider, Lehrbuch des Akkadischen, Leipzig, 1961:

Հալեպ քաղաքի մոտ, ուստի գիտնականների մի մասը կասկածների մեջ էր. նրանք ասում էին, որ իբր Արմանի անունով Նարամ-Սուեն թագավորը կարող է անվանած լինել ոչ թե Հայաստանը, այլ Միջերկրական ծովի մոտ, Կիլիկիայի հարավում գտնվող մի երկիր կամ քաղաք: Բայց Մեծ Հայքի հարավում գտնվել է Նարամ-Սուենի կանգնեցրած սյունը, այդ թագավորի արձանագրությամբ: Այդ սյունը Աքքադի թագավորը կանգնեցրել էր Արմանի կատարած արշավանքի առթիվ: Ուրեմն, **Արմանի** անունով Նարամ-Սուենը Հայաստանի հարավային մասն է կոչել: Ապա՝ Նարամ-Սուենի արձանագրություններից մեկում **Արմանի**-ն հիշվում է Խաթթի և Կանեշ անունների հետ միասին, իսկ Խաթթին Մեծ Հայքի հարևանն է եղել արևմուտքից, նրա մոտ էլ գտնվել է Կանեշը:

Որ **Արմանի**-ն Հայաստանն է, հաստատվում է նաև այլ կերպ՝ բառերի օգնությամբ: Այսպես. հայտնի է, որ ծիրանի հայրենիքը Հայաստանն է, և **ծիրան** բնիկ հայերեն բառ է: Ծիրանի ծառը Հայաստանից են տարել ուրիշ երկրներ, և մի շարք լեզուներով ծիրանը կոչվում է հայկական, օրինակ, հին հռոմեացիները իրենց լեզվով՝ լատիներեն, ծիրանն անվանում էին **արմենիակում,** այսինքն՝ հայկական: Մինչև այժմ էլ բուսաբանության մեջ ծիրանի լատիներեն գիտական անունն է՝ **պրունուս արմենիակա,** որ նշանակում է հայկական սալոր: Արաբերեն ծիրանի անուններից մեկն է **թուֆահ ալ արմանի,** որ նշանակում է հայկական խնձոր: Միջագետքի հին բնակիչներից էին արամեացիները (քաղդեացիները), նրանք էլ ծիրանը կոչել են **խազուրա արմենայա** (նույնպես՝ հայկական խնձոր):

Եվ ահա աքքադացիներն էլ ծիրանը կոչել են **արմանու**[1]: Պարզ է, որ սա նույնպես նշանակել է արմանական, այսինքն՝ հայկական: Ծիրանի աքքադական **արմանու** անունը գործածվել է մ.թ.ա. 3-րդ հազարամյակից: Ուրեմն այն ժամանակ աքքադացիների մեջ եղել է Հայաստանի **Արմանի** անունը և նրանց թագավոր Նարամ-Սուենը այդ անունով կոչել է իրենցից հյուսիս գտնվող Հայաստանը, այսինքն՝ ծիրանի՝ **արմանու**-ի երկիրը:

Ապա. աքքադերեն քարայծը (վայրի այծը) կոչվել է **արմատու** (գուցե ավելի հին ձևը՝ **արմանատու**): Սա նույնպես նշանակել է հայկական: Միջագետքում բարձր լեռներ չկան: Միջագետքի հյուսիսում սկսվում են բարձր լեռներ: Դա Հայկական լեռնաշխարհն է: Հայկական լեռներում միշտ եղել են և այժմ էլ կան քարայծեր: Գիտության մեջ մինչև հիմա էլ քարայծի մի տեսակը կոչվում է հայկական վայրի խոյ՝ **օվիս օֆիոն արմենիանա:** Հին Հայաստանում այծի պաշտամունք էլ է եղել: Այդ է պատճառը, որ Գեղամա ու Սյունիքի լեռներում և հին Հայաստանի այլ վայրերում շատ կան այծապատկերներ:

Հավանաբար, աքքադացիները քարայծերին մեծ մասամբ ծանոթ են եղել Հայաստանի լեռներից և դրա համար էլ անվանել են հայկական՝ արմատու: Եվ քարայծի աքքադական այդ անունը նույնպես կապված է երկրի **Արմանի** անվան հետ:

Եվ այսպես. այժմ հայտնի հնադարյան գրավոր աղբյուրներից Նարամ-Սուենի արձանագրությունները առաջինն են, որոնցում հիշվում է Հայաստանը՝ **Արմանի** անունով:

Նարամ-Սուենը հիշատակում է նաև Արմանի-Հայաստանի այն ժամանակվա թագավորին՝ Մադակինա անունով: Մադակինան Մեծ Հայքի հարավում պատերազմել է Նարամ-Սուենի աքքադական զորքերի դեմ: **Մադակինա** անունը բացատրվում է հայերեն. **մատ** (հնում՝ **մադ**) բնիկ հայկական արմատ է, որ նշանակել է շարժել, շարժուն (այժմ պահպանված է հայերեն **մատույց, մատուցել** և մի քանի այլ բառերում): **Կինա**-ն, հավանաբար, հայերեն **գին** արմատից է (արժեք):

Սեպագիր արձանագրություններից իմանում ենք, որ Հայաստանի դեմ պատերազմել է նաև Նարամ-Սուենի պապ Սարգոն թագավորը: Սարգոնը և նրա թոռ Նարամ-Սուենը Հայաստանում ուժեղ դիմադրության են հանդիպել: Արձանագրություններից պարզ է դառնում, որ նրանք իրենց հարձակումները Հայաստանի դեմ մի քանի անգամ կրկնել են: Իսկ դա կարող է նշանակել, որ նրանք պարտվել են և հետո նորից արշավել:

---

[1] Տես W. Soden, Akkadisches Handwörterbuch, Wiesbaden, 1965—67, Band 1, S. 69.

Գունազարդ ման՝ գտնված Աշտարակի մոտակայքից. մ. թ. ա. 2-րդ հազարամյակ

Այն ժամանակներից սկսած Հայաստանի և Միջագետքի պետությունների միջև մի շարք պատերազմներ են եղել: Բայց եղել են նաև խաղաղ ժամանակներ ու բարի հարաբերություններ:

Նարամ-Սուենի արձանագրություններում հիշվող Էբլա պետությունը, որի դեմ նույնպես պատերազմել է Աքքադի թագավորը, ինչպես ասվեց, գտնվել է այժմյան Հալեպ քաղաքի մոտ: Վերջին ժամանակներս այնտեղ պեղումներ կատարվեցին: Հողի տակից դուրս եկավ մի ամբողջ քաղաք, գտնվեցին սեպագիր շատ արձանագրություններ: Այդ արձանագրությունների մեջ հիշվում են **հայա** ժողովրդի մարդիկ, որոնք մի այլ երկրից եկած են եղել Էբլա: Ահա, դա էլ **հայ** անվանման առաջին հիշատակությունն է՝ Ք.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին:

ՀԱՅՔԸ ԵՎ ԽԱԹԻՆ

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերին հայերի հարավային հարևանները՝ աքքադացիները, Միջագետքում ստեղծել էին Աքքադի հզոր պետությունը: Այդ պետության մեջ բնակվում էին նաև շումերներ, խուռիներ և այլ ժողովուրդներ: Թագավորները՝ Սարգոն 1-ը, Նարամ-Սուենը և մյուսները, աքքադացիներ էին, այսինքն՝ սեմական-

ներ: Հետո շումերները իշխանությունը նրանցից խլեցին, բայց մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբում Միջագետքում ստեղծվեցին ուրիշ պետություններ, այդ թվում Բաբելոնը և Ասորեստանը, որոնց թագավորները աքքադացիներ էին: Իսկ շումերները շուտով կորցրեցին իրենց լեզուն և ձուլվեցին:

Հայերի արևմտյան հարևանները խեթերն էին: Նրանք մ.թ.ա. 2-րդ հազարամյակում (մ.թ.ա. 17-րդ դարում) ստեղծել էին իրենց հզոր պետությունը: Այդ պետությունը կոչվում էր Խաթթի, գտնվում էր Փոքր Ասիայի կենտրոնական մասերում: Շուտով Խաթթին դարձավ ամենահզոր պետությունը Փոքր Ասիայում, այսինքն՝ Անատոլիայում: Խեթերը Անատոլիայի հնագույն բնակիչներից էին, ծագումով հնդեվրոպացիներ: Նրանք սովորեցին սեպագիր նշանները և դրանցով արձանագրություններ էին գրում աքքադերեն և իրենց լեզվով՝ խեթերեն: Ինչպես գիտենք, սեպագրերը ստեղծել են շումերները, որոնք գրում էին իրենց լեզվով: Հետո սեպագիրը սովորեցին աքքադացիները. սրանք էլ այդ նշաններով գրում էին և շումերերեն, և իրենց լեզվով: Ապա սեպագիր նշանները սովորեցին այլ ժողովուրդներ, այդ թվում՝ խեթերը: Խեթերի հարևան մի քանի ժողովուրդներ, այդ թվում հույները, մի ժամանակ սեպագիր նշաններով նույնպես գրում էին խեթերեն:

1906 թ. հնագետները, խեթերի հին մայրաքաղաք Խաթուսան պեղելիս, գտան հազարավոր սեպագիր արձանագրություններ: Դրանք գրված էին մ.թ.ա. 18 — 13-րդ դարերում: Նրանցում պատմվում է Խաթթիի և հարևան ժողովուրդների պատմությունը: Օրինակ, դրանցից իմանում ենք, որ արևմուտքից Խաթթիի հարևաններն էին Տրոյան (որի մասին Հոմերոսը գրեց «Իլիականը»), Աքիյավան, Արծավան: Այս վերջին երկուսը հույն բնակչություն ունեին, բայց գործածում էին սեպագիր խեթերենը: Հյուսիսից խեթերի հարևաններն էին կասկերը, որոնց երկիրը կոչվում էր Կասկա: Կասկերը բնակվում էին Սև ծովի հարավային ափին և անընդհատ պատերազմի մեջ էին Խաթթիի հետ: Հարավ-արևելքում Միջագետքն էր, որի հյուսիսում կար Միտանի պետությունը: Սրա թագավորները և բնակչության մեծ մասը հնդիկներ էին: Միջագետքում էր նաև Ասորեստանը, որ գնալով հզորանում էր: Իսկ արևելքից Խաթթիի հարևանը հայերն էին, Հայքը

Մ.թ.ա. 15 — 13-րդ դարերում գրված խեթական արձանագրությունների մեջ հաճախ է հիշատակվում **Հայասա** երկիրը: Հին ժամանակ հոգնակի թվի մասնիկը նաև երկիր էր ցույց տալիս: Օրինակ, հին հայերենի հոգնակին կազմվում էր **-ք** մասնիկով: Հնում **Հայք** նշանակում էր հայեր և հայերի երկիր, կամ **Վիրք** նշանակում էր վրացիներ և վրացիների երկիր (Վրաստան): Խեթերեն հոգնակիի մասնիկ էին **սա**-ն և **ասա**-ն: **Հայասա** խեթերեն նշանակում էր և հայեր, և հայերի երկիր՝ Հայաստան: Խեթերն աշխարհի այն հազվագյուտ ժողովուրդներից են եղել, որոնք հայերին կոչել են այնպես, ինչպես իրենք հայերն են իրենց անվանում՝ հայ:

Հայքի գավառների ու քաղաքների անունները խեթերենում քիչ ձևափոխված են. օրինակ, հիշվում է **Թարհիգամա** քաղաքը, որը հայոց **Թորգոման** է (հետո կոչվել է **Թորդան**): Այդտեղ եղել է հայկական հին պետություն: Հիշվում է **Ուրա** բերդը, որ հայոց Ուռենն է, **Կումախան,** որ հայոց Կեմախն է, **Խախան,** որ հայոց Խախ բնակավայրն է (Երզնկայի մոտ) և այլն:

Հայքի և Խաթթիի սահմանը եղել է Եփրատ գետը և նրա ուղղությամբ գրեթե ուղիղ գծով մինչև Սև ծով:

Պարզվում է, որ այն ժամանակներում Մեծ Հայքի մի զգալի մասում (գլխավորապես արևմտյան կեսում) կազմված է եղել հայկական պետություն:

Խեթական արձանագրությունները պատմում են, որ Հայքը երբեմն դաշնակցել է Խաթթիից արևմուտք գտնվող Արզավա և հյուսիս գտնվող Կաշկա պետությունների հետ, և նրանք միասին դիմադրել են խեթական նվաճումներին: Հաճախ էլ իրենք են հարձակվել Խաթթիի վրա: Արձանագրություններից իմանում ենք նաև, որ ընդդեմ Խաթթիի Հայքը երբեմն դաշնակցում էր Միտանի պետության հետ:

Խեթերի Թուդհալիա III թագավորը հաղթեց Միտանիին և հարձակվեց Հայքի ու Կասկայի վրա՝ նվաճելով

որոշ շրջաններ: Բայց հայերը նոր զորք հավաքեցին և իրենց Կարաննի թագավորի ղեկավարությամբ Կեմախ քաղաքի մոտ ճակատամարտ տվեցին խեթերին, որոնք շուտով ետ շարժվեցին:

Թուդհալիայի մահից հետո հայերն ու կասկերը դաշնակցած հարձակվեցին Խաթթիի վրա, գրավեցին Խաթուսա մայրաքաղաքն ու այրեցին.

Մ.թ.ա. մոտ 1380 — 1346 թվականներին Խաթթիում իշխում էր Սուպիլուլիումա թագավորը, որը ջախջախեց Միտանի պետությունը և հաշտություն կնքեց Հայքի թագավոր Խուկաննայի հետ: Միտանիի հյուսիսային մասն անցավ Հայքին, իսկ հարավային որոշ շրջաններ՝ Ասորեստանին:

Ասորեստանն արդեն շատ էր հզորացել և Հայքի համար ավելի վտանգավոր էր, քան Խաթթին: Վերջինս նույնպես վախենում էր Ասորեստանի աշխարհակալական ձգտումներից: Հայքի թագավոր Խուկաննան փոխադարձ օգնության դաշինք կնքեց իր երկրի նախկին հակառակորդ Խաթթիի հետ: Այդ դաշինքն ամրապնդվեց նրանով, որ հայոց թագավոր Խուկաննան ամուսնացավ խեթերի թագավոր Սուպիլուլիումայի դստեր հետ:

Խաթթիի հաջորդ թագավոր Մարսիլի II-ը, խախտելով Հայոց Խուկաննա թագավորի հետ իր հոր կնքած դաշինքը, պատրվակ գտնելով հարձակվեց Հայքի վրա: Այն ժամանակ Հայքի թագավորն էր Աննիան (նրա անունով են կոչվել Հայքի երկու Անի քաղաքները): Խեթերը պաշարում են հայոց Ուռեն (Ուրա) ամրոցը, բայց չեն կարողանում գրավել և նահանջում են: Հայկական զորքը գրավում է Խաթթիի մի քանի քաղաք: Հետո խեթերն են հարձակվում և գրավում հայոց մի քանի քաղաքներ: Այսպես Հայքի ու Խաթթիի միջև պատերազմը շարունակվում է միառժամանակ:

Իսկ հզորացած Ասորեստանն արդեն սպառնում էր թե Հայքին, թե Խաթթիին:

Այդ ժամանակաշրջանում խեթերը Հայաստանի համար գործածում էին նաև Հայասա-Ազզի անունը: Դրանով նրանք կոչում էին հայոց միացյալ պետությունը: Այսինքն՝ հայկական տարբեր ցեղային միավորումների ու թագավորությունների միացումից կազմված այն պետությունը, որն իշխում էր Մեծ Հայքի զգալի մասի վրա: Դա հզոր

Խեցեղեն. Հայք, մ. թ. ա. 13 րդ դար

Խեթական քանդակ (նոր թագավորություն)

Զենքեր և զարդեր, Հայք, մ. թ. ա. 13-րդ դար

Այծի արձանիկ. Հայք. մ. թ. ա. 13-րդ դար

Հայքը և Խաթին

պետություն էր, որ միանգամից արշավի էր հանում տասը հազարանոց բանակ: Հայոց այդ պետությունը կազմված էր թագավորից և զորավարների ու ավագների խորհրդից:

Հայերը հիմնականում հողագործ էին: Հայքում շատ էր զարգացած այգեգործությունը: Լեռնային բոլոր շրջաններում կար հարուստ անասնապահություն:

Մ.թ.ա. 13-րդ դարի վերջերին հայոց այս միասնական պետությունը փլուզվեց, բաժանվեց առանձին մասերի: Կային անջատ, հաճախ միմյանց թշնամի հայկական իշխանություններ ու թագավորություններ: Դրանցից մեկն էլ Վանա լճի շրջակայքում ստեղծված հայկական պետությունն էր:

Հարավային հարևանի՝ հզոր ու աշխարհակալ Ասորեստանի դեմ կանգնած էր ոչ թե հայոց միասնական մի պետություն, այլ մասնատված Մեծ Հայքը, և առանձին հայկական իշխանություններն էին դիմադրում հարավից կատարվող ներխուժումներին: Զգացվում էր երկիրը միավորելու պահանջ:

Այդ ժամանակներում խեթերը Հայքը շարունակում էին կոչել Հայասա, իսկ Ասորեստանի թագավորները նույն երկիրն անվանում էին **Նաիրի:**

ԵՐԿԻՐ ՆԱՅՐԻ

Հայաստանի պատմության մասին շատ տեղեկություններ են տալիս Ասորեստանի սեպագիր արձանագրությունները[1]: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին Միջագետքում ստեղծված Ասորեստանի թագավորության մայրաքաղաքն էր Աշուրը, Տիգրիս գետի ափին: Աշուր ասորեստանցիների գլխավոր աստծու անունն էր, և նրանով էլ կոչվում էր մայրաքաղաքը: **Աշուր** անունը հանդիպում է նաև Ասորեստանի մի քանի թագավորների անուններում՝ Աշուր-Ռաբի, Աշուր-Նացիր-ապալ, Աշուր-Բանիպալ և այլն: Ասորեստան (ավելի ճիշտը՝ Աշուրեստան) հենց նշանակում է Աշուրի երկիր, Աշուրի ժողովուրդ: Ասորեստանի մյուս աստվածներից էին՝ Իշտարը (աստղերի ու երկնքի աստվածուհին), Ադադը (անձրևի և ամպրոպի աստվածը) և այլն:

Միջագետքում այդ ժամանակաշրջանում եղել են նաև այլ պետություններ, որոնցից հզոր էին մեզ արդեն ծանոթ Միտանին և Բաբելոնը: Այդ պետություններն իրար հետ մեծ մասամբ անհաշտ էին, հաճախ էին իրար դեմ պատերազմում: Մերթ մեկն էր հաղթում, մերթ մյուսը: Մ.թ.ա. 18-րդ դարում հաղթող եղավ Բաբելոնը, և Ասորեստանը ենթարկվեց նրան: Իսկ հետո հզորացավ Միտանին և Ասորեստանին իրեն ենթարկեց:

Խեթերը մի քանի ուժեղ հարված հասցրին Միտանի թագավորությանը, և սա շուտով սկսեց քայքայվել: Ասորեստանն օգտվեց դրանից և դարձավ անկախ՝ իրեն միացնելով Միտանիի մի մասը: Այդ ժամանակ՝ մ.թ.ա. 14-րդ դարի վերջին, Աշուրում ստեղծվեց Ասորեստանի մի նոր թագավորություն: Եվ այդ ժամանակից• Ասորեստանը գնալով ավելի ու ավելի հզորացավ: Ասորեստանի թագավորներ Ադադներարի I-ը, ապա Սալմանասար I-ը արշավում էին դեպի հարևան երկրները, գրավում դրանք ու միացնում Ասորեստանին: Այդպես գրավեցին Բաբելոնը, Ասորիքը (Սիրիան): Նրանք մի շարք անգամ արշավեցին նաև դեպի հյուսիս, այսինքն՝ դեպի Հայկական լեռնաշխարհ:

Ասորեստանի թագավորները բազմաթիվ արձանագրություններ են գրել տվել իրենց այդ արշավանքների մասին: Եվ այդ արձանագրությունների մեջ շատ տեղեկություններ կան Հայաստանի վերաբերյալ:

Գիտենք, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին Միջագետքում հզորացած Աքքադի թագավորները Հայքն անվանում էին Արմանի: Հետո երկար ժամանակ անցավ, մոտ 1000 տարի, և Միջագետքի արձանագրություններում Հայկական լեռնաշխարհի, Հայաստանի մասին գրեթե չկան տեղեկություններ: Եվ ահա մ.թ.ա. 13-րդ դարից սկսած Ասորեստանի թագավորները հաճախ են հիշատակում Հայկական լեռնաշխարհը, այնտեղ գտնվող հայկական տարբեր ցեղեր ու պետություններ: Բայց այս անգամ նրանք այլ անուններ են գործածում: Հետաքրքրական է, որ այն ժամանակ, երբ խեթերի թագավորները Հայաստանն անվանում էին **Հայասա,** Ասորեստանի թագավորները նույն տարածքը կոչում էին Նաիրի: Օրինակ խեթերի թագավոր Թութհալիա IV-ը (մ.թ.ա. մոտ 1250 — 1220 թթ.) Ասորեստանի թագավոր Թուկուլտի-Նինուրտա I-ին գրած նամակում Հայաստանը խեթերենի ձևով կոչում է Հայասա: Իսկ Թուկուլտի-Նինուրտա I-ը (մ.թ.ա. 1243 — 1221 թթ.) իր պատասխան նամակում նույն տարածքը աքքադերեն անվանում է Նաիրի: Պարզ է, որ ասորեստանցիները **Նաիրի** բառով, ինչպես արդեն ասվել է, սկսել էին անվանել Հայկական լեռնաշխարհն ու Հայաստանը:

Այժմ մեզ հայտնի սեպագիր արձանագրությունների մեջ առաջինը հենց Թուկուլտի-Նինուրտան է գործածել **Նաիրի** անունը: Նա իր թագավորության սկզբում՝ մ.թ.ա. 1243 — 42 թթ. մեծ զորքով արշավեց դեպի հյուսիս՝ խուռիների (շուբարիների) երկիրը, ապա՝ դեպի Նաիրի-Հայք: Ահա Հայքում նրա մղած պատերազմի մասին պատմող

---

[1] Այդ արձանագրությունները մի քանի անգամ հրապարակվել են: Մասնավորապես Հայկական լեռնաշխարհին վերաբերող ասորեստանյան արձանագրությունները հրապարակված են «Բանբեր հին պատմության» ամսագրում (ռուսերեն), Մոսկվա, 1951, № 2,3 (երապարակումը Ի. Դյակոնովի): Մեր բոլոր մեջբերումները կատարված են ըստ այդ հրապարակման:

Նետագլխիկներ. Հայք, մ. թ. ա. 11-րդ դար ▶

◀ Զենքեր Հայք. մ. թ. ա. 11-րդ դար

Բրոնզե կացին Զանգեզուրից. մ. թ. ա. 11-րդ դար

մի արձանագրությունից հատված. «Ես իմ գերազանց ուժով անցա հզոր լեռները, որոնցում ճանապարհներ չկային, և որտեղի կածանները մինչ այդ ծանոթ չէին ոչ մի թագավորի, ու հետո Նաիրի երկրի 43 թագավորներ հանդուգն կերպով շարժվեցին իմ դեմ ճակատամարտ տալու: Ես նրանց հետ պատերազմեցի, նրանց հաղթեցի, նրանց արյունով ես լցրի լեռների ձորերն ու գառիթափները: Նրանց բոլոր երկրները ես իմ լուծին ենթարկեցի և նրանց վրա մշտական հարկեր դրեցի»: Արձանագրությունների մի քանի այլ տեղերում էլ ասված է, որ թագավորը հպատակեցրել է ամբողջ Նաիրին-Հայքը:

Այսպես, Հայքը, որ կարողացավ իր անկախությունը պահպանել Խաթթիի դեմ պատերազմելով, հաղթանակներ տարավ խեթերի հզոր բանակի դեմ, պարտվեց Ասորեստանից: Պատճառն այն էր, որ Խաթթիի դեմ հա-

յերը կանգնած էին իրենց միասնական պետությամբ և հակառակորդի դեմ դուրս էին բերում շատ հզոր բանակ, իսկ Ասորեստանին Հայքը դիմադրում էր արդեն մասնատված: 43 հայկական մանր թագավորություններ էին դուրս եկել Ասորեստանի միասնական, լավ զինված ու մարզված բանակի դեմ: Հայերի շարքերում իրարից անկախ տարբեր հրամանատարներ էին գործում, չկար միասնական ղեկավարություն: Այդպիսի բանակը թույլ է լինում:

Հայքի թագավորների մի մասին Թուկուլտի-Նինուրտան շղթայակապ բերեց իր մայրաքաղաքը՝ Աշուր, և ստիպեց, որ իր Աշուր աստծու տաճարում երդում տան՝ Ասորեստանին միշտ հավատարիմ մնալու մասին:

Սակայն, ինչպես երևում է հետագա արձանագրություններից, հայերը շատ էլ հավատարիմ չեն մնացել իրենց երդումին, և հայոց անջատ իշխանություններն ու թագավորությունները հաճախ իրենց անկախ են զգացել: Դրա պատճառներից էր նաև այն, որ Ասորեստանում դավադրություն եղավ Թուկուլտի-Նինուրտա I-ի դեմ, նրան սպանեցին, և Ասորեստանը միառժամանակ շատ թուլացավ:

Մ.թ.ա. 1115 թ. Ասորեստանում գահ բարձրացավ Թիգլաթպալասար I թագավորը, որն իշխեց շուրջ 30 տարի: Նա կարողացավ վերականգնել Ասորեստանի հզորությունը և նորից նվաճեց շրջակա երկրները: Նա կրկին հնազանդեցրեց խուռիներին, որոնք հայերի դաշնակիցներն էին դարձել: Նվաճեց կասկերին և այլ ցեղեր: Նա հարձակվեց նաև Մեծ Հայքի հարավային աշխարհի՝ Աղձնիքի (Ալզիի) վրա, որտեղ այդ ժամանակ սկսել էին իշխել փռյուգիացիները (այն ժամանակ նրանց մուշկ էին անվանում)· Փռյուգիան գտնվում էր Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան տարածքներում և արևմուտքից հարևան էր Հայքին:

Հերթը հասավ ամբողջական Հայքին: Այդ ժամանակ հայկական մի շարք թագավորներ և իշխաններ Ասորեստանին այլևս հարկ չէին վճարում ու չէին ենթարկվում: Եվ Թիգլաթպալասար I-ը իր թագավորության 3-րդ տարում Նաիրի-Հայքի դեմ մի այնպիսի մեծ արշավանք սկսեց, որպիսին մինչ այդ հայոց երկիրը չէր տեսել: Դրանից հետո Թիգլաթպալասարը դարձյալ երկու անգամ այդպիսի մեծ արշավանքներ կատարեց Հայքի դեմ:

Այս թագավորը սեպագրերով փորագրել է տվել իր իշխանության ժամանակաշրջանի տարեգրությունը: Եվ ահա հնադարյան սեպագրերն այսօր մեզ պատմում են նրա այդ երեք մեծ արշավանքների մասին: Հիշվում են երկիր Նաիրիի հայկական շատ ցեղեր, քաղաքներ, լեռներ, գետեր: Դրանց մի մասի անուններն այժմ անծանոթ են, քանի որ անցել է ավելի քան 3000 տարի, հին անունների մի մասն էլ, թեև աքքադական լեզվով է գրված, բայց ծանոթ է հայ պատմիչների գրքերից: Օրինակ, կա Դայաենի. այդպես աքքադերեն անվանում էին Մեծ Հայքի Տայոց աշխարհը՝ Տայքը (հետո Տայքն անվանում էին նաև Դիաուխի): Կամ հիշվում է Մուսուրու անունով քաղաք, որ հայոց Մուշն է, Տարնո աշխարհի մայրաքաղաքը, կա Խունուսու, որ հայոց Խնուսն է և այլն:

Արձանագրություններից մեկում գրված է. «Նաիրի երկրների 23 թագավոր իրենց երկրներում միացրին մարտակառքերը և զորքերը՝ ջոկատներով ելան իմ դեմ պատերազմ ու ճակատամարտ տալու»: Ապա իմանում ենք, որ հայերը պարտվել են Ասորեստանի բազմահազարանոց բանակից: Հետո, ինչպես արձանագրությունն է պատմում, 60 հայկական թագավորություններ (այսինքն՝ ցեղեր) են հարձակվել Թիգլաթպալասարի զորքի վրա և դարձյալ պարտվել են, հակառակորդին թողնելով 120 մարտակառք:

Թիգլաթպալասարն իր առաջին արշավանքը սկսել է Հայքի հարավից և պատերազմելով շարժվել դեպի հյուսիս ու հասել Տայքին: Հետո գնալով ավելի դեպի հյուսիս՝ կանգ է առել Սև ծովի ափերին, Ճորոխ գետի մոտ: Սև ծովը թագավորն իր արձանագրության մեջ կոչում է Վերին ծով: Դրանով մենք իմանում ենք, որ այն ժամանակ Նաիրի-Հայքը հասնում էր մինչև Սև ծովի ափերը:

Երկրորդ ու երրորդ արշավանքների ժամանակ էլ Թիգլաթպալասարի զորքերը մի շարք արյունոտ ճակատամարտեր են տվել հայերի դեմ: Երրորդ արշավանքի ժամանակ ասորեստանցիների դեմ դուրս են եկել 30 հայկական թագավորներ ու իշխաններ, բայց դարձյալ պարտվել են: Արձանագրության մեջ այդ հայ թագավորների մասին

Բրոնզե սակբեր (կացիններ). Հայք. մ. թ. ա. 11-րդ դար

Բրոնզե արձանիկ, Հայք, մ. թ. ա 11-րդ դար

Թիգլաթպալասարը գոռոզաբար գրել է. «Նրանց քթերից օղեր անցկացրի և որպես եզներ բերեցի իմ Աշուր քաղաքը»: Ասորեստանի զորքը երրորդ անգամ կարողանում է հասնել Սև ծով: Թիգլաթպալասարը հազարավոր հայ գերիներ, նաև մեծ քանակությամբ անասուններ, ձիեր, այլ հարստություն էր տանում Ասորեստան: Նա լինում է նաև Վանա լճի ափին:

Հարց է առաջանում՝ ինչու է Թիգլաթպալասարը երեք անգամ իրար հետևից արշավել Հայքի դեմ: Հավանաբար այն պատճառով, որ հայերը պարտվելով, նոր զորքեր են հավաքել ու կրկին չեն ենթարկվել Ասորեստանին, հարկերը չեն վճարել: Այնուամենայնիվ, հայկական անջատ իշխանությունները ոչ մի կերպ չէին կարողանում ուժեղ դիմադրություն ցույց տալ Ասորեստանին: Հերոսաբար պատերազմում էին, բայց դարձյալ ու դարձյալ Ասորեստանի միասնական բանակը հաղթող էր դուրս գալիս: Հայկական անջատ բանակները չունեին այնպիսի հզորություն, որ վերջնականապես հաղթեին Ասորեստանին: Զգացվում էր հայկական միասնական պետության անհրաժեշտությունը: Եվ շուտով ստեղծվեց այդպիսի պետություն:

Բրոնզե դաշույն, Հայք, մ. թ. ա. 11-րդ դար

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՎԱՆԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՐԱՐՏՈՒ (ՈՒՐԱՇՏՈՒ) = ԱՐՄԻՆԱ = ՀԱՅՔ

Ասորեստանի թագավորների արձանագրություններում Նաիրիի բազմաթիվ անջատ իշխանություններից մեկը կոչվում էր **Ուրուատրի** կամ **Ուրուատրու**, իսկ հետո՝ **Ուրարտու**: Դա սկզբում մի փոքր թագավորություն էր, նման Հայքի մյուս անջատ թագավորություններին: Գտնվում էր Վանա լճի ափերին: Ապա սկսեց մեծանալ, իր մեջ միավորել շրջակա հայոց մանր իշխանությունները: Հետո հզորանալով ավելի մեծացավ, մինչև որ ամբողջ Նաիրի երկիրը միավորեց և դարձավ մեծ պետություն: Այդ ժամանակվանից Ասորեստանի թագավորներն իրենց արձանագրություններում սկսում են ամբողջ Նաիրի-Հայքը անվանել նաև Ուրարտու:

Այս պետությունը շատ մեծ դեր է կատարել հայ ժողովրդի պատմության ընթացքում: Ուստի նախ փորձենք պարզել, թե դա ինչ պետություն էր և որտեղից է ծագել նրա աքքադական **Ուրարտու** անունը:

Հնադարյան սեպագիր արձանագրությունների և հայ պատմիչների գրած գրքերի ուսումնասիրումը այս հարցի պատասխանը տալիս է լրիվ չափով:

Օրինակ, Ասորեստանի Ասարհադդոն թագավորը մ.թ.ա. 680 թ. փորագրված արձանագրությունների մեջ պատմում է մի կարևոր դեպք. մ.թ.ա. 681 թ. իր երկու եղբայրները իրենց հորը՝ Ասորեստանի թագավոր Սենեքերիմի (Սինաքերիբի) դեմ դավադրություն են կազմակերպում ու սպանում նրան: Հետո ըստ այդ արձանագրությունների, նրանք փախչում են Ուրարտուի հարավը: Աստվածաշնչի մեջ մի տեղ՝ Թագավորների 4-րդ գրքում նույնպես գրված է այս դեպքի մասին: Բայց այստեղ ասված է, որ երկու եղբայրները՝ Ադրամելիքն ու Սարասարը, իրենց հորը սպանելով՝ փախել են Արարատի երկիրը: Նույն այս դեպքի մասին 5-րդ դարի հայ հեղինակներից գրել է Մովսես Խորենացին. նա պատմում է, որ երկու եղբայրները իրենց հորը՝ Սենեքերիմին սպանելուց հետո «փախան եկան մեզ մոտ»: Պարզ է, որ Խորենացին գրելով «մեզ մոտ» նկատի ուներ իր հայրենիքը՝ Հայաստանը: Ուրեմն, ըստ Խորենացու, հայրասպան եղբայրները եկել են Հայք: Վերջապես, նույն դեպքի մասին, քիչ փոփոխված, պատմվում է նաև հայոց «Սասնա ծռեր» («Սասունցի Դավիթ») դյուցազնավեպում: Այստեղ էլ փախստական եղբայրները գալիս են Հայաստանի Սասուն գավառը:

Այս չորս աղբյուրներից մենք իմանում ենք, որ Ուրարտու, Արարատի երկիր և Հայաստան միևնույն երկրի տարբեր անուններն են:

Մի այլ օրինակ, մ.թ.ա. 6-րդ դարում Պարսկաստանում հիմնվեց Աքեմենյանների թագավորությունը: Այդ թագավորները մի քանի հարյուր տարի արձանագրություններ էին գրում: Նրանց արձանագրությունները երեք լեզվով են գրված՝ հին պարսկերեն, աքքադերեն (բաբելական տարբերակով), էլամերեն (էլամը Պարսկաստանի հարավում գտնված հին երկիր էր): Այդպես, գրեթե ամեն նախադասություն գրված է այս երեք լեզուներով: Այժմ մեզ հետաքրքրում են այդ արձանագրության հին պարսկական և աքքադական մասերը:

Հին պարսիկները Հայքն անվանում էին **Արմինա:** Պարսից Աքեմենյան թագավորների բազմաթիվ արձանագրություններում Հայաստանը շատ անգամ է հիշատակված **Արմինա** անունով: Եվ ահա արձանագրությունների աքքադական մասում **Արմինա**-ի փոխարեն ամեն տեղ գրված է **Ուրաշտու:** Աքքադերենի ասուրական տարբերակի **Ուրարտու**-ն բաբելական տարբերակում **Ուրաշտու** ձևն ունի, քանի որ ասուրականի **ր** հնչյունի դիմաց բաբելականը **շ** ուներ:

Այսպիսով, հին պարսկերենի **Արմինա**-ի դիմաց աքքադերենն ամեն տեղ ունի **Ուրարտու (Ուրաշտու):**

Այդ արձանագրություններից ամենամեծը գրել է տվել պարսից Դարեհ I թագավորը: Այն փորագրված է բարձր ժայռի վրա, որը գտնվում է Պարսկաստանի Քիրմանշահ քաղաքից ոչ հեռու, Բեհիսթուն գյուղի մոտ: Դրա համար արձանագրությունը կոչվում է Բեհիսթունի: Դարեհը շատ անգամ է հիշատակում Հայաստանը և այստեղ էլ հին պարսկերենում այն միշտ կոչվում է Արմինա, իսկ աքքադականում՝ միշտ Ուրարտու (Ուրաշտու): Օրինակ, այդ արձանագրության մեջ կա այսպիսի նախադասություն. «Խոսում է Դարեհ թագավորը. մի պարսիկի, անունը Վաումիսա՝ իմ ծառային, ուղարկեցի Հայաստան»: Հին պարսկերեն նախադասության մեջ գրված է «ուղարկեցի Արմինա», իսկ աքքադերեն միևնույն նախադասության մեջ՝ «ուղարկեցի Ուրաշտու»: Եվ այսպես է ամեն տեղ:

Բեհիսթունի արձանագրության մեջ խոսվում է նաև հայերի մասին: Հին պարսկերեն նախադասություններում հայը կոչվում է **արմինիյա,** իսկ աքքադերեն նույն նախադասությունների մեջ՝ **ուրարտայա (ուրաշտայա):** Օրինակ. գրված է «մի հայ անունը Արաքա». հին պարսկերեն մասում այսպես է՝ «Արաքա նամա արմինիյա», իսկ աքքադականում՝ «Արախա շումշու ուրաշտայա»: Սրանից էլ պարզվում է, որ հին պարսիկները հայերին անվանել են **արմինիյա,** իսկ աքքադացիները՝ **ուրարտայա** (կամ **ուրաշտայա):** Այսինքն՝ մեզ հայտնի է դառնում հայերի անուններից ևս մեկը՝ **ուրարտայա,** այն է՝ **ուրարտացի:** Նորից հիշենք, որ շատ ժողովուրդներ հայերին կոչել և կոչում են **արմին, արմեն, արման** անվան ձևերից որևէ մեկով, վրացիները՝ **սոմեխի:** Ահա ասորեստանցիներն ու բաբելացիներն էլ մ.թ.ա. առաջին հազարամյակում հայերին անվանել են **ուրարտայա,** ուրարտացի՝ Վանի հայոց պետությանն իրենց տված **Ուրարտու** անվան համաձայն:

Քննելով պատմությունը՝ պարզում ենք նաև այլ հարցեր: Մենք արդեն գիտենք, որ Մեծ Հայքը մ.թ.ա. 3-րդ հազարամյակից հայկական ցեղերի տարածման շրջանն էր: Ավելի ուշ Խորենացին գրում էր, որ հայոց Վաղարշակ թագավորը մ.թ.ա. 2-րդ դարում Մեծ Հայքի սահմանները որոշում էր լեզվով. այն վայրերը, որոնցում ժողովուրդը հայերեն էր խոսում, այսինքն՝ որտեղ որ հայեր էին բնակվում, թագավորը համարում էր Մեծ Հայքի մեջ մտնող տարածք, իսկ որտեղ լեզուն հայերենը չէր, թագավորը թողնում էր Մեծ Հայքից դուրս: Հին հույն պատմիչ և աշխարհագրագետ Ստրաբոնն էլ Մեծ Հայքի մասին գրել է՝ «մի երկիր, մի լեզու»:

Ահա աքքադերեն **Ուրարտու** կոչվող պետության թագավորները պատերազմով կամ խաղաղությամբ միավորում էին ճիշտ ու ճիշտ Մեծ Հայքը, նրա շուրջ 300 հազար քառակուսի կիլոմետր տարածքը: Պարզ է, որ հայկական ցեղերին մի պետության մեջ կարող էին միավորել միայն հայ թագավորները: Այլազգի թագավորներին դա չէր հետաքրքրի, նրանք, ընդհակառակը՝ ուզում էին, որ հայերը չմիավորվեին, մնային Նաիրիի անջատ իշխանություն-

ները, քանի որ այդպես ավելի հեշտ էր հաղթել Հայքին: Մենք դեռ կտեսնենք, որ հետագա հայ թագավորները՝ Արտաշեսը, Տիգրան Մեծը, Արշակունիները, Բագրատունիները նույնպես մի գլխավոր նպատակ են ունեցել՝ միավորել Մեծ Հայքը, իսկ միավորելուց հետո պահպանել նրա ամբողջությունը: Երբ Վան-Ուրարտուի հայոց թագավորությանը փոխարինեց Երվանդունիների թագավորությունը, այն զբաղեցնում էր Մեծ Հայքի նույն տարածքը: Այսինքն՝ թագավորական տունը փոխվեց, բայց Մեծ Հայքը մնաց որպես հայոց երկիր՝ իր միևնույն 300 հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ, քանի որ դա հայերի լեզվացեղային (էթնիկական) տարածքն էր հնագույն ժամանակներից:

Իսկ որտեղից է այդ **Ուրարտու** անունը: Այժմ բոլոր գիտնականները համաձայն են, որ **Ուրարտու (Ուրաշտու)** և **Արարատ** նույն անվան տարբեր ձևերն են: Մեռյալ ծովի մոտ Կումրան կոչված վայրում գտնված հին եբրայական ձեռագրերի մեջ **Արարատ** անվանաձևն ունի տարբերակներ, այդ թվում՝ **Ուրարատ** և **Արարտու,** որոնք **Արարատ** և **Ուրարտու** ձևերի «միջին» տեղն են գրավում:

Հայ հին պատմիչները ևս Հայաստանը կամ նրա մի մասը երբեմն անվանել են Արարատի երկիր:

Արարատ, Ուրարատ, Արարտու, Ուրարտու (Ուրաշտու) ձևերից ամենանախնականը **Արարատ**-ն է: Այս անունը բացատրվում է միայն հայերեն: Հայ հին գրականության մեջ պահպանված է **Այրարատ** ձևը: Ավելի հնում եղել է **Այրայրատ,** որ բաղկացած է **այր** բառի կրկնությունից և հայկական **-ատ** ածանցից: Հնում բառի կրկնությամբ շատ տեղանուններ են կազմվել. այդպես էլ կազմվել է **Այրայրատ**-ը: **Այր** բնիկ հայերեն բառ է, նշանակել է ամուր, արի, տղամարդ, նաև՝ հայ: Իսկ **-ատ** ածանցը շատ հնուց է գալիս. հիշենք հայերեն **խորխորատ** հին բառը, որ կազմված է հայերեն **խոր** բառի կրկնությունից և նույն **-ատ** ածանցից: **Այրայրատ** ձևը լեզվական օրենքներով խոսակցական հայերենում նախ դարձել է **Այրարատ,** հետո՝ **Արարատ:** Այս անվանաձևն էլ անցել է հայերի հարավային հարևաններին ու սեմական լեզուներում կամ նույնությամբ պահպանվել է՝ **Արարատ,** կամ փոփոխվելով դարձել է **Արարտու, Ուրարատ, Ուրարտու, Ուրաշտու** և այլն:

Ավելի ուշ՝ 5-րդ դարում **Այրարատ** անունով կոչվում էր Մեծ Հայքի կենտրոնական մասը, որ հիմնականում Հայաստանի արքունի և թագավորանիստ աշխարհն էր: Շատ հնում, ահա, այդ անունով կոչվել է Հայաստանի հարավային մասը, այն է՝ Վանա լճի շրջակայքը, իսկ երբ Վանի թագավորները միավորեցին ամբողջ Մեծ Հայքը, որպես մի միասնական պետություն, հենց Մեծ Հայքն էլ, այսինքն՝ Նաիրին, օտարները սկսեցին կոչել Արարատ, Արարատի երկիր, Արարատի թագավորություն կամ Ուրարտու:

Եվ այսպես՝ **Արարատ, Ուրարտու** հին Հայաստանի անուններից են: Բայց Վանա լճի շրջակայքում ստեղծված հայոց պետության ղեկավարները իրենց երկիրը կոչում էին ոչ թե Արարատ կամ Ուրարտու, այլ՝ Վան, Վանի թագավորություն, որ տեղային սեպագրերում Բիաին(ա) ձևն ուներ:

Դարեհ I-ի արձանագրությունը մեզ մի ուրիշ կարևոր տեղեկություն էլ է տալիս: Այնտեղ գրված է, որ հայ, այսինքն՝ ուրարտացի Արաքան Հալդի աստծու որդիներից էր (հին պարսկերեն՝ «Արաքա նամա արմինիյա Հալդիտայա պուրա): Սա էլ նշանակում է, որ հայերի գլխավոր աստվածն այն ժամանակ եղել է Հալդին կամ Հալդը: Հալդ աստծուն կոչում էին նաև Խալդ: Գիտնականները (օրինակ, պրոֆ. Ի. Մեշչանինովը) ցույց են տվել, որ դա հին հայերի Հայկ աստվածն է, որին վանեցիները և որոշ այլ վայրերի հայեր կոչել են նաև Խայկ:

Կարևոր է նաև Արարատի թագավորության արձանագրությունների լեզվի հարցը: Մի քանի խոսք այդ մասին:

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արարատի հայոց թագավորության ժամանակաշրջանից պահպանվել են ավելի քան 500 սեպագիր արձանագրություններ: Բոլորը գտնվել են Մեծ Հայքի տարածքում: Նախ փորձեցին այդ արձանագրությունները կարդալ

հայերեն: Բայց պարզվեց, որ դրանք երկու այլ լեզուներով են գրված: Այդ լեզուներից մեկը աքքադերենն է, մյուսը՝ խուռիերենին մոտ մի լեզու

Խուռիերենը հին հարավ-արևմտյան Ասիայի 5 տարածված գրավոր լեզուներից մեկն էր: Խուռիները բնակվում էին Մեծ Հայքից հարավ և հարավ-արևմուտք, այն է՝ Միջագետքում, Սիրիայում, մասամբ՝ Պաղեստինում: Միջագետքի հյուսիսում ստեղծված Միտանի պետության մեջ խուռիներ կային, թեև հիմնական բնակչությունը հնդկական էր: Հավանաբար, Մեծ Հայքի հարավային որոշ շրջաններում էլ խուռիներ եղել են: Խուռիները հայերի հինավուրց հարևաններն էին: Մի ժամանակ նրանք հայերի հետ դաշնակցեցին Խաթթիի դեմ, ապա դարձան հայերի երկարատև դաշնակիցներն ընդդեմ Ասորեստանի: Խուռիները զարգացած մշակույթ ունեցող ժողովուրդ էին. նրանք սովորեցին շումերական սեպագրերը և այդ նշաններով գրում էին աքքադերեն և խուռիերեն արձանագրություններ: Խուռիերեն առաջին սեպագիր արձանագրությունը գրվել է մ.թ.ա. մոտ 2200 թվականին, իսկ Արարատի թագավորության մեջ առաջին սեպագիր արձանագրությունները գրվել են դրանից մոտ 1400 տարի հետո: Այդ պատճառով Արարատի թագավորության արձանագրությունների մյուս լեզուն, որ շատ մոտ է հին խուռիերենին, պայմանականորեն անվանում-ենք **նորխուռիերեն:** Եվ այսպես, Մեծ Հայքում գտնված սեպագիր արձանագրությունները գրվել են երկու լեզվով՝ աքքադերեն և նորխուռիերեն: Արձանագրությունների մեծ մասը գրված է նորխուռիերեն:

Երբ այս լեզուն դեռ լավ չէր ուսումնասիրված, գիտնականները տարբեր անուններ տվեցին նրան՝ վաներեն, խալդերեն, ուրարտերեն և այլն: Այժմ երբ գիտենք, որ այդ լեզուն սերտ մերձակից է հին խուռիերենին. ամենահարմար անունը մնում է **նորխուռիերեն**-ը:

Սեպագիր արձանագրությունների բնույթը ճիշտ հասկանալու համար նախ պետք է առհասարակ միմյանցից տարբերել գիրը և լեզուն: Դրանք բոլորովին տարբեր բաներ են: Օրինակ, արաբերենը և պարսկերենը բոլորովին տարբեր լեզուներ են, բայց գիրը նույնն է՝ արաբականը: Կամ՝ Եվրոպայում գրում են լատինական տառերով, բայց բոլորովին տարբեր լեզուներով՝ ֆրանսերեն, անգլերեն, հոլանդերեն, չեխերեն, լեհերեն և այլն

Այդպես էլ սեպագիրն է. շումերներից հետո սեպագրերով սկսեցին գրել աքքադերեն, խեթերեն, էլամերեն.

Աքքադերեն արձանագրություն



Քելյաշինի արձանագրությունը, գրված երկու լեզվով՝ աքքադերեն և նորխուռիերեն

խուռիերեն, նորխուռիերեն, հին պարսկերեն: Այդպես, սեպագիրը տարածվեց ամբողջ Հարավ-արևմտյան Ասիայում:

Ապա, կարևոր է իմանալ, որ հնում հաճախ մի պետության մեջ խոսում էին մի լեզվով, իսկ արձանագրություններ գրում մի այլ լեզվով կամ լեզուներով: Օրինակ, մ.թ.ա. 2-րդ հազարամյակում Փոքր Ասիայի պրևմուտքում եղած Արծավա երկիրը, որի մասին արդեն գիտենք Հայքի և Խաթթիի պատմությունից, հիմնականում հունական բնակչություն ուներ, բայց նրանց թագավորները գրել էին տալիս խեթերեն սեպագիր արձանագրություններ: Նույն ժամանակամիջոցում Միջագետքի հյուսիսում եղած Միտանի երկիրպետության բնակիչները և թագավորները, ինչպես արդեն գիտենք, հիմնականում հնդիկներ լինելով, իրենց սեպագիր արձանագրությունները գրում էին խուռիերեն և աքքադերեն: Հին պարսիկները երկար ժամանակ գրում էին էլամերեն սեպագիր արձանագրություններ և այլն: Այդպես էլ Արարատի թագավորության ժամանակ հայ թագավորները արձանագրություններ գրում էին երկու օտար լեզուներով.

Թեև հայերի պատմությունը սկսվել է մ.թ.ա. 4-րդ հազարամյակում, բայց հայերեն առաջին արձանագրությունները մեզ հասել են 5-րդ դարից: Դրանք գրված են Մեսրոպ Մաշտոցի ստեղծած նշանագրերով, որոնցով հայերեն գրում են նաև այժմ: Իսկ մինչ այդ, երկար ժամանակ հայերը, ավելի ճիշտ՝ հայ թագավորները, արձանագրություններ գրել են այլ լեզուներով, որոնք գրավոր խոսքում մշակված էին ու տարածված:

Արդյոք մինչև 5-րդ դարը, նախքան Մեսրոպ Մաշտոցի գյուտը, Հայաստանում ուրիշ տառերով հայերեն գրել են, թե ոչ: Կան հին հույն և հայ հեղինակների մի շարք վկայություններ, որ 5-րդ դարից առաջ հայերեն գրել են, բայց առայժմ չեն գտնվել նախքան 5-րդ դարը հաստատ հայերեն գրված արձանագրություններ: Հավանականն այն է, որ նախքան քրիստոնեության պաշտոնական ընդունումը (նախքան 301 թվականը) Հայաստանի հեթանոսական մեհյաններում հայերեն գրել են: Հնարավոր է, որ առաջիկայում

գտնվեն նաև այդպիսի արձանագրություններ: Բայց փաստն այսօր այն է, որ հայ թագավորները, իշխանները նախքան 5-րդ դարը պաշտոնական արձանագրություններ գրել են տվյալ ժամանակաշրջանում Հարավ-արևմտյան Ասիայում տարածված լեզուներով (գործածել են 6 — 7 օտար լեզուներ): Այդպես Վանի Արարատյան թագավորությունում գրել են աքքադերեն և նորխուռիերեն, ավելի ուշ՝ Հայքում գրել են արամեերեն (քաղդեերեն). օրինակ, հայոց Արտաշես թագավորը (մ.թ.ա. 189 — 160 թվականներ) իր արձանագրությունները գրել է տվել արամեերեն: Հետո հայերն սկսեցին գործածել հունարենը. հայոց թագավոր Տիգրան Մեծը (մ.թ.ա. 95 — 55 թվականներ) իր դրամների վրա գրել էր տալիս հունարեն, իսկ հայոց Արտավազդ II թագավորը մ.թ.ա. 55 — 34 թվականներին իր դրամներին էլ էր հունարեն գրել տալիս, ինքն էլ հունարեն թատերգություններ էր գրում, որոնք բեմադրվում էին այն ժամանակվա հայոց մայրաքաղաքի՝ Արտաշատի թատրոնում: Հետո Հայաստանում գրում էին լատիներեն, պահլավերեն (միջին պարսկերեն) ու ասորերեն:

Աքքադերենը, նորխուռիերենը, արամեերենը, հունարենը և հիշյալ մյուս լեզուները Հայաստանում երբեք ընդհանուր խոսակցական չեն եղել: Իբրև խոսակցական սկսած մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերից Մեծ Հայքում աստիճանաբար տարածվում էր հայերենը, որ և իշխող խոսակցական դարձավ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին:

Ասվեց, որ Արարատի հայոց թագավորությունում գրված արձանագրությունների գերակշիռ մասը նորխուռիերեն է: Մի քանի խոսք դրանց մասին: Շուրջ 500 արձանագրությունների մեջ ընդամենը 350 բառ-արմատ կա: Պատճառն այն է, որ այդ արձանագրությունների ոճը միատեսակ է, կան պատրաստի խոսքային բանաձևեր, որոնք բազմիցս կրկնվում են հարյուրավոր արձանագրությունների մեջ:

Սեպագիր նշանները հայ քրմերն ընդօրինակելով աքքադերենից, շատ պարզեցրել էին: Առհասարակ, Արարատի թագավորությունում սեպագիր նշանները գիտեին միայն քրմերը: Ժողովուրդը ոչինչ չէր հասկանում դրանցից:

Նորխուռիերեն արձանագրություններում սեպագրերը երեք նշանակություն ունեին. 1) վանկագրեր: Սրանք արձանագրություններում ամենաշատ գործածվածներն են, և հիմնականում սրանցով է որոշվում, թե սեպագիր արձանագրությունը ինչ լեզվով է գրված: Սեպերի ամեն մի խումբը մի վանկ է նշանակում՝ ինչպես՝ ա, աբ, ալ, բա, դի, ին, կի, մե, նու, տա, ուլ և այլն: Օրինակ՝ [illegible] նշանը մե վանկն է, [illegible] նշանը՝ նու վանկը, [illegible] նշանը՝ ա վանկը: Հիմա կարդանք՝ [illegible] մե նու ա: Սա Արարատի հայոց թագավոր Մենուայի անունն է

2) Սեպագիր նշանների երկրորդ տեսակը որոշիչներն են. դրվում են բառի սկզբում և ցույց են տալիս, որ այդ բառը քաղաքի անուն է կամ՝ երկրի և կամ գետի անուն: Օրինակ՝ [illegible] նշանը դրվում է որևէ երկրի անունից առաջ և նշանակում երկիր:

3) Սեպագիր նշանների երրորդ [illegible] գաղափարագրերն են, ցույց են տալիս որևէ գաղափար, որևէ բան՝ ջուր, թագավոր, տուն և այլն: Օրինակ՝ [illegible] սեպախումբը տուն է նշանակում: Տունը վանկերով չէին գրում. հենց այս մի սեպախումբը այդ իմաստն ուներ:

Արարատի թագավորության նորխուռիերեն սեպագիր արձանագրությունների մեջ եղած շուրջ 350 բառ-արմատների, ինչպես և դիցանունների քննությունը ցույց է տալիս, որ նրանց մեջ շատ են հայերեն բառ-արմատները, այսինքն՝ հայոց լեզվից այդ լեզվի մեջ անցած բառերը:

Խուռիերենը և նորխուռիերենը հնդեվրոպական լեզուներ չեն, նրանց լեզվաընտանիքը դեռ պարզված չէ: Հայերենը, ինչպես գիտենք, հնդեվրոպական լեզու է: Ուրեմն, եթե նորխուռիերենում հանդիպում են բնիկ հայերեն, հնդեվրոպական բառեր, նշանակում է, դրանք հայերենից են անցել այդ լեզվին: Բնիկ հայերեն բառերն անցնելով

նորխուռիերենի մեջ, ստացել են այդ լեզվի քերականական ձևերը: Օրինակ, հայերեն **ծառ** բառը նորխուռիերենում **ծառի** ձևն է ստացել, **ավելի** բառը՝ **աբիլի, սուր** բառը՝ **սուրի** կամ **շուրի, աստ** (այստեղ) բառը՝ **իստինի, այն** բառը՝ **ինի, ես** դերանունը՝ **իեշե** կամ **իեսե, առ** բառը՝ **առու, ուտեմ** բառը՝ **պտու** և այլն: Սրանք բոլորը բնիկ հայերեն (հինդեվրոպական) բառեր են: Ձևափոխված են նաև հայոց քաղաքների ու գավառների անունները. օրինակ, Երևանը (Էրևանը) գրված է Էրեբուն(ի), Վանը՝ Բիահին(ա), Ծոփքը՝ Ծուփան(ի) և այլն: Նորխուռիերեն արձանագրություններում տարբեր ձևեր ստացած կան նաև ուրիշ բնիկ հայերեն (հնդեվրոպական) բառեր, ինչպես՝ **բան, պեղ(ել), արծիվ, ուղի, դնել, մնալ** և շատ ուրիշներ, ավելի քան 70 բառ: Որոշ բառեր էլ ուրիշ հին լեզուներից անցել են հայերենին, սրանից էլ նորխուռիերենին. օրինակ այդպիսիք են **ուղտ** և **բուրգ** բառերը:

Առայժմ կարող ենք ասել, որ առաջին անգամ հայերեն բառեր գրվել են Արարատի հայոց թագավորության այդ արձանագրությունների մեջ: Գուցե հետագայում պարզվի, որ ավելի վաղ շրջանի արձանագրությունների (շումերական, աքքադական և այլն) մեջ էլ կան հայերեն բառեր, բայց առայժմ առաջնությունը այս արձանագրություններինն է: Թեև այդ բառերը նորխուռիերենի մեջ են և այդ լեզվի քերականական ձևերն են ստացել, բայց դրանք բնիկ հայերեն բառեր են՝ խոսակցական հայերենից թափանցած այդ լեզվի մեջ[1]:

Հայաստանի նորխուռիերեն արձանագրությունների մեջ այնքան շատ են հայերեն բառերը, որ կան ամբողջ նախադասություններ, բաղկացած հայերեն բառերից (նորխուռիերեն քերականությամբ): Ահա մի օրինակ՝

ի - ե - սե - հ - նի - պի - ա - գու - բի

Իեսե բնիկ հայերեն (հնդեվրոպական) **ես** դերանունն է, **ինի** բնիկ հայերեն **այն** դերանունն է, **պիլի** նույնպես բնիկ հայերեն **պել** կամ **պեղ** արմատն է, որ նշանակում է փորել, փորվածք: **Ագուբի** բառի մեջ **ագ**-ը բնիկ հայերեն արմատ է, որ նշանակում է անց կացնել: Այսպիսով՝ «Իեսե ինի պիլի ագուբի» նշանակում է «ես այն (այս) փորվածքը (ջրանցքը) անցկացրի»

Ինչո՞վ բացատրել հայերեն բառերի մեծ քանակը Հայաստանի նորխուռիերեն արձանագրություններում. Պատճառներից մեկն այն է, որ հայերը շատ հնուց ապրել են խուռիական ցեղերին հարևան և Հայքի հարավում, հայկական շրջապատում բնակվող այդ ցեղերի լեզվի մեջ թափանցել են հայերեն բառեր նախքան Հայքում նորխուռիերեն արձանագրություններ գրելը: Ապա՝ Արարատի հայոց թագավորության մեջ արձանագրություններ գրում էին հայ գրագիր քրմերը, որոնք մեծ մասամբ վատ գիտեին նորխուռիերեն լեզուն և փորագրելիս հաճախ իրենց մայրենի լեզվի՝ հայերենի բառերը դնում էին այդ լեզվի մեջ: Կամ երբ թագավորը հայերեն թելադրում էր արձանագրության բովանդակությունը, գրագիր քուրմը թարգմանելիս երբեմն չէր գտնում նորխուռիերեն անհրաժեշտ բառը և փոխարենը օգտագործում էր հայերեն նույնիմաստ բառ՝ դնելով այն նորխուռիերենի քերականական ձևով:

Ինչպես ասվեց, նորխուռիերեն արձանագրությունները խիստ կաղապարային են՝ միևնույն արձանագրության մեջ նույն նախադասությունը կրկնվում է մի քանի անգամ: Հաճախ էլ իրար մոտ գտնված արձանագրություններում միևնույն նախադասությունը կրկնվում է 10, 20, 30 անգամ և ավելի: Օրինակ, հայոց Իշպուիինի թագավորի մի արձանագրության մեջ կարդում ենք. «Իշպուիինին՝ Սարդուրի որդին այս տունը կառուցեց» նախադասությունը:

---

[1] Հայերենից նորխուռիերենին անցած բառերի մասին ավելի մանրամասն տեսնել «Երևանի համալսարան», 1982 № 2, «Բանբեր Երևանի համալսարանի», 1986, № 1, «Գիտություն և տեխնիկա», 1986, № 6, 1987, № 1:

Աքքադերեն արձանագրություն Վանում (Սարգուր I-ի)

Նորխուռիերեն արձանագրություն Էրևան-Էրեբունիի հիմնադրման մասին

Նույն տեղում 7 այսպիսի արձանագրություններ կան, և այդ նախադասությունը նրանցում կրկնված է 21 անգամ.

Երբ համեմատում ենք նորխուռիերեն առաջին արձանագրությունները վերջինների հետ, տեսնում ենք, որ մոտ 250 տարի գրվել են այդ արձանագրությունները, և այդ ընթացքում նրանց լեզուն որևէ զարգացում, փոփոխություն չի ունեցել, պահպանվել են միևնույն կաղապարները: Հայքում չխոսվող այդ լեզուն քրմական դասի մեջ հիշվել է իր բնորոշ արձանագրական կաղապարներով: Այսպիսի պայմաններում բնական է, որ հայ քրմերի մայրենի լեզվի բառերը թափանցեին այդ օտար լեզվի մեջ:

ԼՍԵՆՔ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒՆ

Մովսես Խորենացին ծնվել է մոտ 410 թվականին և ապրել շատ երկար: Իր «Հայոց պատմությունը»[1] Խորենացին գրել է Սահակ Բագրատունի իշխանի պատվերով: Ըստ այդ պատվերի, Խորենացին պետք է գրեր հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև իր օրերը: Նրա «Հայոց պատմության» առաջին գիրքը կոչվում է «Հայոց մեծերի ծննդաբանությունը», նվիրված է հեռավոր անցյալին. այն սկսվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերից և հասնում մինչև մոտ մ.թ.ա. 1-ին դարը: Այլ խոսքով, Խորենացին իր այդ առաջին գրքում գրել է իր ապրած օրերից 3000-ից մինչև 1000 և ամենաքիչը մոտ 500 տարի առաջ կատարված դեպքերի մասին:

Բայց դրա համար անհրաժեշտ էին գրավոր աղբյուրներ, լեզվաբանական ուսումնասիրություններ, հնագիտական նյութեր, մշակույթի պատմության ուսումնասիրություն: Խորենացու ապրած ժամանակներում լեզվաբանությունը, հնագիտությունն ու մշակույթի պատմությունը Հայաստանում այնքան զարգացած չէին, որ օգնեին շուրջ 3500 տարվա հայոց պատմություն գրելուն: Իսկ հին սեպագիր արձանագրություններից Խորենացին օգտվել չէր կարող, որովհետև նրա ժամանակ սեպագիր իմացող չկար: Խորենացու ձեռքի տակ չկար նաև Հայաստանի մասին վկայող հույն և հռոմեացի պատմիչների գրքերի մի մասը

Հայոց պատմության հնագույն ժամանակաշրջանի համար հայ պատմահայրը օգտվում էր Աստվածաշնչից, Մար Աբաս Կատինա ասորի պատմիչի մատյանից, Ուղյուպ քրմի գրածներից, հույն պատմիչ Դիոդորոս Սիցիլիացու գրքից, մի շարք այլ գրավոր աղբյուրներից, ինչպես և ժողովրդական զրույցներից:

Բայց Աստվածաշնչում Հայաստանի մասին քիչ է գրված, իսկ Մար Աբասը, Ողյուպ քուրմը, Դիոդորոսը և մյուսները հնագույն ժամանակների մասին գրել են ուրիշների գրածների կամ դարձյալ ժողովրդական զրույցների համաձայն: Նրանք ժամանակակից չեն եղել Խորենացուց 2 — 3 հազար տարի, նույնիսկ 1000 տարի առաջ կատարված դեպքերին: Ժողովրդական զրույցներն էլ դարերի ընթացքում բերնեբերան անցնելով իրական դեպքերը փոփոխված էին պահել, նրանց առասպելի տեսք տվել:

Խորենացու հայոց պատմության այն մասերը, որոնք ժամանակով շատ հեռու են հեղինակից, ավելի շատ էլ կարիք ունեն ստուգման ու ճշտման: Եվ նրա գրքի այն մասերն են ավելի ճշգրիտ, որոնք ավելի մոտ են իր ապրած ժամանակներին:

---

[1] Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» տպագրվել է շատ անգամ, շատ լեզուներով: Հայերեն վերջին հրատարակություններից է Երևանում 1981 թ. տպագրվածը:

Հին աշխարհի բոլոր պատմիչներն էլ՝ հույն, հռոմեացի, հայ, ասորի, իրենցից շատ առաջ կատարված դեպքերի մասին գրելիս հաճախ են սխալներ արել, միմյանց հետ շփոթել թագավորներին, նրանց ապրած ժամանակները, դեպքերի հաջորդականությունը:

Ճիշտ չեն այն մարդիկ, որոնք Խորենացու գրքում եղած Հայկի ու Բելի, Արամի, Արայի ու Շամիրամի պատմությունները համարում են առասպել: Խորենացուն պետք է հավատալ. այն, ինչ նրա գրքում առասպելի է նման, անպայման իրական հիմք է ունեցել, և առասպելանման դյուցազուններն էլ իրական մարդիկ են եղել: Միայն պետք է այդ ամենը ստուգել, ճշտել, պատմական եղելությունը պարզել:

Այսօր, երբ մեր ձեռքի տակ կան հին սեպագիր արձանագրությունների վերծանված շատ վկայություններ Հայաստանի վերաբերյալ, լեզվաբանության, հնագիտության և մշակույթի պատմության տվյալներ, Խորենացու գրածը հնագույն Հայաստանի մասին կարող ենք ստուգել, ճշտել: Չէ որ սեպագիր արձանագրությունները գրվել են այն հնագույն ժամանակներում, երբ կատարվել են դեպքերը, փորագրողները դեպքերին ժամանակակից կամ մասնակից մարդիկ են եղել:

Այսպես, լսենք Խորենացուն: Որտեղ որ սեպագրերը և ժամանակակից գիտությունը մեզ կարող են օգնել, կփորձենք ճշգրտումներ անել: Իսկ այժմ տեսնենք, թե ինչպես է Խորենացին սկսում հայոց պատմությունը:

Հայերի ծագումը Խորենացին դնում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերում: Իր պատմությունը նա սկսում է Նոյ նահապետով, որը, ինչպես գրում է Խորենացին, «հայտնի ու նշանավոր մարդ էր», «հայրենական առաքինությունների նշանավոր ժառանգ»: Ըստ Խորենացու, հայերը Նոյ նահապետի Հաբեթ որդու ժառանգներն են: Ըստ այդմ, Նոյն իր գերդաստանի հետ ջրհեղեղից փրկվելով և Արարատ լեռից իջնելով, Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում է տնավորվել: Խորենացին գրում է, որ Հաբեթի թոռան որդին էր Թորգոմը: Հնում շատերը հայերին թորգոմյաններ են ասել: **Թորգոմի տուն** անունով երբեմն կոչում էին Հայքը կամ նրա մերձեփրատյան հատվածը (Թորհիգաման):

Այսօր մեզ համար կարևոր է այն, որ ըստ Խորենացու, հայերը ծագել են մ.թ.ա. 4-րդ հազարամյակում, Հայկական լեռնաշխարհում, իսկ դա, ինչպես արդեն գիտենք, հաստատվում է ժամանակակից գիտությամբ:

Ապա՝ Խորենացին պատմում է, որ Թորգոմի որդի Հայկը իր գերդաստանով ու զորքով մի ժամանակ բնակվել է Միջագետքում՝ Բաբելոնի մոտակայքում: Սա ճիշտ պետք է լինի, քանի որ, նախ՝ ինչպես վկայում են որոշ սեպագիր արձանագրություններ և այլ աղբյուրներ, Միջագետքում միշտ եղել է հայկական բնակչություն: Ապա՝ Հայկն իր զորքով, հավանաբար, զինվորական ծառայության մեջ է եղել Միջագետքում: Հին ժամանակ այդպիսի կարգ կար՝ ենթակա երկիրը տիրող երկրին զորք էր տալիս: Ինչ-որ ժամանակ Հայաստանի վրա իշխանություն է տարածած եղել Միջագետքի պետություններից մեկը: Հայքի և Միջագետքի միջև պատերազմներ հաճախ են եղել՝ մերթ մի կողմն է հաղթել, մերթ՝ մյուսը: Հայկ Նահապետի ժամանակ երևի հայերն անհաջողության են մատնված [illegible]ել, և հաղթած պետությանը զորք են տվել Միջագետքում ծառայելու համար:

Բայց Հայկն իր զորաբանակով, ինչպես Խորենացին է գրում, ապստամբել է Միջագետքի տիրակալ Բելի [illegible]մ և իր զորքով ու գերդաստանով վերադարձել իր պապերի երկիրը:

Ըստ Խորենացու, Հայկը նախ բնակություն է հաստատել Վանա լճից հարավ ընկած մի դաշտավայրում: Ապա [illegible]դտեղ թողնելով իր թոռանը՝ Կադմոսին, նրա զորքով ու ազգականներով, ինքը մյուսների հետ եկել, հաստատ[illegible]ել է Վանա լճից հյուսիս-արևմուտք գտնվող մի լեռնադաշտում և անվանել այն **Հարք** (Հայրեր), ի պատիվ այդ վայրերում հնում բնակված Հայկի նախնիների (հայերի):

Շուտով Միջագետքից պահանջում են, որ հայերը կրկին հնազանդվեն իրենց: Բայց հայերը մերժում են: [illegible]ջագետքից Բելի ղեկավարությամբ հսկա զորք է գալիս Հայաստան

Հայկը, ինչպես Խորենացին է շարունակում պատմել, շտապում է Վանա լճի ափը և իր զորքին կոչ է անում՝ «Կամ մեռնենք, կամ հաղթենք»: Այսինքն՝ նահանջ չպիտի լինի: Հայկի զորաբանակը հակառակորդի զորքից փոքրաթիվ էր, և նա որոշում է ճակատամարտ տալ լեռների մեջ, որտեղ հայերն ավելի մարտունակ էին: Լեռներում ամուր դիրք գրավելով՝ հայերը տեսնում են հակառակորդի «Բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան վազում էին», — գրում է Խորենացին:

Ծանր, արյունոտ ճակատամարտ է տեղի ունենում: Ի վերջո, բաբելացիների ղեկավարը՝ Բելը, սպանվում է Հայկի նետից, և հակառակորդի զորքը ցրիվ նահանջում է:

Դրանից հետո, ըստ Խորենացու, ճակատամարտի վայրը կոչվում է **Հայք,** այդ ամբողջ շրջանը՝ Հայոց ձոր: Սեպագիր արձանագրություններում այդ նույն վայրը կոչվում է Հայա դուն (Հայոց տուն): Դա գտնվում է Վանա լճի հարավ-արևելյան կողմում:

Երբ կարդում ենք Խորենացու հաղորդած այս պատմությունը, նկատում ենք, որ այն առասպելի է նման՝ նրանում հսկաներ կան, դյուցազուններ, պատերազմն էլ առասպելական է նկարագրված: Բայց հաստատ է, որ այդ պատմությունը եղած դեպքերի մասին է, միայն ժողովրդի մեջ խոսվելով, հետո գրի առնվելով փոփոխվել է, այդպիսի տեսք ստացել:

Այսօր Խորենացու հաղորդած այդ պատմությունը մեզ ասում է, որ Հայկ անունով մի հայոց ցեղապետ ու զորավար ապստամբել է Միջագետքի ասուրա-բաբելական թագավորության դեմ, հաղթել հակառակորդի զորքերին և Վանա լճի մոտակայքում հիմնել հայոց նոր պետություն: Դա Արարատի հայոց պետությունն էր:

Ե՞րբ են տեղի ունեցել Հայկի հետ կապված դեպքերը: Դժվար է ասել: Խորենացին հաստատ ժամանակը չի նշում: Ոմանք կարծում են, թե Հայկը հաղթանակ է տարել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին:

Հայկը ժամանակներ հետո հայ ժողովրդի մեջ աստվածացվեց: Շատ հնում հաճախ էին ցեղապետները աստվածացվում: Օրինակ, Բաբելոնում էլ աստվածացվեց նրանց զորավար Բելը:

Հայկի մասին սեպագիր արձանագրությունները ավելի ուշ շրջանում են պատմում, երբ նա արդեն համարվում էր հայերի գլխավոր աստվածը: Հայկը համարվել է նաև երկնքի աստված, և հայերը աստղային համաստեղությունների մեջ մեկը անվանել են Հայկի անունով (հույները այն կոչում էին Օրիոն):

Հայկի անունը նորխուռիերեն սեպագրերում Հալդի և Խալդի՝ ձևերն ունի: Դրանց բառավերջի **ի**-ն քերականական վերջավորություն է, այն հանած, մնում են **Հալդ** և **Խալդ** ձևերը, որոնցում արմատ են **Հալ**-ը և **Խալ**-ը: Հայոց բարբառներում էլ այդ անունը երկու ձև ունի՝ **Հայկ** և **Խայկ,** որոնցում արմատ են **Հայ**-ը և **Խայ**-ը: Հայտնի է որ հայերենում լ և յ հնչյունները միմյանց փոխարինում են: Օրինակ, հայոց բարբառների մի մասում (և գրական լեզվում) ասվում է **գալ, գալիս եմ,** իսկ որոշ բարբառներում **կայ, կայիս եմ:** Ուրեմն **հայ** արմատը կարող էր փոխվել **հալ**-ի կամ հակառակը: Այդպես, **Հայ**-ը դարձել է **Հալ, Խայ**-ը՝ **Խալ:** Գուցե և հայոց հնագույն բարբառներում բոլոր այդ ձևերն էլ եղել են:

Առաջին անգամ Հալդ-Հայկի անունը հիշվում է մ.թ.ա. 9-րդ դարի վերջերում Վանի թագավոր Իշպուհինի (մ.թ.ա. 825 — 810 թթ.) կողմից գրել տված մի արձանագրության մեջ:

Այսպես Հայկը կամ Հալդը հիմնադրում է հայոց պետություն: Նա իր հետ Միջագետքից բերում է շատ մարդիկ, իսկ սրանք էլ իրենց հերթին Հայաստան են բերում Միջագետքի մշակույթը, սովորությունների, հագուստի շատ տարրեր: Ահա Վանա լճի մոտ կազմված այս թագավորությունն է, որ հետո աստիճանաբար դառնում է միավորեր ամբողջ Մեծ Հայքը:

Խորենացին այդ միավորման մասին էլ է պատմում, թեև դարձյալ առասպելի նման: Նա գրում է, որ Հայկի զավակները, թոռները, ծոռները աստիճանաբար գնում են հյուսիս, հյուսիս-արևելք և հյուսիս-արևմուտք ու իրենց

[illegible]ակը առյուծի վրա
[illegible] հանկար Էրևան-Էրեբունիից)

տերությանն են հնազանդեցնում տեղի բնակչությանը: Այդպես Վանի պետությանն էին միացվում Մեծ Հայքի տարբեր մասերը՝ Արագածը, Արագածոտնը (Արագածի լանջերը), Արարատ լեռն իր շրջակայքով, Գեղարքունիքը՝ Սևանա լճով, Շիրակը, Տայքը և այլն:

Այս բոլորի մասին ուրիշ ձևերով, ինչպես կտեսնենք, վկայում են նաև սեպագիր արձանագրությունները:

ՀԱՅՈՑ ԱՐՔԱ ԱՐԱՄԸ

Հալդ-Հայկի սերնդից Արամը շատ գործեր է արել Մեծ Հայքի հայկական անջատ իշխանությունները միավորելու համար: Արամի մասին պատմում են և Խորենացին, և աքքադական սեպագիր արձանագրությունները: Այս վերջիններում նրա անունը **Արամու** ձևով է գրված: Այդ **ու**-ն աքքադերենի վերջավորություն է, և հայոց այդ թագավորի անունը ավելի ճիշտ է գրված Խորենացու գրքում՝ **Արամ:** Այս անունը առաջացել է հայերեն **ար** և **արմ** բառերից: **Ար**-ը բնիկ հայերեն արմատ է՝ **այր** բառի տարբերակը և նույնպես նշանակել է արի, խիզախ, տղամարդ, նաև՝ հայ: (Այս **ար**-ը պետք է հիշել, քանի որ հայկական տեղանուններում ու անձնանուններում հաճախ է հանդիպում): **Արմ** նույնպես բնիկ հայերեն բառ է, նշանակում է սերունդ, զարմ, արմատ: **Արարմ** նշանակել է արի մարդու կամ հայի սերունդ: Հետո ըստ լեզվական օրենքների խոսակցական հայերենում **Արարմ**-ը դարձել է **Արամ:** Այս անունը չպետք է շփոթել ասորական **Արամ**-ի հետ. նրանք ծագումով տարբեր են և միայն արտաքին նմանություն ունեն: Իսկ պարսիկների **Արամ** անունը առնված է հայերից:

Արամի ապրած ժամանակաշրջանը հայտնի է: Նրա անունն առաջին անգամ հիշվում է Ասորեստանի Սալմանասար III թագավորի (մ.թ.ա. 859 — 824 թթ.) արձանագրություններում: Ըստ դրանց, Արամի իշխանությունը ձգվել է մ.թ.ա. 859 — 824 թվականների միջև: Ուրեմն, Արամը մ.թ.ա. 9-րդ դարի գործիչ էր: Հավանական է, որ նա իշխանության հասած լինի մ.թ.ա. մոտ 875 թ., իսկ մ.թ.ա. 858 թ. նա արդեն հաստատ հզոր թագավոր էր՝ մեծ զորքով ու հարստությամբ:

Խորենացին նրան անվանում է **հայկական Արամ,** իսկ Սալմանասար III-ը աքքադերեն՝ **ուրարտայա Արամու:** Մենք գիտենք, որ աքքադացիները հայերին **ուրարտայա** են ասել: Ուստի Սալմանասարի գրածը եթե հայերեն թարգմանենք, կլինի **հայ Արամ** կամ **հայկական Արամ:**

Խորենացին Արամի մասին գրել է ըստ Մար Աբաս պատմիչի այսպես. «Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով՝ լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների՝ վրա»:

Խորենացին պատմում է, թե ինչպես է Արամը երկիրը հարավ-արևելքում պաշտպանել մարերից, հարավում՝ ասորեստանցիներից: Նա հաղթելով Արարատի թագավորության վրա հարձակված Ասորեստանի բանակին՝ արշավել է առաջ ու հասել Միջագետք: Ապա Արամն արշավել է նաև դեպի արևմուտք, այնտեղից եկող վտանգը վերացնելու: Նա հաղթարշավ հասել է մինչև Փոքր Հայքի վերջը: Նրա հասած երկիրը հետո հունարեն կոչվեց Պրոտին Արմենիա՝ Առաջին Հայք: Հույները Փոքր Հայքի այս մասն այդպես են անվանել այն պատճառով, որ դա եղել է իրենց ամենից մոտ գտնվող հայկական վայրը:

Հայոց աստվածություն կամ նրա քուրմ-թագավորը (հավանաբար, Արամը) ցուլի վրա: (Բարձրաքանդակ Արծկեից): Սուսերանման տերևներ խորհրդանշում են սոսի ծառ:

Ասորեստանի Սալմանասար 3-րդ թագավորը (արձան Նիմրուդից)

Արամի ժամանակ այդտեղի հայերի մի մասը օտարախոս էր դարձել: Դա նշանակում է, որ այդ մարդիկ կարող էին իրենց արդեն հայ էլ չհամարել. չէ՞ որ հայությունը պահող միակ և հիմնական նշանը հայոց լեզուն է: Խորենացին գրում է, որ Արամը «Այդ աշխարհի բնակիչներին հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն»:

Ասորեստանի Սալմանասար III թագավորի սեպագիր արձանագրություններում պատմվում է Ասորեստանի և Արարատի թագավորության դաժան պատերազմների մասին: Այն ժամանակներում թագավորներն արձանագրությունների մեջ գոռոզաբար գրում էին իրենց արշավների մասին մեծ չափազանցություններ, նրանք պատմում էին, թե ինչպես են հակառակորդի մարդկանց կոտորել, երկիրն ավերել, այրել, ձորերն ու սարերը թշնամու արյունով լվացել և այլն: Իրենց պարտությունների մասին նրանք չէին գրում:

Իր թագավորության հենց առաջին տարում Սալմանասարը հարավից հարձակվեց Հայքի վրա: Նրան նախ դիմադրեց Նաիրի հայոց անջատ թագավորներից մեկը, որի անվան աքքադական ձևն է Գակիա (երևի ճիշտ անունը Գագիկ է եղել): Սա իր փոքրաթիվ զորքով բարձրանում է լեռները: Նրան հետապնդում է Սալմանասարի մեծաքանակ զորքը: Ի վերջո, այդտեղի հայերը և նրանց ղեկավարը ստիպված հնազանդություն են հայտնում Ասորեստանին:

Հետո Սալմանասարը շարունակում է իր արշավը դեպի հյուսիս և հասնում է Արամի ամրոց-քաղաքներից մեկին, որն աքքադական սեպագրերում այդ լեզվի ձևով կոչվում է **Սուգունիա,** իսկ հայերեն կոչվել է Սուկան կամ Սյուկունիս: Այս քաղաքն ասորեստանցիները շրջապատում են և համառ կռիվներից հետո՝ գրավում: Սալմանասարը կոտորած է սարքում և այրում է շրջակա 14 հայկական բնակավայրեր: Բայց Արամի ղեկավարությամբ հայերը շարունակում են համառ դիմադրություն ցույց տալ: Սալմանասարի զորքը հասնում է մինչև Վանա լճի հարավային ափը, հետո, հայերի [illegible] հարձակումներից նեղվելով, վերադառնում է Ասորեստան:

Իր թագավորության 3-րդ տարում (մ.թ.ա. 857 թ.) Սալմանասար III-ը նորից է արշավում դեպի Վանա լճի կողմերը: Նա անցնում է հայոց Արածանի գետը (Եփրատի մեծ վտակը), գնում է հյուսիս, հաղթում է հայոց մի քանի անջատ իշխանությունների: «Մինչև հիմքերը քանդեցի, ավերեցի, կրակով այրեցի, շատ գերիներ առա, նրանց ունեցվածքը և հարստությունը խլեցի»,— այսպես է գրում Ասորեստանի թագավորը իր այդ արշավանքի մասին: Ապա նա գալիս է և պաշարում Արամի գլխավոր քաղաքը, որը աքքադական սեպագրերում կոչվում է Արծաշկու, իսկ հայերեն՝ Արծկե: Այս քաղաքը գտնվում էր Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին:

Սալմանասար թագավորը գրում է. «Ես մոտեցա Արծկեին՝ հայոց Արամի թագավորական քաղաքին»: Արամն իր զորքով դիմադրում է, բայց տեսնելով հակառակորդ զորքերի շատ մեծ քանակը՝ որոշում է ասորեստանցիների դեմ ճակատամարտ տալ լեռներում՝ իմանալով որ հայոց զորքը ավելի վարժ է կռվում լեռնային վայրերում: Արամը բարձրանում է Սիփանի լեռները: Ասորեստանի զորքը մտնում է Արծկե: Սալմանասար III-ը գրում է. «Իմ արիության ուժով որպես վայրի ցուլ ես ոտնակոխ արեցի նրա երկիրը, քաղաքներն անապատ դարձրի, Արծկեն՝ հարևան շենների հետ ես քանդեցի, ավերեցի, կրակով այրեցի, մարդկանց գլուխներից աշտարակներ շինեցի...»:

Իհարկե, Ասորեստանի թագավորը, ըստ սովորության, շատ է չափազանցում իր արածները, բայց միևնույն է, այսօր մենք զգում ենք, թե ինչ դաժան ժամանակներ են եղել, և որքան անգութ են ասորեստանցիները վարվել հայ բնակչության հետ:

Սալմանասարի զորքը հետապնդելով Արամին՝ բարձրանում է լեռները: Ճակատամարտ է տեղի ունենում: Հայ նիզակավորներն ու նետաղեղավորները դիմադրում են խիզախորեն: Բայց ասորեստանցիները գրավում են Արամի լեռնային ճամբարը, շատերին են սպանում, գերի վերցնում: Նրանց ձեռքն են ընկնում Արամի մարտակառքերի, ձիերի, ջորիների մի մասը, թագավորական մեծ հարստությունը: Բայց Արամն իր զորքի մնացած մասով բարձր լեռներում շարունակում

Կաթսա Արարատի թագավորության ժամանակաշրջանից

է դիմադրել հակառակորդին և նրան մեծ վնասներ պատճառել: Ասորեստանցիները չկարողանալով հաղթել Արամին, իջնում են լեռներից, անցնում Վանա լճի (Նաիրիի վերին ծովի) արևելյան մասն ու այստեղ շարունակում ասպատակել հայկական գյուղերն ու քաղաքները: Ապա՝ Ասորեստանի թագավորը իր զորքով գալիս է Վանա լճի ափը: «Շարունակելով իմ արշավը,— գրում է նա, — ես իջա դեպի Նաիրի երկրի ծովը: Ծովում ես լվացի Աշուրի հզոր զենքը, նրան զոհեր մատուցեցի, իմ պատկերը կանգնեցրի, վրան գրեցի փառաբանություն Աշուրին...»

Սալմանասարը մեծ ավարով վերադառնում է իր Աշուր մայրաքաղաքը: Իր արշավի մասին թագավորը արձանագրություններ է փորագրել տալիս և քաղաքներից մեկի դարպասի բրոնզե սալերի վրա նկարել է տալիս իր արշավանքները դեպի Հայաստան: Այդտեղ մենք տեսնում ենք հայոց և Ասորեստանի զորքերի մարտերը, Սուկան և Արծկե քաղաքների գրավման պատկերները, հայոց դիմադրող զորքերի նահանջը դեպի լեռները, ասորեստանցիների կատարած կողոպուտի պատկերներ:

Այդպես, Ասորեստանի մեծաքանակ զորքը շատ ավերներ ու դաժանություններ արեց Հայքում, բայց չկարողացավ Արամին հաղթել: Արամն իր զորքի մնացած մասով լեռներից իջավ, նորոգեց քաղաքները, գյուղերը, ամրոցները, նոր ամրոցներ կառուցեց, նոր զորաբանակներ կազմեց: Իսկ հետո Արամն իր զորքերով հասավ մինչև Միջագետքի հովիտը՝ սարսափ ազդելով հակառակորդի վրա:

Հիշենք, թե ինչպես Թուկուլտի-Նինուարտայի և Թիգլաթպալասարի ժամանակ Ասորեստանի զորքերը մըտնում էին Նաիրի, կողոպտելով կտրում անցնում հարավից մինչև Սև ծով, իսկ անջատ հայ թագավորությունները չէին կարողանում դիմադրել: Այդ ժամանակն անցավ: Արդեն ստեղծվել էր միասնական հայոց պետություն:

Վերջին անգամ Սալմանասար III-ը Արամի դեմ պատերազմ սկսեց մ.թ.ա. 844 թ.: Նա, անցնելով հայոց Տունիբուն կիրճը, հանկարծակի հարձակվեց Արարատի թագավորության շեների վրա, ավերածություններ անելով, բայց խուսափեց Արամի զորքերի հետ ընդհարվելուց: Արարատն արդեն հուժկու պետություն էր դարձել:

Արամը շատ հզորացրեց Հայկի հիմնած Արարատյան պետությունը, դարձրեց այն մի այնպիսի թագավորություն, որն արդեն կարող էր միավորել Մեծ Հայքի անջատ բոլոր հայոց թագավորություններն ու իշխանությունները և դառնալ Հարավ-արևմտյան Ասիայի ամենահզոր պետությունը:

Հայերը շուտով մայրաքաղաք ընտրեցին Վանա լճի արևելյան ափին՝ Վան-Տոսպում: Այդ քաղաքն աքքադական արձանագրություններում կոչվում է Տուրուշպա, նորխուռիերենում՝ Տուշպա, հայերեն հնում՝ Տոսպ: Իսկ Վան անունով հնում կոչվում էր երկիրը, բայց ավելի ուշ այդ անունը մնաց քաղաքի վրա: Վան-Տոսպ կոչվում էր քաղաքը և իր շրջապատը:

Մայրաքաղաքը լճի արևելյան ափ տեղափոխելը ճիշտ որոշում էր, քանի որ փորձը ցույց տվեց, որ Վանա լճի հյուսիս-արևմտյան և հյուսիսային մասերում ու այնտեղ գտնվող Արծկե մայրաքաղաքում ասորեստանցիներին դիմադրելը շատ դժվար էր կամ անհնար: Վան-Տոսպի շրջանն ավելի հարմար էր այդ տեսակետից: Եվ հայերը դրանից հետո իրենց պետությունը սկսեցին անվանել Վան, այն ժամանակվա հայերենով՝ Բիաին, իսկ նորխուռիերեն արձանագրություններում, ինչպես տեսանք, այն գրվում էր Բիաինա: Արամին սիրեց հայ ժողովուրդը, նա ևս աստվածացվեց: Հայկական հին տոմարի ամեն ամսվա երրորդ օրը կոչվում էր Արամ:

ՍԱՐԴՈՒՐ, ԻՇՊՈՒՀԻՆԻ, ՄԵՆՈՒԱ

Ասորեստանի ծերացած թագավոր Սալմանասար III-ը տեսնելով, որ Արամի շնորհիվ Արարատի հայոց թագավորությունը շատ է հզորացել և իր հովանու տակ է առել Հայքի շատ մասերը, իր զորավար Դայանաշուրի մեծ զորքով ուղարկեց դեպի հյուսիս՝ Արարատին հնազանդեցնելու: Սալմանասարի արձանագրություններից իմանում

ենք, որ այդ ժամանակ Վանում իշխում էր արդեն Սեդուր կամ Սարդուր (Սարդուրի) անունով հայոց թագավորը:

Արձանագրությունների մեջ Արամը հիշվել է Դայանաշուրի այդ արշավանքից 12 տարի առաջ: Առհասարակ, Վանի թագավորներից ամեն մեկն իր նախորդի որդին է եղել: Բայց այս դեպքում դժվար է ասել, թե Սարդուրն Արամի որդին էր, թե թոռը: Հավանաբար որդին էր:

Այս Սարդուրն իշխել է մ.թ.ա. 845 — 825 թթ., նա հայոց թագավորներից առաջինն էր, որ սեպագիր արձանագրություններ գրել տվեց: Նրա սեպագիր արձանագրությունները աքքադերեն են: Իր արձանագրությունների մեջ Սարդուրն իրեն անվանում է Լուտիպրի (Լուտիպրիի) որդի: Որոշ գիտնականներ այն կարծիքին են, որ **Լուտիպրի** կամ **Լուտիպր** Արամի անուններից մեկն է եղել կամ մականունը: Հնում մի թագավոր հաճախ երկու, երեք և ավելի անուններ էր ունենում, նաև մականուն:

Քանի որ հետագայում Վանում իշխել են Սարդուր անունով նաև ուրիշ հայ թագավորներ, ուստի Արամի որդուն (կամ թոռանը) անվանում ենք Սարդուր I:

Սա շինարար էր: Կառուցեց ամրոցներ, նաև՝ Վանի քարաժայռի մոտ մի բերդ՝ հսկա քարերով: Այդ քարերի վրա էլ նա փորագրել տվեց արձանագրություններ: Ահա նրանցից մեկը՝ թարգմանված աքքադերենից. «Սար-

Վան-Տոսպի ամրոցի պատը

դուրի՝ Լուտիպրի որդու արձանագրությունն է, մեծ թագավորի, հզոր թագավորի, աշխարհի թագավորի, Նաիրի երկրի թագավորի, որի հավասարը չկա, զարմանալի հովվի, որ չի վախենում ճակատամարտից, այն թագավորի, որը բոլոր թագավորներից տուրք է ստացել: Այսպես է ասում Սարդուրը՝ Լուտիպրի որդին»:

Այստեղ մենք, իհարկե, նկատում ենք, որ հայ թագավորը մասամբ ընդօրինակել է ասորեստանցի թագավորների ամբարտավան ոճը, որը գործածում էին նաև հարևան այլ երկրների թագավորներ ու հետո էլ՝ հայ հաջորդ թագավորները գործածեցին: Բայց կարևոր է այն, որ Սարդուրն արդեն իրեն ներկայացնում է որպես մեծ թագավոր, որին ենթակա էին Հայքի ուրիշ մանր թագավորներ:

Իսկ Սալմանասար III-ի Ասորեստանում գրված արձանագրությունը մեզ պատմում է Արածանի գետի մոտ Դայանաշուրի և Սարդուրի զորքերի ճակատամարտի մասին: Գրված է, որ իբր Ասորեստանի զորքերն են հաղթել, բայց դա համոզիչ չէ, քանի որ այդ զորքերը Արածանին չեն անցել և այդ գետից հյուսիս չեն թափանցել: Եթե նրանք հաղթած լինեին, կգնային հյուսիս, դեպի Հայքի խորքը: Պարզ է, որ Սարդուրն իր զորքով Արածանիի մոտ հետ է շպրտել Դայանաշուրի ասորեստանյան բանակը: Սալմանասար III-ի այդ արձանագրության մեջ կարդում ենք. «Հայ Սեդուրը հույսը դրեց իր մեծաքանակ զորքի շատության վրա»: Սա նշանակում է, որ հայոց զորքը, իրոք, բավական մեծ է եղել:

Դրանից հետո երկար ժամանակ Ասորեստանի զորքերը ասպատակում և կողոպտում էին Արարատի թագավորության միայն հարավային շրջանը, որ կոչվում էր Խուբուշկիա: Հյուսիս՝ դեպի Վան-Տոսպ նրանք չէին համարձակվում շարժվել:

Մ.թ.ա. 825 թ. Վան-Տոսպում գահ բարձրացավ Իշպուհինի (Իշպուինի) թագավորը, որին ասորեստանցիները կոչում էին Ուշպինա: Սրա ժամանակ Ասորեստանում ներքին կռիվներ կային, և հայոց համար՝ որոշ խաղաղություն: Իշպուհինին շինարարական գոր-

ի թագավորության աստվածուհիներից (արձանիկ Թեշիբայինի ամրոցից)

Ասորեստանի
Թիգլաթպալասար
III թագավորը գահի վրա

Նինվեի պարիսպները

ծերով զբաղվեց: Ապա նա հայոց գահ բարձրացրեց իր երիտասարդ որդուն՝ Մենուային (Մենուին), իսկ ինքը մնաց խնամակալ թագավոր: Հայր և որդի միատեղ մի շարք արձանագրություններ փորագրել տվեցին: Դրանցից մեկը, որ գտնվում է Ուրմիա լճի հարավ-արևմտյան կողմում, կոչվում է Քելյաշինի արձանագրություն: Սալ քարի մի կողմում գրված է սեպագիր աքքադերեն, մյուս կողմում միևնույն բանը՝ սեպագիր նորխուռիերեն: Այս արձանագրությունը շատ է օգնել գիտնականներին նորխուռիերեն լեզուն սովորելու (աքքադերենի օգնությամբ):

Արձանագրության մեջ գրված է Հայկ աստծուն որպես զոհ մատուցված հարյուրավոր եզների, հազարավոր այծերի և ուլերի մասին: Հայր ու որդի թագավորները Հայկ աստծու տաճարին նաև թանկարժեք նվերներ են մատուցել: Արձանագրությունից իմանում ենք, որ Հայկ աստծու տաճարը գտնվել է Արդինի քաղաքում, որը աքքադերեն կոչվում էր Մուսասիր: **Արդինի** անունը բացատրվում է հետևյալ կերպ: Նախ հիշենք, որ **ար** հայերեն բառը (**այր**-ի տարբերակը) նշանակել է տղամարդ, նաև՝ հայ, իսկ **դի** հայերեն նշանակում է ուժ, աստվածություն, **-նի**-ն ածանց է: Ուրեմն՝ Արդինի հնում պետք է նշանակեր հայոց աստված: Գիտնականների մեծ մասն այն կարծիքին է, որ Արդինի-Մուսասիրը գտնվել է Ուրմիա լճից հարավ-արևմուտք:

Արարատի թագավորության մեջ ուժեղացել էր Հայկ աստծու պաշտամունքը: Հայերի մյուս աստվածներից էին Թեշիբը (Թեյշեբան), Շիվին (Շիվինին): Վանի թագավորներն իրենց արձանագրություններն սկսում էին Հայկի փառաբանությամբ, այնպես, ինչպես ասորեստանցիները փառաբանում էին իրենց Աշուրին: Ահա մի օրինակ. «Հանուն Հայկ աստծու, տիրակալի, Սարդուրի որդի Իշպուհինին և Իշպուհինիի որդի Մենուան այս արձանագրությունը կանգնեցրին: Հայկ աստվածը արշավի ելավ իր զենքով...»

Հայր ու որդի թագավորները Վան-Տոսպում Միերի դուռ կոչված ժայռի խորշում մի մեծ արձանագրություն փորագրել տվեցին, որի մեջ թվարկված են Արարատի ամբողջ թագավորության մեջ հայկական բոլոր ցեղերի կողմից պաշտված աստվածները, գրված է նաև, թե որ աստծուն ինչքան եզ, այծ ու ոչխար պետք է զոհ մատուցվի: Այս արձանագրությունից այսօր մենք իմանում ենք հին հայերի պաշտամունքների, այսինքն՝ հայոց հին դիցարանի մասին: Ավելի ուշ հայերի դիցարանը փոխվեց՝ պարսկական և հունական դիցարանների ազդեցությամբ:

Իշպուհինին և Մենուան քրմեր էին: Մենուան եղավ նաև հայոց հզոր թագավոր, որը Արարատի թագավորության մեջ միավորեց Մեծ Հայքի շատ աշխարհներ:

ՄԵՆՈՒԱ

Սեպագրերում Մենուայի անունը որոշ գիտնականներ ընթերցում են Մինուա: Այս անունը, ինչպես էլ ընթերցվի, ծագել է բնիկ հայերեն **մե(ն)** կամ սրա տարբերակ **մի(ն)** բառից, որ նշանակել է մեկը, միակը, նաև՝ միայնակը:

Հոր մահից հետո Մենուան թագավորեց ևս 24 տարի՝ մ.թ.ա. 810-ից մինչև 786 թվականը: Նա իր անունով փորագրել է տվել 100-ից ավելի նորխուռիերեն արձանագրություններ, որոնցում պատմում է, թե ինչպես է իր պետության մեջ միավորել Մեծ Հայքի անջատ շատ իշխանություններ, ինչպիսի մեծ շինարարություններ է կատարել: Արձանագրություններից շատերում խոսվում է մեծ ջրանցք փորելու մասին:

Բայց այս երկարակյաց ու հզոր թագավորի մասին Ասորեստանի արձանագրություններում ոչ մի խոսք չկա: Նրա թագավորության ժամանակաշրջանում Ասորեստանում էր Շամիրամը (աքքադերեն՝ Շամուրամաթ): Նա Ասորեստանի Շամշիադադ թագավորի կինն էր մինչև մ.թ.ա. 810 թվականը: Հետո եղավ Ասորեստանի թագուհի մ.թ.ա. 810 — 806 թվականներին: Այս շրջանում նա միաժամանակ իր որդու՝ Ադադներարի III-ի խնամակալն էր: Իսկ Ադադներարի III-ը մահացել է (կամ սպանվել) մ.թ.ա. 782 թ.: Շամիրամը մի քանի տարի ժամանակակից է եղել հայոց Իշպուհինիին, նաև մոտ 30 տարի ժամանակակից է եղել Մենուային: Այս թագավորի ինքնուրույն գահակալության բոլոր 24 տարիներին Շամիրամը ապրելիս է եղել: Իսկ Մենուայի որդի Արա-Արգիշտի I-ի թագավորության ժամանակ չգիտենք Շամիրամը ողջ էր, թե՝ ոչ: Եթե ողջ էլ եղած լիներ, ապա շատ կարճ ժամանակ, ծերացած տարիքում: Եվ հաստատ է, որ Արան ապրել ու թագավորել է շատ տարիներ Շամիրամից հետո:

Շամիրամի խնդիրը կարևոր է նրանով, որ Մար Աբաս Կատինա պատմիչը հայ ժողովրդի բերանից արձանագրել է հայոց Արա թագավորի և Ասորեստանի Շամիրամ թագուհու վերաբերյալ մի առասպելանման զրույց, իսկ Մովսես Խորենացին էլ Մար Աբասից է վերցրել այդ զրույցը և դրել է իր «Հայոց պատմության» առաջին գրքում իբրև իրողություն: Հնարավոր է, որ Խորենացին ինքն էլ այդ զրույցը լսած լինի ժողովրդից: Խորենացին պատմում է, որ Ասորեստանի թագուհի վավաշոտ Շամիրամը սիրահարվում է գեղեցկադեմ Արային և պատգամավորներ է ուղարկում նրա մոտ՝ խնդրելով, որ Արան գա Նինվե (Ասորեստանի նոր մայրաքաղաքը), ամուսնանա իր հետ և դառնա աշխարհակալ թագավոր: Երբ Արան մերժում է, Շամիրամը մեծ զորքով գալիս է Հայաստան: Ապա Խորենացին գրում է. «Զորքի ճակատը կազմելիս նա (Շամիրամը) իր զորապետներին պատվեր է տալիս՝ եթե դեպքը բերի, ջանալ կենդանի պահել Արային: Կռվի ժամանակ Արայի զորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից: Հաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ դիակների մեջ փնտրելու իր ցանկալի տարփածուին: Արային գտնում են մեռած քաջամարտիկների մեջ: Հրամայում է նրան տանել դնել ապարանքի վերնատանը: Երբ հայոց զորքը պատրաստվում էր նորից պատերազմելու Շամիրամ տիկնոջ դեմ՝ Արայի մահվան վրեժն առնելու համար, Շամիրամն ասում է. «Ես իմ աստվածներին հրամայեցի նրա վերքերը լիզել, և նա կկենդանանա»: Միևնույն ժամանակ նա հույս ուներ կախարդական դյութությամբ Արային կենդանացնել՝ տռփական ցանկությունից ցնորված: Բայց երբ դիակն սկսեց նեխել, հրամայեց գցել այն մի մեծ վիհի մեջ ու ծածկել»:

Այս զրույցը սոսկ բանահյուսական առասպել չէ. ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, նրա հիմքում դրված են Հայաստանում կատարված իրական դեպքեր: Միայն անհրաժեշտ է եղած վավերական արձանագրությունների օգնությամբ որոշել, թե ժողովրդական զրույցում որն է ստույգ իրողություն և որոնք են շատ դարերի ընթացքում կատարված շփոթություններ, լրացումներ ու դիցաբանական մտածողության արդյունք:

Ինչպես տեսանք, զրույցի մեջ հայոց Արա թագավորը և Ասորեստանի Շամիրամ թագուհին ժամանակակիցներ են, և Արան սպանվում է, իսկ Շամիրամը շարունակում է ապրել: Բայց, ինչպես ասվեց, ըստ աքքադական և նորխուռիական արձանագրությունների ստույգ է այն, որ Շամիրամի կյանքի 24 տարիները ընթացել են հայոց Մե-

Վան-Տոսպի ամրոցը

նրա թագավորի գահակալության 24 տարիների ընթացքում: Իսկ Մենուայի որդի Արայի (Արգիշտիի) թագավորության ժամանակ Շամիրամը կամ կենդանի չէր, կամ շատ ծերացած էր:

Ժողովրդի հիշողության մեջ հարյուրամյակների ընթացքում պատմական իրողությունները նկատելի փոփոխություն են կրել. զրույցում որդին փոխարինել է հորը, խառնվել են ժամանակները և իրական դեպքերն առասպելի տեսք են ստացել: Դրան խառնվել են նաև Միջագետքից եկած այլ զրույցներ: Մենուան մոռացվել է, նրա գործերի մի մասը վերագրվել է Արային ու Շամիրամին:

Մենուայի թողած շատ արձանագրություններ ստույգ վկայում են, որ Վանի Մեծ ջրանցքը փորել է տվել ինքը՝

Հայ իշխան՝ Գոմբարան,
թ. ա 8-ր դար (Երևան)

Իրեր՝ գտնված Գյումրիի մոտակայքից

Մենուան: Հիշենք՝ «Իեսե ինի պիլի ագուբի» — «Ես այս փորվածքը (ջրանցքը) անցկացրի»: Սրանք Մենուայի խոսքերն են, որոնք նույնությամբ կրկնված են նրա շատ արձանագրությունների մեջ: Վանի Մեծ ջրանցքը հետագա թագավորն անվանում է իր անունով՝ **Մենուայի ջրանցք**. «Հայկ աստծու հզորությամբ Մենուան, Իշպուհինիի որդին, այս ջրանցքը անցկացրեց: Նրա անունն է Մենուայի ջրանցք»:

Այդ ջրանցքը, որ այժմ էլ գոյություն ունի, սկիզբ է առնում Հայոց ձորի (Հայոց ձորի բերդերներից և ձգվում մոտ 80 կիլոմետր՝ 4 ու կես մետր լայնությամբ, մեկուկես մետր խորությամբ հասնում է մինչև Տոսպ (Վան) գյուղաքը: Ջրանցքը քաղաքին ջուր էր բերում և ոռոգում իր շրջակայքի դաշտերը:

Բայց հայ ժողովուրդը այդ ջրանցքը կոչել է Շամիրամի առու: Խորենացին էլ գրում է, որ Շամիրամն է այն փորել տվել: Այստեղ անպայման մի ճիշտ բան պետք է լինի: Պատահական չէ, որ Շամիրամը Մենուայի և ջրանցքի փորելու ժամանակակիցն էր: (Հիշենք, որ Շամիրամը հայտնի է նաև իր կառուցած կախովի այգիներով, որոնք աշխարհի 7 հրաշալիքներից մեկն են):

Մենուայի թագավորության ժամանակ, երբ Արարատի թագավորությունը և Ասորեստանը խաղաղ հարաբերությունների մեջ էին, հավանաբար, ասորեստանցիները մասնակցել են Վանի Մեծ ջրանցքի և որոշ շենքերի կառուցմանը, Շամիրամն էլ այդ ժամանակ հնարավոր է, որ Հայքում եղած լիներ:

Խորենացին պատմում է նաև հետևյալը. Արայի մահից հետո «Շամիրամը հրամայում է անմիջապես Ասորեստանից և իր իշխանության մյուս տեղերից փափագած տեղը բերել քառասուներկու հազար սևագործ բանվորներ և ընտրյալներից վեց հազար մասնագետ բանվորներ, որոնք կատարելապես հմուտ էին փայտի, քարի, պղնձի և երկաթի գործի արհեստներում... Եվ հրամայում է՝ նախ գետի ամբարտակը շինել ապառաժ խոշոր քարերով, կրի և ավազի շաղախով, շատ լայն ու բարձր, որ մինչև այժմ, ինչպես ասում են, հաստատ մնում է»: Ըստ Խորենացու, Շամիրամը Վան-Տոսպում ջրանցքի հետ միասին շքեղ պալատներ ու ապարանքներ է կառուցել: Այստեղ, անշուշտ, չափազանցություններ կան, գուցե հեքիաթի նման է, բայց Մենուայի օրոք ասորեստանցիները շատ հնարավոր է, որ օգնած լինեն հայերին:

Սեպագրերի ընթերցումը մեզ ասում է, որ Մենուան կարողացել է Ասորեստանի հետ բավական ժամանակ լավ հարաբերություններ պահպանել: Նրա երկարատև թագավորության ընթացքում միայն երկու փոքր ընդհարում է եղել ասորեստանյան և հայկական զորքերի միջև, այն էլ Վան-Տոսպից հեռու:

Հարավում խաղաղություն հաստատելով՝ Մենուան իր ուշադրությունը դարձրեց Մեծ Հայքի արևմտյան, միջին ու հյուսիս-արևմտյան մի շարք մասեր Արարատի պետության մեջ միավորելուն: Հայ ժողովրդի ամբողջ պատմությունից հայտնի է, որ Մեծ Հայքի նախարարությունները հաճախ են անջատվել հայոց կենտրոնական պետությունից: Իսկ այդ պետության ղեկավարները միշտ ձգտել են միավորել ու վերամիավորել անջատ իշխանությունները: Գիտենք նաև, որ այդ միավորումը երբեմն կատարվել է խաղաղ, անջատ իշխանությունները հնազանդվել են կենտրոնի թագավորին, իսկ երբեմն էլ այդ միավորումը կատարվել է արյունահեղ պատերազմներով, անասելի դաժանությամբ:

Մենուան էլ մերթ խաղաղությամբ, մերթ պատերազմներով իր կենտրոնական պետությանը միացրեց Մեծ Հայքի նորանոր շրջաններ: Այդ շրջաններից են Կարսից մինչև Սև ծով և Ճորոխ գետն ընկած տարածությունը, Տայքը, Արաքսի հովիտը, Սևանա լիճն իր շրջակայքով: Մենուան շարժվելով դեպի արևմուտք՝ հասավ մինչև Մեծ Հայքի ամենաարևմտյան երկրամասը՝ Ծոփք (արձանագրություններում՝ Ծուփանի), նույնիսկ դուրս եկավ Մեծ Հայքի սահմաններից և գրավեց Փոքր Հայքի Մալաթիա (Մելիտեա) քաղաքը: Հարավ-արևմուտքում նա նվաճեց Մեծ Հայքի հարավային ամենամեծ երկրամասը՝ Աղձնիքը (Ալզին): Հարավ-արևելքում մտավ Մանա երկիրը, որ գտնվում էր Մեծ Հայքից դուրս՝ Ուրմիա լճից դեպի հարավ-արևելք:

Ահա մի հատված Մենուայի այն արձանագրությունից, որտեղ պատմված է, թե ինչպես է ինքը վերջնականապես իր թագավորությանը միացրել Մեծ Հայքի Տայք կոչվող հյուսիս-արևմտյան աշխարհը (Տայքը Մենուայի սեպագրերում կոչվում է Դիաուխի): Հայոց Կարին (Էրզրում) քաղաքի մոտ գտնված այդ արձանագրության մեջ գրված է. «Հայկ աստվածը արշավի ելավ իր զենքով՝ Տայք հզոր աշխարհի դեմ: Հայկը հզոր է, Հայկ աստծու զենքը հզոր է: Հայկ աստծու հզորությամբ արշավի ելավ Իշպուհինիի որդի Մենուան, նրան առաջնորդում էր Հայկ աստվածը: Մենուան ասում է. ես նվաճեցի Տայք երկիրը, կռվով ես գրավեցի Շաշիու թագավորանիստ քաղաքը: Երկիրը այրեցի, ամրոցները քանդեցի... Մենուան ասում է. Տայքի թագավոր Ուտուպուրշինին հայտնվեց իմ առաջ, գրկեց

Ծառագուշակության պատկեր

Արդինիի հայկյան տաճարի պատերը
(ճակատային մաս)

[illegible]ում ոտքերը, երեսնիվայր ընկավ: Ես գթությամբ վերաբերվեցի, խնայեցի նրան՝ պայմանով, որ հարկերը վճար[illegible] Նա ինձ տվեց ոսկի և արծաթ, տուրք տվեց»:

Այսպես, Մենուան մի շարք ուրիշ հայ անջատ իշխանություններ էլ է ոսազասդեցնում և մեծառոգաբար ներում կենտրոնական թագավորությանը չհնազանդվողներին՝ նրանց հաղթելուց հետո:

Վանի Մեծ ջրանցքից բացի, Մենուան ուրիշ շատ շինարարություններ արեց: Արաքսի ափին նա կառուցեց իր անունով քաղաք:

Պետք է ենթադրել, որ Մենուան, լինելով քուրմ, զբաղվել է գուշակություններով: Խորենացին վկայում է, որ հնում Հայոց աշխարհում՝ սոսի ծառերի օգնությամբ գուշակություն են արել: Նա գրել է, որ սուսի «տերևները անդարտ կամ սաստիկ շարժումից՝ նայած քամու ուժին և ուղղությանը, մեր Հայոց աշխարհում սովոր էին գուշակություն անել երկար ժամանակ»: Գերմանացի հնագետ Պետեր Կալմայերն այն կարծիքն է հայտնել, որ Արարատի թագավորության ժամանակաշրջանից պահպանված մի շարք նկարների և բարձրաքանդակների մեջ պատկերված ծառերը և նիզակի ծայրի նմանվող տերևներն ու ճյուղերը Խորենացու հիշած գուշակությանն են վերաբերում: Տերևը եղել է Հայկ աստծու խորհրդանիշը[1]

Մենուան պետք է կատարած լինի այդպիսի գուշակություններ: Ընդհանրապես հայոց թագավորների մի մասը եղել է նաև քուրմ կամ քրմապետ: Դա երևում է սեպագրերի ուշադիր ընթերցումից:

Ըստ ժողովրդական զրույցների և նրանցից օգտված Մար Աբասի ու Խորենացու, ինքը, Շամիրամը, Ասորեստանյան զորքերի դեմ պատերազմելիս սպանվել է հայոց Արա թագավորը, որ Արա Առաջինն է: Բայց մենք կտեսնենք, որ Արան Մենուայի որդին էր և Շամիրամից հետո երկար ապրել է: [illegible] 786 թվականին: Ուրեմն, ոչ թե Արան, այլ Մենուան կարող է սպանված լինել Ասորեստանի զորքերի [illegible] խաղաղ տարիներից հետո պատերազմ է ծագել Հայքի և Ասորեստանի միջև, և հայոց թագավոր [illegible] է. Իսկ շատ հարյուրամյակներ հետո ժողովուրդն իր զրույցներում հոր սպանվելը վերագրել [illegible] ստեղծել գեղեցիկ առասպել

ԱՐԱ ԱՌԱՋԻՆԸ ԵՎ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Մովսես Խորենացին գրել է Արա անունով երկու թագավորների մասին: Սեպագրերում էլ Արգիշտի անունով երկու թագավորներ են հիշվում: Ըստ Խորենացու, Արա Առաջինը (Գեղեցիկը) հզոր թագավոր է եղել: Անկախ Խորենացուց, հայ ժողովուրդը դարեր շարունակ հիշել է Արա անունով իր թագավորին, նրա անունով շատ վայրեր [illegible] կոչել: Սեպագրերից իմանում ենք, որ Արգիշտի Առաջինն էլ շատ հզոր է եղել՝ Արարատի հայոց պետության թագավորներից ամենահզորը:

Մի քանի այլ փաստեր էլ վկայում են, որ հայկական աղբյուրներում Արա անունով երկու թագավոր[illegible] խուռիերեն և աքքադերեն արձանագրություններում հիշվող Արգիշտի անունով երկու թագավոր[illegible]

Այդ անունների վերլուծությունն էլ նույնն է վկայում:

Արա անվան արմատն է **Ար**-ը, **ա**-ն հայոց հին հոլովական վերջավորություն է: **Արգիշտի** անվան արմատն էլ՝ **Ար**-ն է, **գիշտ**-ը նորխուռիական ածանց է, **ի**-ն՝ վերջավորություն: Իսկ **Ար** արմատը Ինչպես գիտենք, բնիկ հայերեն **այր** բառից է ծագել և նշանակել է ուժեղ, տղամարդ, հայ: Հիշենք, որ **այր** բառից է գոյացել նախ **Այրարատ**, ապա **Արարատ** անունը: Եվ այդպես, **Արա** և **Արգիշտի** անունների մեջ միևնույն **Ար**-ն է, մնացածը վերջավորություն կամ

[1] Տես «Հին Արևելք» հ. 4, Երևան, 1983 (ռուսերեն), էջ 179—189.



Արարատի (Վանի) հայոց թագավորությունը մ. թ. ա. 9 — 7-րդ դարերում

ածանց են: Սա ևս օգնում է որոշելու, որ Խորենացու հիշատակած երկու Արա թագավորները սեպագրերում հիշված երկու Արգիշտի թագավորներն են: **Արգիշտի**-ն **Արա** անվան այլաձևությունն է, երևի նորխուռիերենի ազդեցությամբ գոյացած

Նորից հիշենք, որ Խորենացին ապրել է 5-րդ դարում, այսինքն Արա-Արգիշտի թագավորից մոտ 1300 տարի հետո: Այդ հարյուրամյակների ընթացքում եղած դեպքերի մասին հայ ժողովրդի մեջ շատ են պատմել, զրույցները բերնեբերան անցնելով Մար Աբասին և Խորենացուն հասել են դարձյալ փոփոխված: Եվ ահա այդ զրույցներում Արա II-ը դարձել է Արա I-ի որդին, թեև իրականում եղել է նրա ծոռը (թոռան որդին)·

Այս դեպքում ևս անկասկած է, որ ժողովրդի և Խորենացու հաղորդածները եղած դեպքերի արձագանք են: Եվ դարձյալ այդ դեպքերի ժամանակ գրված սեպագրերի օգնությամբ ամենը ճշտելով, այժմ գիտենք, որ Արա I-ը թագավորել է մ.թ.ա. 786 — 764 թվականներին, իսկ Շամիրամը ապրել է ամենաշատը մինչև մ.թ.ա. 782 թվականը:

Արա-Արգիշտի Առաջինի սաղավարտը

[illegible]ցե իր կյանքի վերջում ծերացած Շամիրամը իր որդու Ադադներարի III-ի զորքերի հետ կրկին եկած լինի Հայք, և Արա I-ը գուցե պատերազմած լինի նրանց դեմ: Դա քիչ հավանական է, այդ մասին սեպագրերն էլ ոչինչ չեն [illegible]ում, բայց ասում են, որ Արա I-ը առհասարակ շատ պատերազմներ է մղել Ասորեստանի դեմ:

[illegible]ի զորքերի դեմ պատերազմել է Ասորեստանի հզոր տուրտանը՝ նրանց սպարապետը, որի անունը եղել է Շամշիլու: Արդյոք ժողովրդի հիշողության մեջ նաև Շամշիլու ու Շամիրամ անուններն են նույնացվել, և ըստ ժողովրդական զրույցի, Արան Շամիրամի դեմ է պատերազմել:

Արարատի հայոց թագավորության բոլոր տիրակալներից Արա Առաջինը հայ ժողովրդի ամենասիրելին է եղել: Հայոց հին հեթանոսական տոմարի 6-րդ ամիսը կոչվում է Արայի անունով, Մեծ Հայքում մի շարք սարեր, դաշտավայրեր, բնակավայրեր հնուց ի վեր Արայի անունով են կոչվել: Օրինակ, հիշենք Արագած լեռը, որ իր բարձրությամբ Հայաստանում չորրորդն է եղել, այն հնում կոչվել է Արագահ (Արայի գահ), ապա ժողովրդի բերանում դարձել է Արագած: Կամ Արզնի բնակավայրը ժողովուրդը բացատրում է այսպես. Արան զննի և այլն:

Արա I-ը միավորելով գրեթե բոլոր հայկական անջատ իշխանությունները՝ առաջին անգամ ստեղծեց Մեծ Հայքի ամբողջական թագավորություն՝ նրա 300 հազար քառակուսի կիլոմետր տարածքով: Գուցե այս պատճառով է, որ նա միշտ մնաց հայ ժողովրդի հիշողության մեջ և նույնիսկ աստվածացվեց, ինչպես՝ Հայկը և Արամը:

Արան նախ իր զորքերով եղավ Մեծ Հայքի այն շրջաններում, որոնք նրա հայրը՝ Մենուան միավորել էր Վանի Արարատյան թագավորության մեջ: Շիրակով նա հասավ մինչև Տայք, հետո գնաց հարավ-արևելք, Ուրմիա լճի մոտակայքի հայկական շրջանները՝ Շատիրական: Եղավ անհանգիստ Ծոփքում, ապա Ուրմե (Արմե) և Շուբրիա կոչված գավառներում, որ Սասունն էր (Աղձնիքում): Ամենուրեք ամրապնդվեց Վանի Արարատյան թագավորության

Ցլապատկեր Էրեբունիից



Էրևան-Էրեբունիի մուտքը (ավերակ)

անությունը: Արան էլ էր դաժան վարվում այն հայ իշխանների ու կառավարիչների հետ, որոնք փորձում էին
ր գալ հայոց կենտրոնական պետության կազմից կամ դաշնակցում էին հակառակորդի հետ:
Տ ան հայ առաջնորդներին հնազանդեցնելու նպատակով Արա I-ը հայ բնակչության տեղափոխությունը էր անում՝ Մեծ Հայքի մի մասից՝ մյուսը: Մի տեղ Արան գրել է. «Հայկ աստծու հրամանով Արան, Մենուայի

որդին ասում է. Ես կառուցեցի Էրևան քաղաքը, Վանա երկրի հզորության և անհնազանդ երկրամասին սաստելու համար: Այստեղ ես մի հզոր գործ կատարեցի՝ Խաթե և Ծոփք երկրամասերից վեց հազար վեց հարյուր մարտիկներ բերեցի ու այստեղ բնակեցրի»: Այդպես, թագավորը հնազանդեցրել է հայոց Ծոփքը, որ ծայրամասային աշխարհ լինելով, հաճախ էր ձգտում անջատվել, և միաժամանակ նա մարդաշատ է դարձրել Էրևանն իր շրջակայքով:

Արա I-ի գործերի մասին մանրամասն պատմում է թագավորի թողած մեծ արձանագրությունը, որը փորագրված է Վանի մոտ գտնվող Խորխոռյան ժայռին և փաստորեն Արայի գործերի տարեգրությունն է:

Հիշատակված են նվաճված կամ Արարատի թագավորության մեջ վերամիավորված Մեծ Հայքի շատ երկրներ ու քաղաքներ, որոնց մի մասն այսօր ծանոթ է, իսկ մի մասն էլ անծանոթ, քանի որ ժամանակի ընթացքում շատ բնակավայրեր վերացել են, շատերի անունն է փոխվել կամ հայերեն անունը այլակերպված է արձանագրությունների մեջ: Հիշված անուններից այսօր ծանոթ են, օրինակ, Տարիունին, որ Բասենի Դարույնքն է, Գառնիանին, որ Գառնին է (Երևանի մոտ), Շատիրարագանին, որ Շատիրականն է (Ուրմիա լճի արևմտյան ափին), Աբիլիանին, որ հայոց Աբեղյանք գավառն է, Էրեբունին, որ Էրևանն է կամ Երևանը, Տուարածի հուբին, որ Տավարածի հովիտն է (Վանա լճից արևմուտք), ավելի ուշ՝ **Տավարածատափ** և այլն:

Էրեբունի-Էրևան բերդաքաղաքը Արան կառուցել է մ.թ.ա. 782 թվականին: Այժմյան Երևան անունը 5-րդ դարում հայերեն հնչել է Էրևան, ավելի վաղ՝ Էրեբան: Այն կազմված է բնիկ հայերեն **երեւ** (հնում՝ **էրեբ**) արմատից, որ նշանակում է երևալ, տեսնվել: **Էրեբունի** կամ **Էրևան** նշանակել է երևացող: Իրոք, բերդը բարձր բլուրի վրա է, շրջակայքից երևացող: Արան մ.թ.ա. 776 թ. Արաքս գետի ձախ ափին կառուցեց իր անունը կրող մի քաղաք, որ արձանագրություններում կոչվում է Արգիշտիխինիլի, իսկ ժողովուրդը կոչել է Արա-մայր: Այդ քաղաքը հետո հայտնի էր նաև Արմավիր անունով: Արա I-ը Արա-մայրը և Էրևանը դարձրեց վարչական կենտրոններ, որպեսզի հսկի Արարատյան դաշտի և շրջակա գավառների վրա: Արա-մայրը Արարատի թագավորության մայրաքաղաքն էր Վան-Տոսպից հետո, իսկ ապագայում պետք է դառնար գլխավոր մայրաքաղաք:

Արան իր թագավորության մեջ հաստատեց նաև Մեծ Հայքի արևելյան շրջանները: Օրինակ, Մենուայի ժամանակ հայոց Արցախը գտնվում էր Ասորեստանի թագավոր Ադադներարի III-ի իշխանության տակ: Նա այդտեղ իր պալատն ուներ: Արայի օրոք այդ շրջանը միավորվեց Արարատի թագավորությանը: Իր դիրքերը Մեծ Հայքի արևելյան կողմերում հաստատ պահելու համար Արա I-ը պատերազմներ վարեց Շատիրականում, ապա՝ Մեծ Հայքից հարավ-արևելք ընկած պետությունների դեմ:

Մ.թ.ա. 781-ից սկսած Արա I-ը շուրջ 5—6 տարի ահեղ պատերազմներ էր մղում Ասորեստանի դեմ: «Հայկ աստծու մեծությամբ ես արշավի ելա և ետ շպրտեցի Ասորեստանին», — գրել է Արա I-ը: Մի այլ տեղ՝ «Արան՝ Մենուայի որդին ասում է. Հայկը հզոր է, Հայկ աստծու զենքը հզոր է, Հայկ աստծու մեծությամբ ես արշավի ուղարկեցի, ետ շպրտեցի Ասորեստանին իմ երկրից»: Իմ երկիր ասելով Արան հասկանում էր Մեծ Հայքը:

Արա I-ը արձանագրություններում իրեն բնորոշել է այսպես. «Մենուայի որդի Արան՝ հզոր թագավորը, մեծ թագավորը, Վանա երկրի թագավորը, Տոսպի տիրակալը»: Արայից սարսափում էին Ասորեստանում: Ասորեստանի վերոհիշյալ Շամիշլու տուրտանը գրել է. «Հայ Արան, որի անունը սարսափելի է, ինչպես ծանր փոթորիկը, որի հզորությունը լայնարձակ է, որին նախկին թագավորներից ոչ մեկը չի հասնի».

Արա I-ի ժամանակ Սյունիքն էլ էր մտնում Արարատի թագավորության մեջ: Տարիներ հետո Սյունիքում տեղի իշխանները փորձել էին անջատվել Արարատից, և նրանց ապստամբությունը ճնշել է Արա I-ի ծոռը՝ Արա II-ը

Էրևան-Էրեբունիի ավերակներում ▶

Դա իմանում ենք վերջերս Սիսիանում գտնված մի սեպագիր արձանագրությունից: Մեծ Հայքի արևելյան կողմերից Ուտիքը, Փայտակարանը, այսինքն՝ մինչև Կասպից ծով նույնպես գտնվել են Արարատի թագավորության կազմում: Արայից մոտ 90 տարի հետո հայոց Ռուշա II թագավորը այդ երկրամասում, մինչև Կասպից ծով կարգ էր հաստատում: Արան նվաճեց նաև Մեծ Հայքից դուրս գտնվող մի քանի շրջակա երկրներ՝ Միջագետքի հյուսիսային շրջանները, Ասորիքը (Սիրիան), Մանան և այլն, բայց դրանք չհամարեց իր երկրի բաղադրյալ մասերը:

Արա I-ի 22 տարվա թագավորության օրոք Արարատի հայոց թագավորությունը դարձավ Հարավ-արևմտյան Ասիայի ամենահզոր երկիրը: Այդքան մեծ ու զորեղ Հայքը երբևէ չէր եղել: Եվ մեկ էլ այդպես հզորանալու էր Տիգրան Մեծի ժամանակներում

ԱՐԱ ԱՌԱՋԻՆԻՑ ՀԵՏՈ

Արա I-ից հետո նրա որդին՝ Սարդուր II-ը և թոռը՝ Ռուշա (Հռոշա) I-ը մեծ ջանքեր էին գործադրում հայոց միացյալ թագավորությունը պահպանելու համար, դա նրանց բավական հաջողվում էր:

Սարդուր II-ը թագավորել է մ.թ.ա. 764—735 թվականներին: Նրա թագավորության ժամանակ Մենուայի և Արայի կողմից հնազանդեցված հայ իշխաններից մի քանիսը և թագավորի մի քանի կառավարիչներ ապստամբեցին: Հայոց թագավորը ճնշեց այդ ապստամբությունները, և իշխաններն ու կառավարիչները թագավորությանը տալիք տուրքերը վճարեցին ու հնազանդություն հայտնեցին:

Սարդուր II-ն իր զորքով շրջագայություն էր անում Հայքի այն մասերում, որոնցում տեղի ղեկավարները փորձում էին անհնազանդ լինել: Նա շարժվելով դեպի Արևմուտք՝ հասավ Ծոփք, ապա մինչև Փոքր Հայքի Մալաթիա (Մելիտեա) քաղաքը և ավերեց այն: Մալաթիայի տիրակալը միանձնյա թագավոր լինելու հակումներ ուներ, նա նաև դրդում էր հարևան Ծոփքի իշխաններին անջատվել Վանի Արարատյան թագավորությունից: Սարդուրը հնազանդեցրեց այդ վայրերը, բայց հանցավորներին ներեց: Նա գնաց նաև Սասուն (Ուրմե, Շուբրիա), խաղաղեցրեց այնտեղի անհանգիստ հայ իշխաններին, ապա իր իշխանությունն ամրապնդեց Շիրակում, Աբեղյանքում և Ուրմիա լճի մոտ եղած հայկական բնակավայրերում: Նվաճեց Պուլուադի երկիրն Ատրպատականում: Շարժվելով դեպի հյուսիս, Սարդուրը Տայքով հասավ Կողքիս (Կոլխիդա) երկրին, որը Սև ծովի ափին էր: Գրավեց նաև այդ երկիրը:

Ապա՝ Սարդուր II-ն արշավեց դեպի Միջագետք ու հասավ մինչև երկու գետերի՝ Տիգրիսի ու Եփրատի հովիտները, այսինքն՝ մտավ բուն Ասորեստանի սահմաններից ներս

Արա I-ի հաստատած միացյալ պետությունը նրա որդին ոչ միայն ամրապնդեց, այլև ընդլայնեց:

Բայց այդ ժամանակներում Ասորեստանում իշխող Թիգլաթպալասար III թագավորը, որ վերականգնել էր իր երկրի վաղեմի հզորությունը, մ.թ.ա. 743 թվականին ճակատամարտ տվեց Սարդուր II-ի զորքերի դեմ: Թեև հայ թագավորի զորքերի կազմում կային նաև դաշնակից որոշ երկրների զորաբաժիններ, բայց հայկական բանակները չկարողացան ընկճել ասորեստանյան նորակազմ զորքի դիմադրությունը: Կումմախա երկրում (Ծոփքից հարավ) հայկական զորքերը պարտվեցին, Սարդուր II-ը փախչելով փրկվեց: Թիգլաթպալասարը գրել է. «Սարդուրն իր կյանքը փրկելու համար գիշերով փախավ... Ես նրան հետապնդեցի մինչև Եփրատի կամուրջը, նրա երկրի սահմանը: Իմ ձեռքն անցան նրա թագավորական դեսպակը (շքեղ պատգարակը), կնիքը, որը նա կրում էր իր վզին մատանիների հետ, նրա արքայական մարտակառքը, ձիեր, ջորիներ, անհամար զինվորներ, նրանց մարտակառ-

[illegible]. Թիգլաթպալասարը գրել է նաև. «Ես լեռնա-[illegible]ին [illegible]որերը լցրեցի նրանց դիակներով... ես իմ ձեռքը վերցրի 72 հազար 950 մարդ, իրենց ունեցվածքով»:

Թեև դարձյալ ծանոթ գոռոզ ոճն է՝ մեծ չափազանցումներով, բայց պարզ է, որ Ասորեստանի դեմ Արա II-ի տարած բազմաթիվ փայլուն հաղթանակներից հետո այս անգամ, նրա որդու օրոք, հայերը պարտվել էին:

Հայոց թագավորը պատսպարվեց Վան-Տոսպի իր ամրոցում: Թիգլաթպալասարը գալով, պաշարեց քաղաքը, բայց չկարողացավ գրավել: Նա կողոպտեց շրջակա վայրերը, արշավեց դեպի Արարատի թագավորության այլ գավառներ: Այսպիսի պարտություն հայերը վաղուց չէին կրել:

Բայց սա ժամանակավոր պարտություն էր: Սարդուր II-ը վերակառուցում է ավերված վայրերը, նոր զորաբանակ կազմում: Ասորեստանը ստիպված է լինում նոր արշավ կատարել Հայքի դեմ. դա մ.թ.ա. 735 թվականն էր: Ճակատամարտերից մեկում հայոց թագավորը զոհվեց:

Նույն թվականին գահ բարձրացավ Սարդուր II-ի որդի Ռուշա (Հռոշա) I-ը: Նա նախ ուժեղացրեց բանակը, գավառների մի շարք կառավարիչների, որոնց կասկածում էր դավաճանության մեջ, փոխարինեց հավատարիմ մարդկանցով: Իր իշխանությունը ամրապնդեց Ծոփքում ու Փայտակարանում: Կասպից ծովի արևելյան ափի մի մասը դարձավ Արարատի թագավորության հենակետերից մեկը:

Ռուշա I-ը ամեն կերպ աշխատում է լավ հարաբերություններ պահպանել իր հարավային հարևանի՝ Ասորեստանի հետ, որը գնալով ավելի ու ավելի էր հզորանում: Դա Ռուշային ինչ-որ ժամանակ հաջողվում է: Խաղաղ տարիները հայոց թագավորն օգտագործեց շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Նա նոր տաճարներ կառուցեց հայերի պաշտամունքային կենտրոնում՝ Արդինիում, ամրոցներ կառուցեց Սևանա լճի ափերին:

Ռուշա I-ը նույնպես քուրմ էր: Նա շատ մարդկանց հետ մեծ ուխտագնացություն էր կատարում դե-

Թեշիբ աստծու արձանիկը (Կարմիր Բլուր)

Սարդուր 2 րդր սաղավարտը

Դրվագում սաղավարտի վրա
(Արարատի թագավորություն)

Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի զոհասեղանից այծը ձեռքին (Սարգոն II-ի Կ[illegible]ի բարձրաքանդակներից

պի Արդինի, Հայկի տաճարը: Զոհեր էր մատուցում, հանդեսներ կազմակերպում, տեղի ժողովրդի համար մեծ հյուրասիրություններ անում: Այս ամենի մասին Ռուշան փորագրել է տալիս ասուրաբաբելերեն և նորխուռիերեն երկլեզվյան մի մեծ արձանագրություն (գտնվում է Թոփուզավա կոչված վայրում):

Արարատի հայոց թագավորության հզորությունը սկսում է վերականգնվել: Սակայն շուտով վրա է հասնում մի նոր աղետ:

Մ.թ.ա. 722 թ. Ասորեստանում գահ բարձրացավ Սարգոն II-ը, որ եղավ ահեղ ու դաժան թագավոր: Նա նախ իր լրտեսներով լցրեց Հայքը: Նրա այդ լրտեսները իրենց նամակներով թագավորին հաղորդում էին Արարատի թագավորության մեջ տեղի ունեցող դեպքերը: Նրանք զանազան ձևերով համոզում էին Արարատի թագավորության կառավարիչներին դավաճանել ու անցնել Ասորեստանի կողմը:

Ռուշան հակամիջոցներ է ձեռնարկում: Մի շարք դավաճանների բռնում է, նրանց փոխարեն հավատարիմ մարդկանց նշանակում, ամրացնում է բանակը

Մ.թ.ա. 714 թվականին, Ռուշա I-ի թագավորության նախավերջին տարում, Սարգոն II-ը հսկայական զորքով արշավեց Վանի Արարատյան թագավորության վրա: Ասորեստանցիները Հայք մտան և ասպատակեցին երկրի մի շարք գավառներ, ավերեցին շատ բնակավայրեր, մեծ կողոպուտ տարան Ասորեստան: Դա պարզապես կողոպտիչ արշավանք էր:

Սարգոն II-ի թողած սեպագիր արձանագրություններից իմանում ենք, որ նա կողոպտել է նաև Արդինիում գտնվող Հայկի տաճարը և Ասորեստան է տարել տաճարի ոսկյա, արծաթյա, փղոսկրյա իրերը, Մենուա, Արա և Ռուշա թագավորների արձանները:

Ռուշի արձանիկ (Արարատի թագավորություն)

Սարգոն II-ը Ասորեստանի իր պալատի սրահներում, պատերի վրա բարձրաքանդակներ փակցնել տվեց: Նրանցում պատկերված են Սարգոնի արշավանքները Հայքում: Բարձրաքանդակներից մեկում պատկերված է Արդինիի Հայկ աստծու տաճարի կողոպուտը: Այդ պատկերն այսօր մեզ ներկայացնում է այն հին ժամանակների հայկական ճարտարապետության մի հրաշալի նմուշ: Քարից կառուցված տաճարը սյունազարդ է, սյուների վրա է եռանկյունի ճակտոնը, որի գագաթին Հայկի խորհրդանիշն է՝ նիզակաձև տերևը, որպիսիք կան նաև մուտքի երկու կողմում:

Արդինին կողոպտելով Սարգոն II-ն այն կցեց Ասորեստանին: Սա մեծ հարված էր հայերի և հայոց թագավոր Ռուշա I-ի համար: Բռնագրավվել էր հայոց սրբավայրը: Եվ ըստ Սարգոնի թողած սեպագրերի, Ռուշան չդիմանալով մեծ կորստին՝ վշտից ինքնասպան է եղել:

Արարատի թագավորության այս պարտությունը ևս ժամանակավոր էր: Մ.թ.ա. 713 թվականին գահ բարձրացավ Արա II-ը, որը նորից ամրապնդեց Արարատի հայոց թագավորության դիրքերը:

ԱՐԱ ԵՐԿՐՈՐԴ, ԹԱԳԱՎՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Ասորեստանի թագավոր Սարգոն II-ն իր տարեգրության մեջ և թողած այլ արձանագրություններում այնպես է նկարագրում մ.թ.ա. 714 թ. իր կատարած արշավանքը դեպի Հայք, որ այսօրվա կարդացողին կթվա, թե հայոց երկրում Սարգոնն ամեն ինչ ավերել է, ոչինչ չի թողել: Բայց փաստերը բոլորովին այլ բան են ասում. Արարատի հայոց թագավորությունը մնում էր ու դեռ շարունակում ծաղկել: Ուրեմն, Ասորեստանի թագավորների սովորության համաձայն Սարգոնը ինքնագովությամբ է զբաղվել, չափազանցություններ է գրել տվել իր փորագրիչներին: Ըստ Սարգոնի արձանագրությունների, նա ամենից մեծ ավերածությունները գործել է Վանա լճի հարավային և արևելյան մասերի հայկական հոծ շրջաններում՝ Հայոց տուն (Հայոց ձոր) և այլ վայրերում: Սակայն Սարգոնի հեռանալուց հետո այդ շրջանները, ինչպես և թագավորության մյուս մասերը, որ ասորեստանցիների արշավանքի ուղու վրա էին, բնականոն կյանք էին վարում: Հավանաբար, Սարգոնը ուժեղ հակահարվածներ է ստացել հայոց բանակների կողմից հենց Վանա լճի շրջակայքում, բայց այդ մասին նա լռություն է պահպանել:

Մ.թ.ա. 713 թվականին Վան-Տոսպում գահ բարձրացած Արա II-ը Ռուշա I-ի որդին էր: Նա թագավորեց 28 տարի, մինչև մ.թ.ա. 685 թ.: Այդ տարիները շատ օգտակար ու նպաստավոր էին Արարատի թագավորության համար: Սարգոն II-ը, որ դեռ թագավորում էր Ասորեստանում, այլևս չէր համարձակվում հարձակվել Հայաստանի վրա, մանավանդ չէր փորձում նորից արշավել դեպի երկրի խորքը: Նրա զորավարները մի երկու մանր արշավանք են կատարում դեպի Արարատի թագավորության ծայրամասերը: Նրանք պատերազմում են Ծոփքից հարավ, Եփրատի ափին գտնվող վերոհիշյալ Կումմախա երկրի (հետագայում Կոմմագենե) դեմ, որը չէր ուզում ճանաչել Ասորեստանի գերիշխանությունը: Արա II-ի օգնությամբ Կումմախան հետ է շպրտում Սարգոնի զորքերը: Կումմախայից տարբեր է հայոց Կեմախ քաղաքը, որը մտնում էր Թորգոմի տուն կամ Թորհիգամա կոչված հին հայկական մարզի մեջ: Այս մարզը նույնպես Եփրատի ափին էր, բայց ավելի հյուսիս: Դա Վանի Արարատյան թագավորության անբաժան մասն էր դարձել:

Արա II-ն ամեն ինչ անում էր, որ Սարգոնի կողոպտիչ արշավանքի նման մի նոր աղետ չգա Հայքի գլխին: Նա իր թագավորության արևմտյան շրջանները բավական ամրացրեց ընդդեմ Ասորեստանի հնարավոր հարձակման: Այդ շրջաններից էր նաև Ծոփքը, որ, ինչպես նախորդ զրույցներից գիտենք, Մեծ Հայքի անհանգիստ ծայրամասն էր: Հիշենք, որ Արա I-ը այդ աշխարհը հնազանդ պահելու համար տեղական տիրակալի զորքից և բնակչությունից շատերին փոխադրեց նորակառույց Էրևանի շրջակայքը: Ծոփքի հայ տիրակալները երբեմն հակվում էին



Ծառագուշակություն որմնանկար Արա II ի կառուցած բերդաքաղաքից (երզնկայից արևելք)

դեմ Ասորեստանի օգնությունը: Բայց Արա II-ի օրոք, նրա խելացի քաղաքականության շնորհիվ Ծոփքը մնաց որ հա[illegible]ատարիմ հայոց մեծ թագավորին՝ որպեն Արարատի թագավորության անբաժան մաս: Արայի հատուկ զորաբա[illegible]ները հսկում էին թագավորության այդ հարավ-արևմտյան աշխարհի անվտանգությանը: Արան քաղաքից [illegible]աղաք պահակային ծառայություն էր կարգել՝ մինչև Վան-Տոսպ: Նա Ծոփքից քիչ հյուսիս, երզնկա քաղաքի մոտ [illegible]առուցեց մեծ բերդաքաղաք, որպես այդ կողմերի կենտրոն: Հետաքրքրական է, որ այդ քաղաքը անհայտ պատ[illegible]սռով մարդազուրկ դառնալուց հետո, մոտ 2600 տարի մնացել էր հողի տակ և պահպանվել: Վերջին տասնամ[illegible]յակներում օտարերկրյա հնագետները հայտնաբերեցին հայոց այդ բերդաքաղաքը և հողի տակից հայկական արվեստի հրաշալի նմուշներ հանեցին:

Արա II-ը, իրոք, հմուտ քաղաքականագետ էր: Նա կարողանում է նաև Ասորեստանի հետ խաղաղություն պահ[illegible]պ[illegible]ել, նույնիսկ լավ հարաբերություններ ստեղծել: Թե Սարգոն II-ը և թե նրան փոխարինած Սենեքերիմը (Սինա[illegible]բ), որ նույնպես հզոր թագավոր էր (մ.թ.ա. 705—681 թթ.), մեծ մասամբ լավ հարաբերություն էին պահպանում հայերի հետ: Ճիշտ է, Ասորեստանի լրտեսները դարձյալ գործում էին Արարատի թագավորության սահմանամերձ շրջաններում, բայց հայերն էլ իրենց հերթին լրտեսներ էին ուղարկում Ասորեստանի իշխանության տակ գտնվող շրջանները: Սա փոխադարձ հետախուզություն էր:

[illegible]ասկերագրդ պ[illegible]ություն հայոց

Եփրատ

Ասորեստանի հետ կնքված խաղաղությունը Արա II-ն օգտագործում էր իր թագավորությունն ավելի ամրապնդելու համար: Մենք տեսանք, որ նա պետության արևմուտքում ամրացրեց մի քանի մարզեր, նաև՝ Թորգոմաս (Կեմախը), Ծոփքը: Թագավորության կենտրոնական և արևելյան որոշ վայրերում էլ հայ իշխանները փորձեր էին արել անջատվել Արա II-ի թագավորությունից: Ինչպես գիտենք, այդպիսի փորձ էին արել Սյունիքում: Արա II-ը զորքով գնաց Սյունիք և մասամբ պատերազմով, մասամբ դիվանագիտությամբ հնազանդեցրեց տեղի հայ տիրակալներին: Այդ մասին Արան մեծ արձանագրություն գրել տվեց:

Ապա՝ Արա II-ն իր զորքով հայտնվեց Մեծ Հայքի ամենաարևելյան շրջաններում, որ Կասպից ծովի ափերն էին, և հնազանդեցրեց նաև այստեղի տիրակալներին, որոնք փորձում էին Մարաստանի օգնությամբ անջատվել Արարատի թագավորությունից:

Արա II-ը մի քանի ուրիշ բերդաքաղաքներ էլ կառուցեց, շատ ջրանցքներ փորել տվեց՝ հատկապես Վանա լճի շրջակայքում: Նա անմշակ, խոպան շատ հողեր մշակելի դարձրեց, պտղատու, այդ թվում խաղողի մեծ այգիներ գցել տվեց:

Արա II-ը կարողացավ Վանի Արարատյան թագավորությունը պահպանել այնպես, ինչպես ժառանգություն էր ստացել իր հորից ու մեծ պապից: Որպես զորավար նա թեև հզոր էր, բայց ոչ այնքան, որքան իր մեծ պապը՝ Արա I-ը: Սակայն նա հմուտ դիվանագետ էր, խորամանկ և կարողացավ այնպես թագավորել, որ 28 տարվա ընթացքում Հայքը Ասորեստանի հետ ոչ մի լուրջ պատերազմ չունեցավ: Դրանք հիմնականում խաղաղ տարիներ էին հայերի համար:

Արա II-ն իր մասին այսպես է գրել մի արձանագրության մեջ, որը նվիրված է Արճեշ քաղաքի մոտ (Վանա լճի արևմուտքում) ջրանցք կառուցելուն. «Արան՝ Ռուշայի որդին ասում է. թող այս ջրանցքը ոռոգիչ լինի այս քաղաքների համար... Հայկ աստծու մեծությամբ Արան, Ռուշայի որդին՝ հզոր թագավորը, Վանա երկրի թագավորը, Հայկ աստծու ծառան, ժողովրդի նվիրված հովիվը, որ Հայկ աստծու մեծությամբ չէր վախենում ճակատամարտից»:

Այո՛, Արա II-ը ճակատամարտից ու պատերազմից չէր վախենում, բայց ամեն կերպ աշխատում էր, որ պատերազմ չլինի:

Ասորեստանի և Արարատի միջև պահպանվող շատ տարիների խաղաղությունը մի այլ պատճառ էլ ուներ, դա այն էր, որ Ասորեստանից՝ արևելք և Արարատի թագավորությունից հարավ-արևելք մի նոր պետություն էր հզորացել, որը հատկապես վտանգավոր էր թե՛ Ասորեստանի, թե՛ Արարատի համար: Դա Մարաստանն էր, մարերի երկիրը, որ օտար ձևով կոչվում է Մեդիա:

Հիշենք, որ մարերի դեմ դեռևս պատերազմել էր Արամը և հաղթել: Բայց դրանից հետո մարերը (մեդացիները) լավ էին հզորացել: Նրանց միացել էին նաև սկյութների աննկուն ռազմիկները: Իսկ Մարաստանից հարավ գտնվում էր Պարսան՝ պարսիկների նախնական երկիրը: Պետք է իմանալ, որ մարերը, սկյութները, պարսիկները թեև երբեմն թշնամանում էին միմյանց դեմ, բայց երեքն էլ իրանյան ժողովուրդներ էին, լեզվով իրար շատ մոտ: Սա պետք է իմանալ, քանի որ շուտով նրանց դերը մեծանալու էր հին Հարավ-արևմտյան Ասիայում:

ՌՈՒՇԱ ԵՐԿՐՈՐԴ

Արա II-ի որդին իր պապի անունն էր կրում՝ Ռուշա, դա Ռուշա II-ն էր: Ասորեստանի արձանագրություններից մեկի մեջ նա կոչվում է նաև Հայա, այստեղ աքքադացիների համար այն ժամանակ հայերին տրվող **ուրարտայա** անվանման փոխարեն, ինչ-որ պատճառով մտել է հայերի ինքնանվանումը՝ հայ:

Քաղաքականության տեսակետից Ռուշա II-ը հետևեց հորը՝ Արա II-ին, այն է՝ լավ հարաբերություններ պահպանել Ասորեստանի հետ: Ռուշան շատ երկար թագավորեց՝ 40 տարի (մ.թ.ա. 685—645 թթ.): Եվ այդ տարիների ընթացքում Հայքը Ասորեստանի հետ ոչ մի անգամ չպատերազմեց: Արարատի թագավորության պատմության մեջ այսպիսի բան չէր եղել:

Ռուշա II-ի թագավորության տարիներին Ասորեստանում երեք թագավոր փոխվեց, և երեքի հետ էլ Ռուշան լավ հարաբերություններ էր պահպանում: Նրանք հայոց թագավորին եղբայր էին անվանում, հայոց թագավորն էլ նրանց:

Հիշենք. մ.թ.ա. 681 թ. Ասորեստանի մայրաքաղաք Նինվեում Սենեքերիմ թագավորին սպանեցին նրա որդիները՝ Ադրամելիքն ու Սարասարը: Մենք արդեն գիտենք, որ Աստվածաշնչում թագավորների IV գիրքը պատմում է, թե ինչպես դավադիր եղբայրները իրենց հորը թրով սպանեցին և փախան ու փրկվեցին Արարատի երկրում և, որ

Արարատի թագավորության
շրջանի կարաս (Կարմիր բլուրից)

Թասեր Կարմիր բլուրից ▶

ըստ հայոց դյուցազներգության՝ «Սասունցի Դավթի», առաջին մասի, որ կոչվում է «Սանասար և Բաղդասար», հայրասպան եղբայրները փախել են Մեծ Հայքի հարավային շրջանը՝ Սասուն: Լեռնային Սասունն Ասորեստանին շատ մոտ էր և փախստական եղբայրների համար թաքնվելու հարմար վայր:

Սակայն Սենեքերիմի դեմ, բացի նրա երկու որդիներից, ապստամբել էին նաև ուրիշ մեծամեծեր: Երբ նրանք պարտվեցին, նույնպես փախան Սասուն: Սրանց հետ Սասուն եկան նաև Ասորեստանի ուրիշ շատ բնակիչներ, որոնք երևի ինչ-որ վախ ունեին նոր թագավորից:

Իսկ նոր թագավորը Սենեքերիմի մյուս որդին էր՝ Ասարհադդոնը՝ հայրասպան Ադրամելիքի և Սարասարի հարազատ եղբայրը: Նա կռվեց ու հաղթեց հոր բոլոր թշնամիներին և գահ բարձրացավ մ. թ. ա. 680 թ. (իշխեց մինչև մ. թ. ա. 669 թ.):

Հայոց թագավոր Ռուշա II-ը բարեկամական ջերմ հարաբերությունների մեջ էր նաև Ասորեստանի նորընծա այս թագավորի՝ Ասարհադդոն -ի հետ: Հայոց թագավորը Սենեքերիմի սպանողներին ու նրա թշնամիներին հակառակորդ էր: Սեպագիր արձանագրությունները կարդալիս, նկատում ենք, որ Արարատի թագավորությունում հայ իշխանների ու մյուս մեծամեծների մի մասը, հակառակ Ռուշա II-ի, դեմ է եղել Սենեքերիմին, պաշտպանել է հայրասպան եղբայրներին և Ասորեստանի այդ թագավորի մյուս թշնամիներին: Երբ Ասարհադդոնը հաղթեց իր հոր հակառակորդներին, դա նաև Ռուշայի հաղթանակն էր Հայքում: Եվ ահա Արարատի թագավորության տարբեր մասերից Ռուշայի հակառակորդները նույնպես փախան Սասուն:

Ձիու գլխի բրոնզյա քանդակ (Թեշիբայինի բերդաքաղաքից)

Կավե աման Արարատի թագավորության ժամանակների ►

Ասորեստանի սեպագիր արձանագրություններում Սասունը կոչվում է Շուբրիա: Այդ արձանագրությունները մեզ պատմում են, թե ինչպես Նինվեից Ասարհադդոնը և Վան-Տոսպից Ռուշան նամակներ էին գրում Սասուն-Շուբրիայի տիրակալին՝ պահանջելով վերադարձնել թե՛ ասորեստանյան, թե՛ արարատյան փախստականներին: Բայց Ցայունի տիրակալն անընդհատ մերժում էր:

Սասունը Մեծ Հայքի հարավային Աղձնիք աշխարհում է և Արարատի հայոց թագավորության մի մասը: Բայց ահա, երբ Ասորեստանից և Արարատի թագավորությունից այնտեղ հավաքվեցին Ասարհադդոնի և Ռուշայի հակառակորդները, Սասունն այլևս չէր ենթարկվում հայոց թագավորին: Իսկ Ռուշան և Ասարհադդոնը վախենում էին Սասունում հավաքված իրենց թշնամիներից, որոնք կարող էին զորքեր հավաքել և հարձակվել Նինվեի ու Վան-

Տոսպի վրա: Վախը նաև այն պատճառն ուներ, որ Սասունում հավաքված հակառակորդները գաղտնի բանակցում էին մարերի և սկյութների հետ: Նրանք ուզում էին մարերի և սկյութների օգնությամբ տապալել Ասորեստանի ու Հայոց թագավորներին ու երկու տեղում էլ գրավել իշխանությունը:

Ռուշայի հետ պայմանավորվելով՝ Ասարհադդոնը մեծ զորքով հարձակվեց Սասունի վրա, գրավեց այն և իր երկրի փախստականներին ոմանց սպանեց, ոմանց վերադարձրեց Ասորեստան: Հայ փախստականներին էլ նա հանձնեց իր բարեկամ Ռուշա II-ին: Այդպես էլ վերացվեց Սասունում կազմակերպված դավադրությունը:

Ռուշայի և Ասարհադդոնի հարաբերություններն ավելի ջերմացան

Ասորեստանի հետ իր կնքած բարեկամությունից օգտվելով՝ Ռուշա II-ը մի քանի արշավանք կատարեց դեպի արևմուտք: Հիշենք, որ Արամն էլ արշավեց մինչև Փոքր Ասիայի խորքերը: Ռուշան Եփրատից արևմուտք ջախջախեց փռյուգիացիների (մուշկերի) բանակը, գրավեց Փոքր Հայքը:

Այդպես, Ռուշա II-ը դեպի արևմուտք ընդարձակեց Արարատի թագավորությունը. այն դուրս եկավ Մեծ Հայքի սահմաններից և իր մեջ ընդգրկեց նաև Փոքր Հայքն ու սրան կից շրջանները:

Ռուշա II-ը նաև մեծ շինարար էր: Վանա լճի ափին, Արծկե քաղաքի մոտ նա կառուցեց Հայկ աստծու անունը կրող բերդաքաղաքը, իսկ Հրազդան գետի ափին, Երևան-Էրեբունիից ոչ հեռու կառուցեց ռազմի աստված Թեշիբի (Թեյշեբայի) անունը կրող բերդաքաղաք՝ Թեշիբայինի: Այն ժամանակ Հրազդանը կոչվում էր Իլդարունի: Ահա, Ռուշայի կարգադրությամբ նոր բերդաքաղաքի դիմաց, գետի հակառակ ափին ջրանցք անցկացրին, հետո մի քանի կիլոմետր ական փորեցին դիմացի քարաժայռի մեջ, և ջրանցքը անցնում էր գետնի տակով: Իսկ շրջակայքում Ռուշայի կարգադրությամբ խոպան հողերը մշակում էին, բազմաթիվ ծառեր տնկում, խաղողի մեծ այգիներ գցում:

Այսօր էլ ցանկացողը կարող է գնալ Երևանի արվարձան Չարբախը, բարձրանալ Կարմիր բլուր: Դա հենց Թեշիբի հզոր քաղաքի մնացորդն է: Եթե այդ բլուրից նայեք Հրազդանի մյուս ափին, կտեսնեք Ռուշայի անցկացրած ջրանցքը, որ Հրազդանից դուրս գալով՝ քիչ անց մտնում է գետնի տակ:

Թեշիբայինին դարձավ կարևոր կենտրոն՝ նրանում հսկա կարասների մեջ պահում էին գինի, հացահատիկ, կային նաև այլ մթերքների պահեստներ: Այդտեղ կային նաև ձեթ ու գարեջուր պատրաստելու արհեստանոցներ: Հնագետներն այդտեղ գտել են կավե զանազան ամաններ, բրոնզյա գավաթներ, զենքեր, վահաններ, սաղավարտներ, սեպագիր արձանագրություններ, նաև կովի կարծրացած ստամոքս, սևացած ցորեն, խաղողի կորիզներ և այլ (ափսոս միայն, որ հին դարերից եկած այդ բոլոր իրերը հանելուց հետո հնագետները հրաշալի բերդաքաղաքն անտերունչ թողեցին): Իսկ Զվարթնոցի թանգարանում պահվում է Ռուշա II ի մեծ ու գեղեցիկ արձանագրությունը այգիներ գցելու և բերդաքաղաքը կառուցելու մասին: Նրանում կարդում ենք. «Այս հովտի հողն անմշակ էր, այն տեղ ոչինչ չկար: Ինչպես որ Հայկ աստվածն ինձ կարգադրեց, այդպես էլ ես այս խաղողի այգին տնկեցի, հրամայեցի դաշտերը մշակել, մրգատու այգիներ գցել և սկսեցի քաղաքի կառուցումը: Իլդարունի գետից ջրանցք անցկացրի... Ռուշա թագավորի այս հովտում եթե մեկն ուզենա ջրանցքի ջրով մի բան ջրել, թող մի ուլ մորթի հանի Հայկ աստծո, մի ոչխար զոհաբերի Թեշիբ աստծուն, մի ոչխար էլ Շիվա աստծուն: Ռուշան եմ, Արայի որդին, հզոր թագավորը, մեծ թագավորը, աշխարհի թագավորը, Վանա երկրի թագավորը, թագավորների թագավորը, Տոսպ քաղաքի տիրակալը»:

Ռուշա II հայոց թագավորը Արարատի հզոր տիրակալներից վերջինն էր

Ինչպես տեսանք, նրա ժամանակ Հայքում մեծամեծների և իշխանների մեջ երկու խմբավորում կար. մեկը հավատարիմ էր թագավորին և կողմնակից էր Ասորեստանի հետ բարեկամության պահպանմանը: Մյուս խմբավորումը գաղտնի դաշնակցել էր Մարաստանի հետ և ուզում էր մարերի ու սկյութների օգնությամբ իշխանությունը գրավել: Ռուշա II-ը հաղթեց [illegible]ներին բայց նրա մահից հետո մարերի կողմնակիցները ուժեղացան, և դա թուլացրեց Արարատի թագավորությունը.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԸ

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Ռուշա II-ից հետո Արարատի թագավորության և Ասորեստանի հարաբերությունները փոխվեցին: Արարատի թագավորության ծայրամասերից մի քանի գավառներ անջատվեցին: Դրանք երևի Մարաստանի ազդեցությանն էին ենթարկվել: Արարատի թագավորությունն իր վաղեմի ուժը կորցնում էր: Ասորեստանն սկսեց հովանավորել հայոց պետությանը, իսկ դա նշանակում էր, որ անկախ ու հզոր Հայքը թուլանալով մասամբ Ասորեստանի գերիշխանությանն էր ենթարկվում: Մ.թ.ա. 645 թ. գահ բարձրացած Սարդուր III-ը Ասորեստանի թագավորին իր նախորդների նման այլևս եղբայր չէր անվանում, այլ կոչում էր տեր կամ՝ իմ տեր թագավոր:

Ռուշա II-ին անմիջականորեն հաջորդած թագավորների ժամանակ միայն մանր-մունր նորխուռիերեն արձանագրություններ էին գրվում, այն էլ փոքր սալիկների, կարասների ու կնիքների վրա: Այլևս չէին գրվում աքքադերեն և նորխուռիերեն վիմական այնպիսի արձանագրություններ, որպիսիք փորագրվում էին նախորդ թագավորների ժամանակներում: Հավանաբար, այդ ժամանակ սեպագրերի կաղապարային լեզուն գրեթե մոռացվել էր. հայ փորագրիչ քրմերը հատուկտոր սեպագիր նշաններ և նորխուռիերեն բառեր էին իմանում:

Այդ ժամանակաշրջանում Հայքում ավելի շատ գրում էին արամեերեն: Արամեերենը, որ կոչվում է նաև քաղդեերեն, Բաբելոնի այդ ժամանակվա լեզուն էր (Բաբելոնում աքքադերենին փոխարինել էր քաղդեերենը) և Հարավ-արևմտյան Ասիայի շատ երկրներում էր արամեերենը գրավոր գործածվում: Հայքում երբևէ արամեերեն [illegible] խոսել, ինչպես որ չեն խոսել աքքադերեն ու նորխուռիերեն: Դրանցով, ինչպես արդեն գիտենք, հայերը միայն [illegible]ել են: Բայց եթե աքքադերեն և նորխուռիերեն գրում էին քարերի, սալիկների և այլ կարծր առարկաների վրա [illegible]կա արամեերեն գրում էին պապիրուսների վրա: Պապիրուսը այն ժամանակվա թուղթն էր և, ինչպես գիտենք, [illegible]ստրաստվում էր պապիրուս անվանվող բույսի ցողուններից: Պապիրուսը երկար էր լինում, նրա վրա արամեերեն [illegible]ում էին և փաթեթ սարքում: Թեշիբայինի [illegible] եղել են պապիրուսե այդպիսի փա[illegible]թներ:

Արարատի հայոց թագավորության այ[illegible] համանա[illegible]շրջանի մասին որոշ տեղեկությունն[illegible] են տալիս Ա[illegible]ես

Բաբելոնի ավերակները

տանի թագավոր Աշուրբանիպալի աքքադերեն գրված արձանագրությունները: Աշուրբանիպալը թագավորել է մ.թ.ա. 668-634 թվականներին: Այդ ժամանակ Հայքում թագավոր էին՝ նախ Ռուշա II-ը, ապա՝ Սարդուր III-ը: Աշուրբանիպալը գրել է, որ այս Սարդուրը հնազանդորեն Հայաստանից ծանր հարկեր էր բերում Ասորեստան և դեսպաններ էր ուղարկում իր առողջության մասին տեղեկանալու:

Իսկ մի նամակում, որ Աշուրբանիպալը գրել է Սարդուր III-ին, սրան որդի է անվանում և ավելացնում «Ամբողջ Ասորեստանը բարվոք վիճակում է, քեզ, քո պալատին և քո երկրին խաղաղություն եմ մաղթում»:

Ռուշա II-ի ժամանակ էլ կային հայ մեծամեծներ, որոնք զգուշանում էին, որ Ասորեստանի հետ պահպանվող մտերմությունը կարող է դառնալ հնազանդություն, և այդպես էլ եղավ:

Նորից հիշենք, որ Ռուշա II-ի ժամանակ, երբ Ասորեստանում ապստամբություն ծագեց Սենեքերիմ թագավորի դեմ, Հայաստանում շատ իշխաններ ապստամբների կողմն էին: Իսկ հայոց թագավորը՝ Ռուշան, այդ ապստամբության հակառակորդն էր, նա պաշտպանում էր Ասարհադդոնին, որը ճնշեց ապստամբությունը: Այդ ժամանակ Սենեքերիմին սպանող և Հայաստան փախած նրա երկու որդիներից մեկը՝ Սարասարը (Սանասարը), օգնություն ստացավ Հայոց իշխան Սկայորդուց: Սա Վան-Տոսպից դեպի հարավ գտնվող Հայոց ձորի տիրակալն էր: Մովսես Խորենացին գրում է. «Սանասարին մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի արևմտյան հարավում»: Դա Սասունն էր, որը, ինչպես գիտենք, միառժամանակ սկսել էր չենթարկվել Արարատի թագավորությանը՝ Վան-Տոսպին: Սկայորդին, հավանաբար, իշխող հայոց Արամյան թագավորական տոհմից էր: Նա այն իշխաններից էր, որոնք դժգոհելով Ասորեստանից և Արարատի թագավորությունից, գաղտնի կապեր էին հաստատել մարերի և սկյութների հետ: Եվ ահա Սկայորդու որդի Պարույրը մարական զորքերի օգնությամբ տապալեց հայոց Սարդուր թագավորին և գրավեց ամբողջ երկրի իշխանությունը: Պետք է ասել, որ Պարույրի դաշնակից մարերը դաժան էին վարվում հայոց քաղաքների հետ՝ այրում էին, ավերում: Այդպես, Հայաստանը Ասորեստանի գերիշխանությունից ազատվեց, բայց նրան սպառնում էր Մարաստանի գերիշխանությունը:

Սկայորդու իշխանական տունը կոչվում էր Երվանդյան կամ Երվանդունի: Այդպիսով, Պարույրը մարերի օգնությամբ տապալեց Արամի հայոց թագավորական տունը, որը երկար ժամանակ իշխում էր Հայքում: Իշխանությունն անցավ հայոց Երվանդունիների տոհմին: Մայրաքաղաք Տոսպը (Վանը) սկսեց կոչվել Երվանդավան:

Ինչպես գիտենք, հնում թագավորները երկու և ավելի անուններ էին ունենում: Երբ թագաժառանգը գահ էր բարձրանում, նրան նոր անուն էին տալիս: Կամ նույն թագավորին մի լեզվով մի անուն էին տալիս, մի ուրիշ լեզվով՝ մի այլ անուն: Այդպես, Պարույրը ժամանակի նորխուռիերեն փոքրիկ արձանագրությունների մեջ կոչվում է Երիմենա, իսկ նրա որդին կրում էր Վանի նախկին թագավորների մեջ ընդունված Ռուշա (III) անունը: Խորենացին նրան Հրաչյա է անվանում:

Պարույրի ժամանակ Մարաստանի թագավորն էր Կիաքսարը, որի մյուս անունն էր Վարբակես: Նրա հետ միացյալ էին մարերի ցեղակից սկյութների զորքերը: Կիաքսարը դաշինք կնքեց Բաբելոնի հետ Ասորեստանի դեմ պատերազմելու համար: Նա հայոց Պարույրին նույնպես այդ դաշինքի մեջ ներգրավեց: Մ.թ.ա. 612 թվականին մարերի, սկյութների, հայերի և բաբելացիների միացյալ զորքերը պաշարեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Ասորեստանի թագավոր Աշուրբանիպալի զորքերը երկար դիմադրեցին, բայց պարտվեցին: Մարերի և նրանց դաշնակիցների միացյալ զորքերը մ.թ.ա. 612 թ. օգոստոսին գրավեցին Նինվեն և ավերեցին: Աշուրբանիպալը փախավ, բայց երկար չկարողացավ դիմադրել: Նա եղավ Ասորեստանի վերջին թագավորը: Ասորեստանի զորքն ամրացավ Կարքեմիշ քաղաքում, բայց մ.թ.ա. 605թ. մարերը գրավեցին նաև այդ քաղաքը: Դրանով Ասորեստանի պետությունը վերացավ: Արևելքի այդ հզոր թագավորությունը, որ մի քանի հարյուրամյակ Հայքի գլխավոր հակառակորդն էր, ապա նաև բարեկամը, ինչնականապես դուրս եկավ պատմության ասպարեզից

Նրա տեղն Արևելքում գրավեց հզորացած Մարաստանը: Մ.թ.ա. 612թ. Նինվեն գրավելու առթիվ Մարաստանի թագավոր Կիաքսարը հայոց Պարույրին թագ նվիրեց, որով ուզում էր նրան դարձնել իրեն ենթակա թագավոր:

Մարերը պատրաստվում էին գրավել նաև Բաբելոնը, և հայերը մասնակցելու էին այդ արշավանքին ևս: Աստվածաշնչի Երեմիայի մարգարեության գրքում մարգարե Երեմիան հրավիրում է մի քանի պետություններ՝ հաղթելու Հրեաստանի թշնամի Բաբելոնին: Նա ասում է. «Երկրի մեջ դրոշակ բարձրացրեք, ժողովուրդների մեջ փող հնչեցրեք, նրա (Բաբելոնի) դեմ ժողովուրդներ հանեք, նրա դեմ կանչեք Արարատի, Մինիի և Ասքանազի թագավորությունները... Մարաստանի թագավորներին, նրա մարզպաններին և բոլոր կուսակալներին»: Սա մ.թ.ա. 592 թվականն էր: Ինչպես տեսնում ենք, հրեաները Հայքը շարունակում էին Արարատի թագավորություն անվանել: Իսկ աքքա-

Ասորեստանի թագավոր
Աշուրբանիպալը (669 — 627

դերեն գրվող արձանագրություններում մինչև մ.թ.ա. 4-րդ դարը Հայքը շարունակում էր կոչվել **Ուրարտու (Ուրուշտու)**: Իրանյանները, այդ թվում պարսիկներն ու մարերը հնուց ի վեր Հայքն անվանել են **Արմինա**, **Արմենիա**, հայերին՝ **արմինիյա**, **արմին**, **արման**: Հույները նույնպես շատ հնուց Հայքը կոչում էին **Արմենիա**, հայերին՝ **արմինի**: Երբ աքքադացիներն այլևս չկային, աքքադերենն էլ գործածությունից բոլորովին դուրս եկավ, Հայքի **Ուրարտու** անունն էլ մոռացվեց: Իշխող դարձան պարսկերեն ու հունարեն լեզուները, և նրանցում գործածվող **Արմենիա**-ն **արման**-ը, **արմին**-ը տարածվեց ամբողջ աշխարհում, բացի Վրաստանից: Վրացիները, ինչպես շատ հնուց հայերին կոչում էին **սոմեխի**, Հայքը՝ **Սոմխեթի**, շարունակեցին այդպես էլ անվանել:

Իսկ Երեմիայի հիշատակած Ասքանազի թագավորությունը սկյութներին է վերաբերում, Մինայի թագավորությունը Մեծ Հայքից հարավ-արևելք գտնվող Մանա երկիրն է:

Միջագետքի շրջակա երկրներում, նաև Հայքում խիստ նվազեց Ասորեստանի ու Բաբելոնի մշակութային ազդեցությունը: Նույն շրջանում սկսեց նկատելի դառնալ իրանյան ազդեցությունը: Մարերից, սկյութներից, պարսիկներից բացի, իրանյան էին նաև պարթևները և մի քանի այլ ժողովուրդներ, որոնք գտնվում էին Հայքին հարևան: Հարավ-արևմտյան Ասիայի բոլոր ժողովուրդների մեջ ամենաշատը դառնում էին իրանյանները: Ամենահզոր պետությունն էլ իրանյան Մարաստանն էր, որին հետո փոխարինեց նույնպես իրանյան Պարսկաստանը և ապա՝ իրանյան Պարթևստանը:

ԵՐՎԱՆԴ ՍԱԿԱՎԱԿՅԱՑ ԵՎ ՏԻԳՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Սկզբից, երբ Երվանդունիները մարերի դաշնակիցն էին, Արարատի հայոց թագավորությունն անկախություն էր պահպանում գրեթե իր ամբողջ տարածքում՝ Մեծ Հայքի սահմաններում: Բայց Մարաստանը ավելի ու ավելի հզորացավ, և հայոց Երվանդունիները կամաց-կամաց սկսեցին կորցնել իրենց լիակատար անկախությունը: Մեծ Հայքի արևելյան մասը Մարաստանը միացրեց իրեն:

Մ.թ.ա. 6-րդ դարի սկզբներին Փոքր Ասիայի [illegible] մուտքում, Էգեյան [illegible]ի ափին հզորացավ Լյ[illegible]ը կր[illegible]վող պետությունը: Եվ ահա Մարաստանը պատերազմ սկսեց այդ պետության դեմ: Մարերի կողմից պատերազմին մասնակցում էր նաև հայկական զորքը: Դա մ.թ.ա. 590—585 թվականներ[illegible] էր: Այդ ժամանակ մարական աշխարհակալ պետության զորքերի և Լյուդիայի միջև եղած սահմանը անցնում էր Հալիս գետով, որը միաժամանակ Փոքր Հայքի արևմտյան սահմանն էր:

Հայաստանը Մարաստանի նկատմամբ կիսանկախ վիճակի մեջ ընկավ: Երվանդունի թագավորները մեծ հարներ էին վճարում Մարաստանին, զորք էին տրամադրում նրան: Հունական Քսենոփոնը, որն ապրել է մ.թ.ա. [illegible] դարում, գրել է, որ հայերն այդ ժամանակ ունեին 40 հազար հետ[illegible] հեծյալ [illegible] զորքի [illegible]միանում էր մարերի բանակին, երբ սրանք պատերազմի մեջ էին մտնում այլ պետության դեմ: Հայկական զորքը [illegible] պահպանում էին նաև մարական մի շարք սահմանային ամրոց՝ [illegible]

Շուտով հայոց գահ է բարձրանում Երվանդ Սակավակյացը: Այդ ժամանակ Մարաստանի թագավորն էր Աժդահակը (հունարեն՝ Աստիագես): Երվանդն իր դուստր Տիգրանուհուն ամուսնացնում է Աժդահակի հետ, և Տիգրանուհին դառնում է Մարաստանի թագուհի: Այդպես իր հարաբերությունը Մարաստանի հետ բարելավելով, Երվանդը սկսեց հզորացնել իր բանակը և նոր բերդեր կառուցել: Իրեն ուժեղ զգալով, նա հրաժարվեց Մարաստանին հարկ վճարել: Հայաստանը կրկին ձեռք բերեց իր լիակատար անկախությունը: Աժդահակը զորք ուղարկեց Հայքի դեմ: Հայերի և մարերի միջև պատերազմ սկսվեց:

Հետո հայերի դաշնակից դարձան պարսիկները: Նրանց փոքր երկիրը սեպագրերում [illegible] էր **Պարսա**, ա[illegible]

Հայոց Երվանդ արքան

Արևմտյան Հայաստանի
հայ սատրապ Տիրիբազը

գտնվում էր այժմյան Իրանի հարավային մասում, Պարսից ծոցի ափերին: Այդտեղ իշխում էին պարսիկ Աքեմեն նահապետի ժառանգները: Նրանցից Կյուրոս II-ը հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի որդու՝ Տիգրանի ընկերն էր: Կյուրոսը և Տիգրանը սկզբում ծառայում էին Աժդահակի մարական զորքում որպես զորապետեր: Նրանք միասին որսի էին գնում, բարեկամություն անում: Պարսան գտնվում էր Մարաստանի գերիշխանության տակ:

Շուտով Կյուրոսը դարձավ Պարսայի թագավոր, բայց ենթակա Մարաստանին: Նա զորք հավաքեց, ապստամբեց Մարաստանի դեմ: Սկսվեց պատերազմ երկու երկրների միջև: Պատերազմը տևեց մոտ երեք տարի՝ մ.թ.ա. 555 — 553թթ.: Տիգրանը, որպես Կյուրոսի դաշնակից, հայկական զորքով մասնակցում էր այդ պատերազմին: Մարերը պարտվեցին: Պարսիկները գրավեցին Մարաստանի մայրաքաղաք Եկբատանը, Աժդահակ թագավորը գերի ընկավ պարսիկների ձեռքը:

Այս դեպքերի մասին գրել են մի քանի հին պատմիչներ, հատկապես հույն Քսենոփոնը իր «Կյուրոպեդիա» գրքում, որը նվիրված է Կյուրոսի կյանքի նկարագրությանը: Այդ դեպքերի մասին գրել են նաև հույն Հերոդոտը, որ նույնպես ապրել է մ.թ.ա. 5-րդ դարում, ապա և՝ Մովսես Խորենացին և ուրիշ հեղինակներ: Այժմ այդ բոլորի գրածների համեմատությամբ պարզում ենք այն ժամանակների հայոց իրական պատմությունը:

Տիգրանը դառնալով թագավոր, վերանվաճեց Մեծ Հայքի արևելյան այն հողերը, որոնք գրավել էին մարերը: Խորենացին այսպես է նկարագրում Տիգրան թագավորին. «Այս և այսպիսի շատ բաներ բերեց մեր աշխարհին ա[illegible] խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներո[illegible] գեղեցիկ ոտքերով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ»:

Այդ ժամանակաշրջանում էր, որ հայերն իրենց մայրաքաղաքը Երվանդավանից, այսինքն՝ Վանից (Տոսպից) տեղափոխեցին Արա-մայր, որն սկսեց կոչվել Արմավիր: Հիշենք, որ այդ քաղաքը հիմնել էր դեռևս Արա Առաջինը: Արմավիրը երկրի կենտրոնում էր, ավելի հեռու Մարաստանից ու Պարսկաստանից: Ուրեմն և՝ նոր պայմաններում ավելի ապահով էր: Ահա այդ ժամանակներից Արարատի թագավորության անունով Այրարատ սկսեց կոչվել Մեծ Հայքի միայն կենտրոնական աշխարհը, որտեղ Արմավիր մայրաքաղաքն էր գտնվում:

Տիգրան թագավորը Մարաստանի պարտված թագավորի մերձավորներին և պարսիկներից փախած շատ մարերի մեծահոգաբար թույլ տվեց բնակվելու Մասիսի արևելյան կողմում մինչև Գողթն գավառի սահմանները, մեծ մասամբ Արաքս գետից հարավ: Նրանք հաստատվեցին այդտեղ և հավատարիմ էին հայոց թագավորին: Այդ պատճառով հայոց պատմության մեջ Հայքի այդ մի փոքր շրջանը երբեմն կոչվում է նաև Մարաստան:

Պտյակ (գավաթ) Երվանդունիների ժամանակաշրջանից (մ. թ. ա. 6-րդ դար)

Աքեմենյան Կյուրոսը, որը հետո կոչվեց Կյուրոս Մեծ, պարսիկ պետությունն անընդհատ հզորացնում էր Նա գրավում էր հարևան բոլոր երկրները: Մ.թ.ա. 549թ. Կյուրոսը գրավեց Պարսայի հարևան Հիրավուրց Էլամը, որի մայրաքաղաք Շուշը դարձրեց իր պետության մայրաքաղաք: Ապա հպատակեցրեց Պարթևստանը, որը գտնվում էր Միջին Ասիայի հարավում, գրավեց Վրկանաց աշխարհը (Հիրկանիան), որը գտնվում էր Կասպից ծովի հարավ-արևելյան ափերին: Մ.թ.ա. 547թ. Կյուրոսի զորքերը մտան Հայք, որի միջով նրանք շարժվում էին դեպի արևմուտք՝ Լյուդիայի դեմ պատերազմելու: Լյուդիային չկարողացան վերջնականապես հաղթել մարերը, այժմ Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող այդ երկիրն ուզում էր գրավել Կյուրոսը: Այդ ընթացքում Պարսկաստանը և Հայքը դաշնակիցներ էին, թեև Պարսկաստանի նպատակն էր գերիշխել նաև Հայաստանի վրա:

Լյուդիայի զորքերը մտան Փոքր Հայք: Հալիս գետի մոտ լյուդիական և պարսկական զորքերի միջև ահեղ ճակատամարտ տեղի ունեցավ, ապա Կյուրոսն իր զորքով արագ շարժվեց դեպի Լյուդիայի մայրաքաղաք Սարդեսը: Նրա զորքերի կազմում էր նաև հայկական զորաբանակը: Շուտով Կյուրոսի զորքերը հասան Լյուդիա և պաշարեցին նրա մայրաքաղաքը: Մ.թ.ա. նույն 547թ. Կյուրոսի զորքը գրավեց Սարդեսը և գերի վերցրեց Լյուդիայի թագավոր Կրեսոսին, որը համարվում էր հին աշխարհի ամենահարուստ մարդը: Ըստ ավանդության Սարդես մտած պարսից զինվորներից մեկը պետք է սպաներ Կրեսոսին՝ չճանաչելով նրան, և այդ պահին Կրեսոսի համր որդու լեզուն հանկարծ բացվում է, և նա գոռում է՝ «Ով մարդ, մի սպանիր Կրեսոսին» (այս ավանդությունը օգտագործել է Խաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում)

Այդպես, Կյուրոս Մեծը հիմնեց Պարսկաստանի Աքեմենյան կայսրությունը: Նա գրավեց նաև Բաբելոնը (մ.թ.ա. 639թ.), ամբողջ Միջագետքը, հետո՝ Բակտրիան (այժմյան Աֆղանստանում է), ամբողջ Միջին Ասիան, հասավ մինչև Հնդկաստան: Պարսից Աքեմենյան պետությունը դարձավ ամենամեծն ու ամենահզորն ամբողջ աշխարհում: Այն տարածվում էր Փոքր Ասիայի արևմտյան ափերից մինչև Հնդկաստան: Այդպես, աշխարհում մի հզոր պետությունը փոխարինում էր մյուսին: Երկու ուժեղները չէին համակերպվում, և ավելի ուժեղը նվաճում էր ավելի թույլերին, հետո ինքն էլ նվաճվում: Դա օրենք դարձավ:

Մ.թ.ա. 530թ. օգոստոսին Կյուրոսը պատերազմում էր Միջին Ասիայի քոչվոր մասագետ ցեղի դեմ: Այս անգամ անհաղթ Կյուրոսը սպանվեց ճակատամարտերից մեկում: Աքեմենյան Պարսկաստանի գահ բարձրացավ Կյուրոսի որդի Կամբիսը:

Հայաստանը դարձել էր Աքեմենյան Պարսկաստանին հպատակ երկրներից մեկը: Այդ հպատակ երկրները կոչվում էին սատրապություններ: Երվանդունիների թագավորական տունը շարունակում էր իշխել, բայց Պարսկաստանից կախյալ վիճակում: Երվանդունիները Հայքում սատրապներ էին: Հայերն այդ ժամանակ արքունիքում պատվավոր տեղեր ունեին: Պարսկական զորքերի հրամանատարների մի մասը հայեր էին: Դրանցից էր, օրինակ, Դադարշիշը, որ Բակտրիայի սատրապն էր և հետո դուրս եկավ Հայքի դեմ: Հայ էր նաև Բաբելոնի պարսից զորապետներից մի ուրիշը՝ Արաքան, որ հետո հայերին օգնեց:

Իրանյան ազդեցությունը Հայքի վրա ուժեղանում էր: Հայերը նույնիսկ աստիճանաբար սկսեցին մոռանալ իրենց հին աստվածների մի մասին: Նոր աստվածներ էին հանդես գալիս՝ պարսկական աստվածների նման:

ՀԱՅՔԸ ՆՈՐԻՑ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ Է ՆՎԱՃՈՒՄ

Պարսից թագավոր Կյուրոսի մահից հետո թագավոր դարձած նրա որդի Կամբիսը արշավեց Եգիպտոս: Մ.թ.ա. 5[illegible] թվականին պարսկական զորքը գրավեց ամբողջ Եգիպտոսը: Հետո Կամբիսն իր զորքով 3 տարի մնաց Եգիպտոսում: Նա հանկարծ լուր ստացավ, որ Պարսկաստանում նոր թագավոր կա, իսկ իրեն գահից գցել են: Կամբիսը շտապեց հայրենիք, բայց ճանապարհին մահացավ:

Իրոք, Պարսկաստանում ապստամբություն էր եղել, և թագավոր էր դարձել մոգ Գաումատան:

Պարսկաստանին հպատակ մի քանի երկրներ անջատվեցին նրանցից: Հայերն օգտվելով այս խառնաշփոթությունից, մ.թ.ա. 522թ. սկզբին Հայաստանը հայտարարեցին անկախ:

Շուտով Աքեմենյան տոհմի մի ներկայացուցիչ՝ Դարեհ անունով, իր վեց օգնականների հետ սպանում է մոգ Գաումատային և դառնում թագավոր: Նա կարգադրում է, որ Պարսկաստանից անջատված բոլոր երկրները նորից անցնեն իր իշխանության տակ: Անջատվածներից մի քանիսը չեն հնազանդվում: Դրանց մեջ էր Հայաստանը:

Հայերը կարճ ժամանակում հզորացրին ու մեծացրին իրենց բանակը: Դարեհ Առաջին թագավորը տեսնելով,՝ որ Հայքն իրեն չի հնազանդվում, մեծ զորաբանակներ ուղարկեց հայերի դեմ:

Այս բոլոր դեպքերի մասին մանրամասն պատմված է Դարեհի գրել տված մեծ արձանագրության մեջ, որի մասին արդեն խոսել ենք: Հիշենք. դա Բեհիսթունի արձանագրությունն է՝ փորագրված մի մեծ ժայռի հարթեցված երեսին: Դա նաև պարսից Աքեմենյան թագավորների առաջին արձանագրությունն է՝ գրված երեք լեզվով՝ հին պարսկերեն, աքքադերեն և էլամերեն (կրկին հիշենք, որ այս արձանագրության մեջ էլ պարսկերեն հայը կոչվում է **արմինիյա,** Հայաստանը՝ **Արմինա**, իսկ աքքադերեն մասում՝ հայը՝ **ուրաշտայա**, Հայաստանը՝ **Ուրաշտու**):

Իր այս արձանագրության մեջ Դարեհը մանրամասն պատմում է մոգ Գաումատայի ապստամբության և նրան սպանելու մասին, նաև՝ անհնազանդ երկրների դեմ իր զորավարների մղած պատերազմների վերաբերյալ: Շատ է գրված Հայքի մասին: Պարզ երևում է, որ Դարեհին զայրացրել է հայերի անկախ դառնալը և իրեն չհնազանդվելը:

Դարեհը երկու մեծ զորաբանակ ուղարկեց հայերի դեմ՝ մեկը հայ Դադարշիշի, մյուսը պարսիկ Վաումիսայի ղեկավարությամբ: Դադարշիշը Հայք է մտել Մարաստանի կողմից, այսինքն՝ հարավ-արևելքից: Իսկ Վաումիսան իր զորքով նախ մտել է Միջագետք, քանի որ հայկական զորքը գրավել էր Միջագետքի մի մասը:

Այս զորավարները երկու կողմից հինգ արշավանք են կատարել հայերի դեմ, հինգ ահեղ ճակատամարտ է տեղի ունեցել հայոց և պարսից զորքերի միջև:

Բեհիսթունի արձանագրությունը: Կենտրոնում բարձրաքանդակն է՝ Դարեհ թագավորը [illegible] արձրացրած, և նրա առջևում 9 պարտված թագավորները (որոնցից մեկը հայ Արաքան [illegible] արձանագրությունն [illegible]

Դարձից հարեւի Լուացին բաղանիքում գտնվող մի փոքր Ավրիտամամ գլխարկով վիրա

Հայի պատկեր Պերսեպոլիսի բարձրաքանդակներից (մ. թ. ա. 6-րդ դար)

Դարեհը Արևելքի թագավորների գոռոզ ոճով ու ինքնագովությամբ գրել է, որ իբր երեք անգամ էլ Դադարշիշն է հաղթել, բայց պարզ երևում է, որ Դադարշիշի զորքերը պարտվել են: Եթե առաջին իսկ ճակատամարտում նրանք հաղթեին հայերին, էլ ինչու պետք է երկրորդ, երրորդ ճակատամարտերը տային: Որ հայերը հաղթանակներ են տարել, իմանում ենք նաև այն բանից, որ Դարեհը մի քանի ամիս հետո նոր զորք է ուղարկում հայերի դեմ՝ պարսիկ Վաումիսայի ղեկավարությամբ: «Դարեհ թագավորն ասում է. Այնուհետև, Վաումիսա անունով պարսիկին՝ իմ ծառային, ես ուղարկեցի Հայք: Նրան այսպես պատվիրեցի՝ Գնա, ջախջախիր այդ ապստամբ բանակը, որն ինձ հնազանդվում: Ուստի Վաումիսան գնաց Հայքը նվաճելու: Ապստամբները համախմբվեցին ու դուրս եկան Վաումիսայի դեմ պատերազմի: Ասորեստանում Իզարա անունով մի վայր կա: Ճակատամարտն այնտեղ տեղի ունեցավ»

Դարեհը կրկին պարծենկոտությամբ գրել է, թե պարսկական զորքերն են հաղթել, բայց դա ևս անհավատալի է, քանի որ Վաումիսան շուտով մի նոր արշավանք է կատարում հայերի դեմ: Դարեհի այս գրածներից էլ իմանում ենք նաև, որ հայկական զորքը Հայքում հաղթանակներ տանելով մտել է Միջագետք՝ Ասորեստանի տարածքը և Վաումիսայի զորքի հետ այդտեղ է ճակատամարտ տվել:

Հայերը Պարսից մայրաքաղաք Պերսեպոլիսում, մ. թ. ա. 6-րդ դար

Ապա Դարեհը գրում է, որ մի հայի ղեկավարությամբ Բաբելոնն է իր դեմ ապստամբել: Ահա. «Մի մարդ Արաքա անունով, հայ, Հալդիդայի որդի, Բաբելոնում ապստամբեց: Բաբելոնի երկրում Դուբալա անունով մի վայր կա նա այնտեղ ապստամբեց»:

Արաքան հայերի առաջնորդներից է եղել, Բաբելոնում մեծ դիրքի հասած: Նա Միջագետք մտած հայկական զորքի և Միջագետքի հայկական բնակչության օգնությամբ գրավել է Բաբելոնը:

Այսպես, հայերը մեծ հաջողություններ ունեցան: Բայց Արաքայի զորքը ի վերջո պարսիկներից պարտվեց: Ինքն Արաքան գերի ընկավ և դաժան մահապատժի ենթարկվեց: Նա հայ ժողովրդի հերոս զավակն էր, որ զոհվեց իր երկրի անկախության համար: Հնարավոր է, որ Արաքան իրեն հռչակել էր Միջագետքի և Հայոց թագավոր, և **Արաքա**, որ նույն հայերեն **արքա** բառն է, գուցե և ոչ թե նրա անձնանունն էր, այլ թագավորական տիտղոսը:

Վաումիսայի վերջին արշավանքը Հայքի դեմ, հավանաբար, նրան հաջողություն է բերել, թեև դա հաստատ չգիտենք: Ինչ էլ եղած լինի, մենք գիտենք, որ մ.թ.ա. 519 թվականին Հայքն արդեն կորցրել էր իր անկախությունը և Պարսկաստանի գերիշխանության տակ էր ընկել:

Դարեհը հաղթել էր նաև իր դեմ ելած մյուս բոլոր 8 երկրների ապստամբներին և Պարսից ամբողջ կայսրությունը վերականգնել: Նվաճված երկրները Դարեհը բաժանեց նոր սատրապությունների: Հույն պատմիչ Հերոդոտը գրում է, որ Հայքը բաժանված էր երկու սատրապությունների՝ արևելյան մասը 18-րդ սատրապությունն էր, արևմտյանը՝ 13-րդը: 18-րդ սատրապության մայրաքաղաքը Վանն էր, 13-րդինը՝ Երևանը (Էրեբունին): Երկու սատրապությունները միասին Մեծ Հայքի տարածքի մի մասն էին կազմում (Մեծ Հայքի արևելյան մասը՝ Կասպից ծովի մոտակայքը, անջատված ու միացված էր Մարաստանի սատրապությանը):

Հայքը մեծ հարկեր էր վճարում Պարսկաստանին և իր զորքերով մասնակցում պարսից թագավորների մղած պատերազմներին: Իսկ Երվանդունիների թագավորությունը Հայքում պահպանվում էր, թեև Պարսկաստանից կախյալ վիճակում: Թե Դարեհի և թե Պարսկաստանի հետագա թագավորների թողած եռալեզու արձանագրություններում Հայքը միշտ որպես մի միասնական երկիր է հիշվում:

Պարսից Աքեմենյան թագավորները, շարժվելով դեպի արևմուտք, պատերազմ սկսեցին Հունաստանի դեմ: Հայկական զորքը դարձյալ մասնակցում էր այդ արշավանքներին:

ՊԱՐՍԻՑ ԱՔԵՄԵՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Դարեհ Առաջին թագավորի ժամանակ և դրանից հետո Պարսից Աքեմենյան կայսրությունը աշխարհի ամենամեծ ու ամենահզոր պետությունն էր: Պարսիկները հաղթեցին իրենց բոլոր մեծ ու փոքր թշնամիներին, և թվում էին անհաղթ: Սակայն աշխարհում չի եղել անհաղթ կայսրություն: Ամենահզոր աշխարհակալ պետություններն էլ վերջի-վերջո պարտվել են և ասպարեզ են եկել ուրիշ հզոր պետություններ: Պարսիկների անսասան թվացող լայնածավալ պետության պարտությունը պիտի գար արևմուտքից՝ փոքր Հունաստանից:

Իսկ Հայաստանը Պարսից Աքեմենյան պետության կազմում պատվավոր տեղ ուներ: Հայքի սատրապ-թագավորները հայեր էին և ազգակցական կապերի մեջ էին պարսից արքունիքի հետ ու մեծ պատիվ ունեին այնտեղ: Հայկական զորքը կարևոր դեր ուներ պարսկական զորաբանակների կազմում:

Աքեմենյան կայսրության մայրաքաղաքներն էին Շոշը, Պերսեպոլիսը և Բաբելոնը:

Մ.թ.ա. 500թ. Աքեմենյան Պարսկաստանը պատերազմ սկսեց հույների դեմ: Բալկանյան թերակղզու մի մասը Թեսալիան, պարսիկները նախքան այդ գրավել էին, բայց ուզում էին գրավել ամբողջ թերակղզին, որի հարավային մասում բուն Հունաստանն էր:

Աքեմենյան զորքերը մոտեցան Հունաստանի Աթենք քաղաքին: 42 կիլոմետր էր մնացել, որ նրանք մտնեին հույների այդ գլխավոր ու գեղեցիկ քաղաքը: Բայց Աթենքի մոտ, Մարաթոնի դաշտում հույները հաղթեցին պարսկական զորքին: Հույն զինվորներից մեկը, վազքով անցնելով 42 կիլոմետրը, հասավ Աթենք, հայտնեց հաղթության ուրախալի լուրը և անշնչացած ընկավ: (Այս դեպքը պատճառ դարձավ, որ մարզական ձևերի մեջ մտցվի մարաթոնյան վազքը)

Մ.թ.ա. 480թ. Աքեմենյան Պարսկաստանի զորքերը նորից արշավեցին Հունաստան: Այս անգամ զորաբանակը ղեկավարում էր պարսից Քսերքսես արքան: Նրա զորքերի մեջ կար հայկական մի բանակ: Հույները դիմադրություն կազմակերպեցին Թերմոպիլե կոչվող լեռնանցքում: Այնտեղ 300 հույն մարտիկներ, շրջապատված պարսից զորքով, պատերազմեցին ու զոհվեցին մինչև վերջին զինվորը: Ճիշտ է, հույները պարտվեցին, բայց ցույց տվեցին իրենց հայրենիքի համար ամուր կանգնելու ազգային ոգին: Քսերքսեսը գրավեց Աթենքը, բայց երկար չմնաց այնտեղ: Նրա նավատորմը ծովում պարտվեց հույներից, և պարսկական ցամաքային զորքն էլ սկսեց նահանջել: Պլատեա քաղաքի մոտ հույները վերջնականապես հաղթեցին պարսկական զորքերին, և Քսերքսեսի բանակը նահանջեց Հունաստանից: Հունական զորքը հետապնդելով անցավ Հելլեսպոնտոսը (Դարդանելի նեղուցը) և մտավ Փոքր Ասիա

Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունը

Հայկական զորքերը քաջաբար կռվում էին պարսիկների կողքին ուս-ուսի, և հույների նկատմամբ հաղթանակի էին ձգտում, թեև, իհարկե, հայերի վերջնական նպատակը կրկին անկախություն ձեռք բերելն էր:

Մ.թ.ա. 401 թ., երբ Պարսից Աքեմենյան պետության թագավորն էր Արտաքսերքսես II-ը, նրա դեմ ապստամբեց հարազատ եղբայրը՝ Փոքր Ասիայի սատրապ Կյուրոս Կրտսերը: Այս Կյուրոսն ուզում էր եղբորը գահընկեց անել և դառնալ թագավոր: Հույն նշանավոր փիլիսոփա և զորավար Քսենոփոնը տասը հազար հունական վարձկան զորքով միացավ Կյուրոսին: Նրանք արշավեցին դեպի Միջագետք՝ Արտաքսերքսես արքայի դեմ: Արտաքսերքսեսի բանակում նույնպես հայկական զորաբանակ կար՝ հայոց Երվանդ թագավորի գլխավորությամբ:

Պատերազմում Կյուրոս Կրտսերը սպանվեց, նրա զորքերը պարտվեցին: Հունական բանակը Քսենոփոնի ղեկավարությամբ սկսեց նահանջել: Հույները նահանջում էին Մեծ Հայքի միջով: Նրանց նպատակն էր հասնել Սև (Պոնտական) ծովին: Նրանք հարավից, Սասունի լեռներից մտան Հայք և երկիրը կտրեցին անցան մինչև Սև ծով:

Քսենոփոնը ամեն օր իր տետրում գրում էր կատարված դեպքերի, անծանոթ վայրերի մասին: Հետագայում նա իր այդ նշումներն օգտագործելով՝ գրեց «Տասը հազարի նահանջը» գիրքը (հունարեն՝ «Անաբասիս»), որի մեջ

Ալեքսանդր Մակեդոնացի (ըստ դրամի)

Քսենոփոն

մանրամասն նկարագրեց Հայաստանի այն վայրերը, որոնցով ինքն ու հունական զորքն անցել էին:

Այդ գիրքն այսօր կարևոր աղբյուր է մ.թ.ա. 5-րդ դարի վերջի և 4-րդի սկզբի Հայաստանի վիճակն ուսումնասիրելու համար.

Քսենոփոնը հիմնականում պատմում է հայկական գյուղերի մասին: Նահանջող հույն բանակը անցել է հայկական բազմաթիվ գյուղերով: Հայոց քաղաքներից ու բերդերից հույները խուսափել են. զգուշանալով հայկական զորքերի հետ ընդհարվելուց:

Քսենոփոնի պատմածներից իմանում ենք, որ հայերը ամենից շատ զբաղվում էին երկրագործությամբ, ցանում էին ցորեն, գարի, քունջութ: Թխում էին ցորենի և գարու հաց: Գարուց պատրաստում էին գարեջուր: Տարածված էր այգեգործությունը, հատկապես խաղողի, նուշի մշակությունը: Խաղողից հայերը պատրաստում էին չամիչ, գինիներ: Քսենոփոնի վկայությամբ, գինին հայերը պահում էին հողի տակ, որ հնանա և անուշահոտ դառնա: Քունջութից, նուշից, բևեկնից ձեթեր էին պատրաստում:

Քսենոփոնը գրում է, որ այն ժամանակ Հայաստանը շատ բարեկեցիկ երկիր էր, ժողովուրդն ունևոր, պարենի մեծ պաշարներ ուներ:

Հայաստանի ընտանի կենդանիներից Քսենոփոնը հիշատակում է կով, ոչխար, այծ, խոզ, տնային թռչուններ և այլն: Հատկապես լավ է արտահայտվում Հայաստանի ձիերի մասին: Պարզվում է, որ հայերը պարսից թագավորին որպես հարկ նժույգներ էին ուղարկում Պետք է ասել, որ Հայքի նժույգները շատ հնուց էին հայտնի, հարևան երկրները Հայաստանից միշտ էլ ձի էին գնում

Քսենոփոնը նկարագրում է նաև հայկական գյուղական տները՝ գետնափոր ու երդիկներով: Շատ կողմերով այդ տները նման են Հայաստանում միջնադարի ընթացքում և մինչև 20-րդ դարի 30-ական թվականները եղած գյուղական երդիկավոր տներին:

Ամեն հայկական գյուղ, ինչպես վկայում է Քսենոփոնը, ուներ գյուղապետ, որը հայոց մեջ ավելի ուշ կոչվում էր տանուտեր:

Քսենոփոնը գրում է նաև Հայաստանի սահմանների մասին, նրանից իմանում ենք, որ այն ժամանակ էլ պահպանվել էին Արարատի հայոց թագավորության ժամանակների սահմանները՝ Հյուսիս-արևմուտքից Սև ծովը, հյուսիսից Քուռ գետը, հարավից Միջագետքը: Ըստ Քսենոփոնի, այն ժամանակ Հայաստանն ընդհանրապես և Արևմտյան Հայաստանը՝ առանձին վարչական միավորներ էին: Դա ևս ճիշտ է: Հայքում, ինչպես արդեն գիտենք, Աքեմենյանների ժամանակ երկու սատրապություն կար՝ արևելյան և արևմտյան:

Արևելյան Հայքի սատրապ-թագավորը Երվանդն էր (հունարեն Օրոնտաս), որն իր զորքով Արտաքսերքսեսի հետ միասին կռվել էր Կյուրոս Կրտսերի և հույների բանակի դեմ: Այն ժամանակ հայ գրեթե բոլոր թագավոր-սատրապները իրենց Երվանդունի տոհմի անունով Երվանդ էին կոչվում:

Արևմտյան Հայաստանում թագավոր-սատրապ էր Տիրիբազը, որը, սակայն, ենթակա էր Երվանդին:

Հետաքրքրական է, որ Քսենոփոնը հայերի որոշ խմբակցությունների տարբեր անուններ է տալիս, օրինակ, Հայքի հայերին անվանում է տաոիներ, հայոց Բասեն գավառի բնակիչներին՝ փասիաներ, Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան լեռներում բնակվող հայերին անվանում է խալդայներ կամ խալիբներ, Երվանդ թագավորի զորքի հայ մարտիկներին՝ մարդեր:

Այսպես Հայքը Պարսից Աքեմենյան հսկա պետության կազմում մնաց մինչև մ.թ.ա. 331 թվականը:

Ալեքսանդր Մակեդոնացին Հունաստանի հյուսիսից՝ Մակեդոնիայից, արշավելով դեպի արևելք, այդ թվականին Գամելայի հայտնի ճակատամարտում ջախջախեց Աքեմենյան Պարսկաստանի զորքերը և գրավելով Բաբելոնը՝ դարձրեց այն իր մայրաքաղաքը: Հայաստանը անկախություն ձեռք բերեց:

Աքեմենյան վերջին թագավորը Դարեհ III-ն էր, որը սպանվեց:

Հայկական երկու զորաբանակ կռվում էր պարսից զորքերի կողքին, բայց Ալեքսանդր Մակեդոնացու հույն-մակեդոնյան զորքերն ավելի ուժեղ գտնվեցին: Մակեդոնացին Հայաստան չմտավ, և Հայքը դրանով շահեց՝ իրեն անկախ պահելով:

Աքեմենյան պետության կազմում հայերը մեծապես մասնակցելով պետության ղեկավարմանը ու ռազմական գործողություններին, պատրաստ էին երկիրն անկախ հայտարարելու: Հայոց թագավորությունը, թեև կախյալ վիճակում, պահպանվում էր, և երբ Աքեմենյան պետությունն ընկավ Ալեքսանդր Մակեդոնացու հարվածներից, Հայքը պրականգնեց իր անկախությունը:

Ալեքսանդր Մակեդոնացու այդ հաղթանակով Հարավ-արևմտյան Ասիայում սկիզբ առավ նոր դարաշրջան, որը կոչվում է հելլենիստական:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՐՎԵՍՏԸ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ, ԿՐՈՆԸ

Հայկական լեռնաշխարհի տարածքում, ինչպես արդեն ասվել է, անհիշելի ժամանակներից մարդիկ են բնակվել: Սկզբից գործիքներ ու այլ իրեր պատրաստել են քարից, ոսկորից, իսկ հետո նաև մետաղներից՝ պղնձից, բրոնզից, երկաթից: Զարդեր պատրաստել են նաև ոսկուց, արծաթից, ազնիվ քարերից:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի մեջ, երբ Լեռնաշխարհի կյանքում գլխավոր դերն անցավ հայկական ցեղերին, արդեն գրեթե ամբողջ Մեծ Հայքի տարածքում ստեղծվում էր հայկական մշակույթ ու արվեստ:

Հնուց ի վեր մինչև Երվանդունիները և հետագա ժամանակները Մեծ Հայքում տնտեսության հիմնական ճյուղերը մնում էին հողագործությունը, անասնապահությունը և արհեստները: Արհեստներից տարածված էր գինեգործությունը: Հայ ժողովրդի ամբողջ պատմության ընթացքում հայ բրուտները կավից պատրաստել են տարբեր տեսակ խեցեղեն՝ ճաշի ու ջրի ամաններ, հացահատիկ ու գինի պահելու կարասներ, փոքր արձաններ և այլն: Հայերի մեջ հնուց ի վեր զարգացնում էր նաև ձևավոր քարագործությունը, ինչպես և մետաղաձուլման ու մետաղների մշակման արհեստները:

Բանդակ մարդն ու առյուծը

Զարդ (այծի գլուխ)

Երբ մարդն իր ամենօրյա օգտագործման գործիքները, պիտույքները սկսում է նաև գեղեցկացնել, զարդարել, գոյանում է արվեստ: Այդպես հայ բրուտները իրենց պատրաստած կարասների, կճուճների, կժերի ու դորակների վրա զանազան գեղեցիկ նախշեր էին անում, գույներ տալիս: Սա արդեն արվեստ էր:

Նկարչական ու զարդարական արվեստի հնագույն ձևերից են ժայռապատկերները: Ինչպես գիտենք, Մեծ Հայքի շատ լեռներում ժայռերի, քարերի վրա կան եղջերուների, այծերի, մարդկանց, առասպելական հերոսների պատկերներ: Դրանք գրի հնագույն տեսակներ լինելով (պատկերագիր), միաժամանակ արվեստի շատ հետաքրքիր նմուշներ են: Հայերը ժայռապատկերներ նկարել են հնագույն ժամանակներից մինչև միջնադար: Քրիստոնեական շրջանում էլ այդ արվեստը հայերի մեջ շարունակվել է, և ժայռապատկերներ են փորագրել նաև եկեղեցիների սրբատաշ պատկերի վրա (օրինակ, Երևանի մոտ, Պտղնի գյուղի վանքի պատին):

Հայաստանում հնուց ի վեր պատրաստում էին արձաններ ու արձանիկներ՝ կավից, քարից, փայտից, ինչպես և մետաղներից: Մեծ Հայքի հին հողաշերտերում գտնվել են մարդկանց, հին աստվածների, ինչպես և կենդանիների՝ այծի, ձիու, շան, առյուծի արձանիկներ:

Արվեստի մի ճյուղն էլ ճարտարապետությունն է: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Արարատյան դաշտավայրում կառուցում էին պարզունակ տներ: Օրինակ, Շենգավիթում (Երևան) գտնվեց մի հնադարյան բնակատեղի: Այդտեղ անտաշ քարերից կառուցված է պարիսպ՝ իր աշտարակներով, պարսպի ներսում տներ են եղել, բայց անկանոն դասավորված: Հայաստանում կառուցել են նաև կլոր՝ կոնաձև տներ: Սրանք վաղ հայկական ճարտարապետության նմուշներից են:

Հայկական մշակույթն ու արվեստը հատկապես ծաղկեցին Վանի Արարատյան հայոց թագավորության ժամանակ: Հայկական հզոր պետականությունը պատճառ դարձավ հայ մշակույթի արագ զարգացման:

Այդ ժամանակներից մեզ են հասել շատ արձանիկներ, բարձրաքանդակներ, վիմանկարներ, խեցեղեն, տնային

Անան ցուլի գլխիկներով

Թռչունի քանդակ

Մարտակառքի քանդակ

գործածության գեղեցիկ իրեր, զարդեր և այլն: Ուշագրավ են զանազան առասպելական կենդանիների ու թռչունների արձաններն ու արձանիկները: Դրանցից են արծվառյուծի (արծվի գլխով առյուծ) ու արծվամարդու (արծվի գլխով մարդ), ինչպես և մարդառյուծի (մարդու գլխով առյուծ) արձանները

Առյուծն, առհասարակ, կարևոր տեղ է ունեցել Արարատի թագավորության արվեստում: Առյուծը Հայկ աստծու խորհրդանիշներից մեկն էր: Պալատների պատերին հաճախ էին առյուծներ նկարում: Որմնանկարների մեջ կարևոր տեղ ուներ նաև ցուլը:

Որմնանկարները մեծ մասամբ արվում էին կապույտ ու կարմիր հաճելի գույներով, երբեմն էլ այլ գույնի ներկեր էին գործածում:

Նկարում էին նաև ամենօրյա կյանքի տեսարաններ. մի տեղ հովիվը ոչխարներին սարն է տանում, մի այլ տեղ

կովերն են քայլում կամ եղջերուները: Նկարների մեջ ուշագրավ են նաև հին հայկական ռազմիկների գունավոր պատկերները՝ այն օրերի զգեստներով:

Այդ ժամանակաշրջանի, ինչպես և հետագա դարերի հայկական կերպարվեստում կարևոր տեղ ուներ կյանքի ծառը (սոսին), որը սուրբ էր համարվում: Այդ ծառը հաճախ երեք ճյուղով էր նկարվում, երբեմն բազմաճյուղ, որոշ դեպքերում էլ՝ նրա մի տերևը: Եվ միշտ նրա մոտ քուրմ է լինում կանգնած կամ քուրմը բռնած է լինում եռաճյուղ ծառի ոստը: Դրանք հայերի մեջ ամենահին ժամանակներից եղած ծառապաշտության և ծառագուշակության պատկերներ են, որոնց մասին գրել է Խորենացին:

Արվեստի հրաշալի նմուշներ են բրոնզյա զարդարուն սաղավարտները, վահանները, կապարճները (նետերի ամաններ), գավաթները: Սաղավարտների ու վահանների վրա գեղեցիկ պատկերներ էին դրվագվում, երբեմն՝ ռազմի տեսարան, մարտակառք, հաճախ՝ առյուծներ, եղջերուներ:

Շքեղ էր ու քանդակազարդ թագավորական գահը: Իսկ ամենաշքեղը Արդինիի հայկական տաճարում եղած արձանները, զարդերն ու զարդակիր իրերն էին: Այնտեղ եղել են նաև ոսկե ու արծաթե շքեղ վահաններ, հայ թագավորների բրոնզե արձաններ, կենդանիների գեղեցիկ քանդակներ և այլն:

Մենք արդեն գիտենք, որ Ասորեստանի Սարգոն թագավորը երբ արշավեց Հայք, կողոպտել տվեց Արդինիի տաճարը և հետո, Ասորեստան գալով, այդ կողոպուտի պատկերը նկարել տվեց իր պալատում: Դրանից մենք իմանում ենք հայոց հեթանոսական այդ տաճարի ճարտարապետության մասին: Նկարը արվել է մ.թ.ա. 714 կամ 713 թվականին, բայց տաճարը շատ ավելի հին է:

Ման վիշապի քանդակով

Արարատի թագավորության ժամանակաշրջանի սեղան

Վեց սյուների վրա եռանկյունաձև ճակտոնն է սա է այդ տաճարի ճարտարապետական գլխավոր առանձնահատկությունը: Եռանկյունի ճակտոնի գագաթը զարդարում է սրաձև տերևը՝ սուրբ ծառի նշանը, որ նաև Հայկ աստծու խորհրդանիշն էր: Այդպիսի ձև ունեցող տաճարներ ավելի ուշ հույներն էին կառուցում: Հայկական հետագա շրջանի տաճարներից դրան նման է Գառնիի հեթանոսական տաճարի ճարտարապետությունը (1-ին դար): Արդինիի մեզ հասած տաճարի պատկերը ցույց է տալիս, որ Արարատի թագավորության ժամանակներում հայկական ճարտարապետությունը շատ զարգացած է եղել:

Ճարտարապետության տեսակետից արժեքավոր են նաև Արարատի թագավորության ժամանակ կառուցված Վանի, Էրևան-Էրեբունիի, Թեշիբայինիի և այլ բերդերն ու պալատները: Այժմյան Կարմիր բլուրի վրա կառուցված Թեշիբ աստծու անունը կրող հսկա բերդն ունեցել է 150 սենյակ: Բերդի տպավորիչ մուտքը զարդարում էին երկու մեծ աշտարակները: Բերդն ուներ երկու պարիսպ: Կավի ու հարդի շաղախից հայ վարպետներն աղյուսներ էին պատրաստում և դրանցով կառուցում տներ, պարիսպներ:

Արարատի թագավորության ժամանակ, ինչպես գիտենք, հայերի գերագույն աստվածը Հայկն էր (Հալդը), իսկ հաջորդ երկու կարևոր աստվածները՝ Թեշիբը (փոթորկի ու պատերազմի աստված) և Շիվին (արևի աստված): Այս երեք գլխավոր աստվածներից բացի կային նաև մոտ 50 ուրիշ աստվածներ, այդ թվում՝ Բագբարտուն՝ Հայկի կինը, Արնին, Արտուարասին, Արազան, Էլիբուրմին և ուրիշներ

Արարատյան հայոց թագավորությանը հաջորդած Երվանդունիների թագավորության ժամանակ, երբ Հայքը մերթ անկախ էր լինում, մերթ ընկնում իրանյան Մարաստանի կամ Պարսկաստանի գերիշխանության տակ, մշակույթի զարգացումը ինչ-որ չափով դանդաղեց, և շրջակա բոլոր երկրների, այդ թվում Հայքի վրա տարածվող իրանյան ազդեցությունը որոշակի դեր կատարեց: Հայկական մշակույթը, անշուշտ, շարունակում էր պահպանել իր ավանդները՝ հատկապես ճարտարա-

պետությունը, զարդը, քանդակը, բայց և նոր ժամանակներն իրենց գործը կատարում էին: Երվանդունիների վաղ ժամանակաշրջանից գտնվել են արձաններ, դրամներ՝ հայ տիրակալների պատկերներով և այլն: Հատկապես գեղեցիկ են այդ ժամանակ պատրաստված արծաթյա պտյակները

Ինչպես գիտենք, փոփոխություն կրեց նաև հայկական հեթանոսական կրոնը: Իրանյան ազդեցության տարածման առաջին շրջանում հայ ժողովրդի մեջ պահպանվում էր Հայկի, Թեշիբի և մյուսների պաշտամունքը, ապա աստիճանաբար հայերի դիցարանում սկսեց գլխավոր դեր կատարել Արամազդը: Հայկ աստվածն աստիճանաբար մոռացվում էր, նրա հիշատակը մնաց աստղային այն համաստեղության մեջ, որը դեռ երկար ժամանակ Հայկ էր կոչվում:

Ապա հայերի մեջ սկսեցին կարևոր դեր կատարել Անահիտ, Աստղիկ, Վահագն, Տիր աստվածուհիներն ու աստվածները, որոնցում շատ գծեր հիշեցնում էին հայոց հնագույն աստվածներին, իսկ որոշ գծեր էլ՝ իրանյան և հունական պաշտամունքի արտահայտություններ էին:

Արվեստի մի ճյուղն էլ գեղարվեստական բանահյուսությունն է: Հնուց ի վեր հայ ժողովրդի մեջ ստեղծվել են զրույցներ, դյուցազնավեպեր, երգեր: Օրինակ, հայկական «Սասնա ծռեր» («Սասունցի Դավիթ») ժողովրդական դյուցազնավեպը սկսել է ստեղծվել հայոց Ռուշա II թագավորի ժամանակներում, երբ մ.թ.ա. 681 թ. Ասորեստանի Նինվե քաղաքում Սենեքերիմ թագավորի երկու որդիները սպանեցին իրենց հորը և փախան Հայաստան: Նրանք, ինչպես հիշում ենք, ապաստանեցին Սասունում, և Հայքի այս հարավային գավառում էլ ժողովուրդը ստեղծեց զրույց նրանց մասին: Դա հայոց դյուցազնավեպի «Սանասար և Բաղդասար» կոչվող առաջին ճյուղն է: Հետագայում, երբ Հայաստան եկան արաբները, այդ հինավուրց զրույցը ժողովրդի շուրթերին մի քիչ փոփոխվեց: Օրինակ, Ասորեստանի թագավորը փոխարինվեց Բաղդադի խալիֆով: Բայց վայրը նույնը մնաց՝ Միջագետքը: Բաղդադն էլ հին Նինվեից հեռու չէ:

Ձևավոր սափոր

Դասակերագարդ պատմություն հայոց

Բրոնզյա կապարճ (Արարատի թագավորություն)

Այուծապատկեր Երևան-Էրեբունի

Մարդառյուծ (Արարատի թագավորություն)

◄ Էրեբունի բերդաքաղաքի շինություններից (վերականգնում)

Զարդ. Արարատի թագավորության ժամանակաշրջանից

Արծաթյա և բրոնզյա զարդեր. Արարատի թագավորություն

Գավաթ (Արարատի թագավորություն)

Հայկական զարդ (մ. թ. ա. 7-րդ դար)

Եթե զրույցի հին տարբերակում Սանասար ու Ադրամելիք եղբայրները սպանում են Նինվեում նստող բռնակալ թագավորին, ապա նոր տարբերակում Սանասարն ու Բաղդասարը սպանում են Բաղդադում նստող բռնակալ խալիֆին: Երկու դեպքում էլ եղբայրները Հայք են գալիս:

Երվանդունիների ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. 6-5-րդ դարերում և հետո, տարածված է եղել Վահագն աստծու մասին բանաստեղծական ասքը, որի մի փոքր հատվածը, որտեղ նկարագրված է Վահագնի ծնունդը, մեզ է հասել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքում: Ահա այդ հատվածը հայոց հին լեզվից թարգմանված նորի.

Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը,
Երկնում էր նաև ծիրանի ծովը:
Ծովում երկունքի մեջ էր կարմիր եղեգնիկը՝
Եղեգնի փողից ծուխ էր դուրս գալիս,
Եղեգնի փողից բոց էր դուրս գալիս,
Եվ բոցի միջից դուրս էր վազում
Ոսկեծամ մի պատանեկիկ:
Նա կրակե մազեր ուներ,
Նա բոց մորուք ուներ,
Եվ աչքերը արեգաններ էին:

Հայոց Անահիտ դիցուհու գլուխը
(քանդակ)

Պտյակ Էրեբունիից. մ. թ. ա 5 — 4-րդ դարեր

Գայլի արձանիկ. մ. թ. ա. 6 — 5-րդ դարեր (Այրումից)

Պարզ է, որ այս երգը ավելի հին է, քան Երվանդունիների ժամանակաշրջանը: Նրա մեջ շատ հին դարերի պատկերացումներ կան: Հավանական է, որ այն սկզբից նվիրված է եղել Արարատի թագավորության ժամանակաշրջանի կամ հայոց ավելի հին աստվածներից մեկի ծննդյանը, իսկ Երվանդունիների ժամանակ գուսանները (ժողովրդական բանաստեղծները) վերագրել են Վահագնին, որն այդ ժամանակաշրջանի աստվածություն է:

Հայերի մեջ զրույցներ էին հյուսվել նաև իրենց սիրելի ցեղապետների, թագավորների մասին, և դրանք պահպանվել են շատ երկար ժամանակ. դրանցից են, ինչպես գիտենք, Հայկ-Հալդ աստվածացված հայոց ցեղապետի, հզոր թագավորներ Արամի, Արայի գործերի մասին պատմված զրույցները:

◀ Զարդ Սարդուր II թագավորի վահանի վրա

Ոսկրաքանդակներ Արարատի
հայոց թագավորության ժամանակաշրջանից

Վանիկ Արարատի թագավորության ժամանակաշրջանից

[illegible]ներ սյոյակի վրա (ինքույքի տեսարան). Երևան-Էրեբունիից ▶

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐ

ԵՐԿԱՆԴ ՉՈՐՐՈՐԴԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՋԻՆ

Մակեդոնիան գտնվում է Հունաստանի հյուսիսում: Այդտեղից էր, որ մ.թ.ա. 334թ. այդ երկրի երիտասարդ թագավոր Ալեքսանդր Մակեդոնացին, իր հունա-մակեդոնական մեծ զորքով անցնելով Դարդանելը (Հելլեսպոնտոսը), մտավ Փոքր Ասիա և պարսիկների դեմ հաղթանակ հաղթանակի հետևից էր տանում: Նա գրավեց Փոքր Ասիայի մեծ մասը, Եգիպտոսը և վերջնականապես ջախջախեց Պարսից Աքեմենյան կայսրության զորքերը Միջագետքում (Գավգամելա գյուղի մոտ): Ապա գրավեց Բաբելոնն ու այն դարձնելով իր մայրաքաղաքը՝ շարունակեց արշավանքը դեպի Արևելք և հասավ Հնդկաստան:

Նախկին Աքեմենյան կայսրությունն ամբողջությամբ դարձավ Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունը: Ալեքսանդրը մի քանի ուրիշ երկրներ էլ կցեց իր այդ պետությանը, և այն արդեն ավելի մեծ էր, քան Աքեմենյան կայսրությունը:

Ալեքսանդր Մակեդոնացին ձգտում էր միացնել Արևմուտքի և Արևելքի մշակույթները: Արևելքի ու Արևմուտքի կռիվներում Արևելքը պարտվել էր, և Արևմուտքի հզոր զորաբանակները հունական մշակույթը բերել էին Արևելք: Բայց այդ մշակույթը անաղարտ իշխել չէր կարող, միավորվում էր Արևելքի հինավուրց քաղաքակրթությանը: Եվ դա էլ Ալեքսանդրի նպատակն էր: Որպես այդ միավորման խորհրդանշան Ալեքսանդր Մակեդոնացին ամուսնացավ պարսկուհու հետ: Մակեդոնացին, միաժամանակ, նոր քաղաքներ էր հիմնում, որոնց մի մասն իր անունով կոչում էր Ալեքսանդրիա:

Այդպես գոյացան **հելլենիստական** դարաշրջանն ու մշակույթը: Հելլեն նշանակում է հույն, հելլենիստական՝ հունական: Բայց Փոքր Ասիայից մինչև Հնդկաստան ընկած տարածքում Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների շնորհիվ ձևավորված նոր քաղաքակրթությունն ու մշակույթը ընդունված է անվանել ոչ թե հունական, այլ՝ հատկապես **հելլենիստական** բառով: Այդպես կոչվեց հունական ազդեցությամբ Արևելքում ձևավորված նոր մշակույթը:

Թեև Ալեքսանդր Մակեդոնացին անցավ Մեծ Հայքից հարավ գտնվող ճանապարհներով և Հայաստան չմտավ

(չհաշված Հայք ուղարկված հունական մեկ-երկու փոքր ջոկատ), բայց հելլենիստական մշակույթն ընդգրկեց նաև Հայաստանը: Ամբողջ Հարավ-արևմտյան Ասիայում իրանական մշակութային իշխանությունը փոխարինվեց հելլենիստականով: Հարավ-արևմտյան Ասիայի ճարտարապետությունը, քանդակը, նկարչությունը, զարդարվեստը հունական արվեստի կնիքն էին ընդունում: Ամենուրեք տարածվում էր հունարեն լեզուն: Այդ ժամանակաշրջանի տարբեր ժողովուրդների դրամների վրա հունարեն էին գրում, հունական ու հունաձև անուններ էին դնում մարդկանց ու քաղաքներին:

Ավելի քան երեք հարյուր տարի տևեց հելլենիստական դարաշրջանը, մինչև առաջին դարը:

Մ.թ.ա. 323թ. Ալեքսանդր Մակեդոնացին վախճանվեց Բաբելոնում: Նրա դիակը մեղրի մեջ տեղափոխեցին Մակեդոնիա: Ալեքսանդրի ստեղծած լայնարձակ պետությունը բաժանվեց նրա մի քանի զորավարների միջև: Ստեղծվեցին առանձին հելլենիստական պետություններ: Զորավար Սելևկոս Նիկատորին ամենամեծ բաժինն ընկավ: Նա մ.թ.ա. 312թ. դարձավ Ալեքսանդրի կայսրության գրեթե ամբողջ ասիական մասի թագավորը: Հարավ-արևմտյան Ասիայում սկիզբ առավ Սելևկյանների թագավորությունը, որը տևեց մինչև մ.թ.ա. 83թ.: Եգիպտոսը բաժին ընկավ Պտղոմեոս զորավարին, որով այդ երկրում սկիզբ առավ Պտղոմեոսյան թագավորական տունը: Բուն Մակեդոնիայում և Հունաստանում իշխանությունն անցավ Անտիգոնեսյաններին:

Սելևկյանների պետության մայրաքաղաքն Անտիոքն էր, որը գտնվում էր Ասորիքում (Սիրիայում): Սելևկյանները մի շարք քաղաքներ հիմնադրեցին, որոնց մի մասը կոչվում էր հենց Սելևկիա: Նրանք իրենց պետության մեջ միավորեցին Հնդկաստանից մինչև Փոքր Ասիայի խորքերն ընկած երկրները, այդ թվում Մարաստանը, Պարսկաստանը, Միջին Ասիան, Միջագետքը: Նրանք իրենց իշխանությունը տարածեցին նաև Փոքր Հայքի վրա և ձգտում էին նվաճել Մեծ Հայքը: Բայց ապարդյուն: Սելևկյանների պետական գոյության մոտ 230 տարվա ընթացքում նրանք չկարողացան նվաճել կամ իրենց ազդեցության տակ գցել Մեծ Հայքը: Հայաստանը մնում էր անկախ թագավորություն և միշտ հակառակորդ Սելևկյաններին: Ավելին, հայերն օգնում էին հարևան ժողովուրդներին՝ դուրս գալու Սելևկյանների իշխանության տակից: Այդպես, Հայքը զորք ուղարկեց Կապադովկիա, որը գտնվում էր Փոքր Հայքից արևմուտք, և այդ երկրից դուրս քշեց Սելևկյանների զորքերը:

Մեծ Հայքում շարունակում էին իշխել Երվանդունիները. ընդ որում, թագավորները հաճախ կրում էին Երվանդ անունը: Վերջին Երվանդ թագավորը, հավանաբար, Երվանդ IV-ն էր: Նա Արաքս և Ախուրյան գետերի միացման վայրում կառուցեց նոր քաղաք՝ Երվանդաշատ, որ դարձավ երկրի երկրորդ մայրաքաղաքը: Արա-մայրը (Արմավիրը) շարունակում էր մնալ մայրաքաղաք, նաև որպես կրոնական կենտրոն: Այստեղ էր գտնվում հայտնի գուշակ-պատգամախոսը: Իսկ Երվանդի եղբայր Երվազը հայոց քրմապետն էր: Երվանդը Ախուրյան գետի ափին կառուցեց նաև մի նոր կրոնական կենտրոն՝ Բագարանը:

Երվանդ IV-ի օրոք Հայաստանում առհասարակ նոր քաղաքներ էին հիմնվում, որոնցից մի քանիսը իր՝ թագավորի անունով էին կոչվում, դրանցից էր նաև Երվանդակերտը

Երվանդունիների պետությունը հելլենիստական էր. գործերը վարում էին հունարեն, մեծամեծները հունական զգեստներ էին հագնում, Հայքում ուսուցումը հունարեն էր, Հայաստան էին մուտք գործել հունական աստվածները՝ Ապոլլոնը, Արտեմիսը և ուրիշներ:

Արմավիրում գտնվել են այն ժամանակներում գրված հունարեն արձանագրություններ, որոնք ցույց են տալիս հելլենիստական մշակույթի մեծ դերը Հայքում:

Երվանդունիները ջանում էին պահպանել մեծ Հայքի այն սահմանները, որ դեռևս որոշել էր Արա (Արգիշտի) Առաջին մեծ թագավորը: Բայց դա բավական դժվար էր: Դեռևս Մարաստանի հզորության ժամանակ Հայքից խլված արևելյան հողերը մնում էին Երվանդունիների պետությունից դուրս: Հարավային Կորճայք աշխարհի մի մասը՝

Տմորիքը, Կորդուքը գրավել էին Սելևկյանները: Ծոփքը, որը դեռ Արարատյան թագավորության ժամանակ հաճախ էր փորձում անջատվել Մեծ Հայքի պետությունից, մ.թ.ա. 3-րդ դարում անջատվել և առանձին թագավորություն էր դարձել:

Ծոփքում նույնպես Երվանդունիներ էին իշխում: Մ.թ.ա. 3-րդ դարի կեսերին նրանք Ծոփքից հարավ գտնվող Կոմմախա երկիրը, որը հելլենիստական շրջանում կոչվում էր Կոմմագենե, միացրին Ծոփքին և ստեղծեցին հայկական ուժեղ մի պետություն: Այն լավ հարաբերություններ էր պահպանում Մեծ Հայքի թագավորության հետ Ծոփքի թագավորությունն էլ էր դիմադրում Սելևկյանների նվաճողական փորձերին: Այստեղի թագավորներից էր Սամ (Շամ) Երվանդունին, որը մ.թ.ա. 245թ. հին Կոմմախայում իր անունով հիմնեց Սամոսատ քաղաքը և դարձրեց պետության մայրաքաղաք: Սամին հաջորդեց նրա որդին՝ Արշամը, որն իր հերթին կառուցեց նոր մայրաքաղաք՝ Արշամաշատ՝ բուն՝ Ծոփքում:

Մ.թ.ա. 223թ. Սելևկյանների պետության թագավոր դարձավ Անտիոքոս III Մեծը: Նա արշավեց Ծոփքի հայկական թագավորության դեմ, շրջապատեց Արշամաշատը, բայց գրավել չկարողացավ: Նա կեղծ բարեկամություն հաստատեց հայերի հետ, իր քույր Անտիոքեսին ամուսնացնելով Ծոփքի հայոց թագավոր Քսերքսեսի հետ:

Անտիոքոս III-ը հզորացրեց Սելևկյանների պետությունը. նա արշավեց մինչև Հնդկաստան, Միջին Ասիայում հաղթեց հզորացող պարթևներին: Մ.թ.ա. 201թ. Անտիոքոսը քրոջ միջոցով սպանել տվեց իր փեսային՝ Ծոփքի հայոց թագավորին, և Մեծ Հայքի այդ աշխարհը որպես սատրապություն միացրեց իր պետությանը: Նրանից անջատեց Կոմմագենեն և դարձրեց առանձին սատրապություն: Ապա Անտիոքոսը ջանում է իրեն ենթարկել նաև Մեծ Հայքը: Դա նրան կարծես ինչ-որ չափով սկսում էր հաջողվել: Նա Մեծ Հայքում կառավարիչ (հունարեն՝ ստրատեգ) նշանակեց մի հայ ազնվական-զորավարի՝ Արտաշես անունով, որը նույնպես ծագում էր Երվանդունիներից Բայց Մեծ Հայքում դեռ թագավորում էր Երվանդ IV-ը: Արտաշեսն իր օգնական Սմբատ Բագրատունու օժանդակությամբ հարձակվեց Երվանդի զորքերի վրա

Ինչպես որ Արարատի թագավորության ժամանակ Արամի հայոց թագավորական տնից դժգոհ Պարույրը մարերի հետ դաշնակցեց և խլեց հայոց գահը, այդպես էլ այժմ հայոց ազնվական-զորավար Արտաշեսը Սելևկյանների հետ դաշնակցեց և Երվանդունիներից խլեց հայոց գահը:

Արտաշեսի զորավար Սմբատը գրավեց Երվանդաշատը, և նրա զինվորներից մեկը սպանեց Երվանդ թագավորին: Մեծ Հայքի ամբողջ իշխանությունն անցավ Արտաշեսին: Սա ձևացնում էր, թե ենթակա է Անտիոքոս III Սելևկյանին: Բայց դա տևեց մի երկու տարի միայն:

Անտիոքոսը Ծոփքում կառավարիչ կարգեց մի այլ հայ զորավարի՝ Զարեհին: Այս ամենը Անտիոքոս III-ն անում էր մի մեծ նպատակով. նա ուզում էր գրավել նաև Մակեդոնիան, Հունաստանը, հետո նաև Հռոմը և դրա համար ամրապնդում էր իր թիկունքը:

Մ.թ.ա. 192թ. Անտիոքոսն իր զորքով մտավ Հունաստան և այդ երկիրն արդեն գրավված էր համարում, երբ հանդիպեց հռոմեական բանակներին: Հռոմեացիները ծովում ու ցամաքում հաղթեցին սելևկյան զորքերին, և սրանք նահանջեցին դեպի Փոքր Ասիա: Հռոմեացիները հետապնդեցին Անտիոքոսին, և իրենք էլ անցնելով Դարդանելը մտան Փոքր Ասիա: Այդպես, ուժեղացող Հռոմը առաջին անգամ ոտք դրեց ասիական մայր ցամաքում: Նոր հզոր պետություն էր ասպարեզ գալիս: Մի պետություն, որ այս անգամ էլ ինքն էր դառնալու աշխարհում ամենազորեղը

Մ.թ.ա. 190 թվականին Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ մեծ ճակատամարտ տեղի ունեցավ Հռոմի և Անտիոքոսի սելևկյան զորքերի միջև: Հռոմեացիները ջախջախեցին Սելևկյանների զորքերին: Փոքր Ասիայի մեծ մասն անցավ հռոմեացիներին:

Սելևկյանների այս պարտությունը ձեռնտու էր Հայաստանին: Անտիոքոսը, որ գրավել էր Փոքր Հայքը, Ծոփքը

և Մեծ Հայքի որոշ շրջաններ, ստիպված եղավ հանգիստ թողնել Հայաստանը: Իսկ Մեծ Հայքում արդեն թագավոր էր Արտաշես Առաջինը, Ծոփքում՝ Զարեհը:

ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՏՈՒՆ

Արտաշես I-ի գահակալության սկիզբը համարում են մ.թ.ա. 189թ. այսինքն Մագնեսիայի ճակատամարտից մոտ մի տարի հետո: Բայց իրականում Արտաշեսը դրանից առաջ էլ արդեն Մեծ Հայքի թագավորն էր: Երվանդ IV-ի սպանությունից հետո Արտաշեսը փաստորեն հայոց թագավոր դարձավ:

Նա իր արամեերեն գրված արձանագրություններից մեկում իրեն կոչում է «Արտաշես արքա, Զարեհի որդի, Երվանդունի»: Նա ուներ նաև **Բարի** տիտղոսը:

Ճիշտ է, Արտաշեսը սերված էր Երվանդունիներից, բայց նա թագավորական նոր տան հիմնադիր էր Հայաստանում: Նրա գահը ժառանգած հայոց հաջորդ թագավորները Արտաշեսյաններ էին:

Արտաշեսը թագավորեց մինչև մ.թ.ա. 160 թվականը: Նրա մասին տարբեր ազգության պատմագիրներ շատ են գրել: Կարևոր տեղեկություններ է տալիս հայ պատմիչ Ողյումպը, որը հայոց Դարանաղյաց գավառի Անի քաղաքում հեթանոսական մեհյանի քուրմ էր: Նա գրի է առել շատ դեպքեր, այդ թվում Արտաշեսի մասին: Ողյումպը, հավանաբար, գրում էր հայերեն, նախամաշտոցյան ինչ-որ տառերով: Այս քրմի գրածները իր գրքում օգտագործել է Մովսես Խորենացին, թեև նա այլ աղբյուրների ազդեցությամբ Արտաշեսին վերագրել է գործեր (օրինակ, Կրեսոսի սպանությունը), որոնք նա չի կատարել, իսկ նրա կատարած որոշ գործեր վերագրել է այլ թագավորների (օրինակ, Վաղարշակին):

Այլազգի հեղինակներից Արտաշես (հունարեն՝ Արտաքսիաս) թագավորի մասին գրել են Դիոդորոս Սիցիլիացին, Պոլիբիոսը, Պլուտարքոսը, Ստրաբոնը և ուրիշներ:

Այս բոլոր հեղինակները միաբերան վկայում են, որ Արտաշեսը հմուտ և ուժեղ թագավոր է եղել, ու նրա օրոք Հայաստանը Հարավ-արևմտյան Ասիայի ամենահզոր տերությունն է դարձել:

Արտաշեսն իր գործերը կատարում էր Սմբատ Բագրատունու օգնությամբ: Հույն պատմագիրները Սմբատին Նիկեփոր են անվանում: Սմբատ Բագրատունին հայոց թագադիրն էր. դա այն ժամանակ շատ բարձր պաշտոն էր: Քանի որ հայոց մեջ Արտաշես անունով ուրիշ թագավորներ էլ են եղել, ուստի այս թագավորը կոչվում է Արտաշես I:

Մագնեսիայի ճակատամարտից հետո, երբ Սելևկյան պետությունը թուլացել էր, իսկ Հռոմն էլ Արևելքում դեռ այնքան ուժեղ չէր, որ Հայքին սպառնար, Արտաշես I-ի գլխավոր գործը եղավ վերականգնել Մեծ Հայքի ամբողջությունը հայոց թագավորության ներքո: Նա լավ հարաբերություններ հաստատեց Հռոմի հետ և սկսեց գործել:

Արտաշեսն առաջնորդվում էր այն նույն սկզբունքով, որով գործում էին Արարատի թագավորության տիրակալները՝ մեկ պետության մեջ միավորել հայաբնակ շրջանները: Ըստ Խորենացու վկայության հայոց այս արքան ղեկավարվում էր լեզվական սկզբունքով՝ իր պետության մեջ էր միավորում հայոց լեզվի տարածման շրջանները, և նրա տերության սահմանները ճշտվում էին հայոց լեզվի տարածման սահմանների համաձայն:

Արտաշեսն ամենից առաջ արշավեց դեպի արևելք: Հիշենք, որ դեռևս Մարաստանի հզորության ժամանակ Մեծ Հայքից անջատվել էր նրա արևելյան մի մեծ հատվածը: Դա Կասպից ծովի արևմտյան ափերից մինչև Արցախ ընկած տարածքն էր, որ կոչվում էր Փայտակարան: Արտաշեսը հաղթեց տեղի տիրակալի զորքերին և Փայտակարանը կրկին միացրեց Մեծ Հայքին: Ապա նա անցավ դեպի հյուսիս, պատերազմ սկսեց ալանների (օսերի) դեմ: Ետ նվաճեց Մեծ Հայքի հյուսիսային մասերը, որոնք խլվել էին Հայաստանից: Դրանք Գուգարքի հյուսիսային (մինչև Քուռ գետը) և արևմտյան հատվածներն էին՝ ներառյալ Ջավախքը:



Արտաշես Առաքինի արամեերեն արձանագրություններից

Կարնո աշխարհի (Բարձր Հայքի) մի մասն անցել էր Փոքր Հայքին: Այդ շրջաններն էլ մինչև Եփրատ, Արտաշեսը կրկին միացնում է Մեծ Հայքի թագավորությանը:

Հետո արշավելով դեպի հարավ՝ Մեծ Հայքի Կորճայք աշխարհից Սելևկյանների խլած Տմորիքը գրավեց ու միացրեց իր տերությանը:

Այդպես, Արտաշես Առաջինն անում էր այն, ինչ ժամանակին արել էին Վանի հայոց թագավորները, հատկապես Մենուան և Արա Առաջինը՝ միավորել հայկական անջատ երկրամասերը, վերականգնել Մեծ Հայքի ամբողջությունը: Մ.թ.ա. 1-ին դարի հույն աշխարհագրագետ, պատմագիր Ստրաբոնը, նկարագրելով Արտաշեսի կատարած վերամիավորումները, վերջում Մեծ Հայքի մասին գրել է՝ «Բոլորը միալեզու են»: Այսինքն՝ Արտաշեսը կրկին միավորել է հայ ժողովրդի բնակության շրջանները: Դուրս մնաց Ծոփքը: Իսկ Փոքր Հայքը, որ նույնպես հայալեզու էր, Մեծ Հայքի կազմի մեջ առաջ էլ չի մտել:

Սելևկյանների թագավորն այդ ժամանակ Անտիոքոս IV Եպիփանեսն էր: Նա, տեսնելով Հայաստանի հզորացումը, մ.թ.ա. 165 թվականին արշավանք սկսեց հայերի դեմ: Արտաշեսը վաղորոք իմանալով այս Անտիոքոսի մտադրությունը՝ իր զորքերն ուղարկեց Միջագետք: Այստեղ տեղի ունեցավ արյունոտ ճակատամարտ: Կողմերից ոչ մեկը չհաղթեց, բայց Անտիոքոսն այլևս Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության դեմ չարշավեց: Նա իր ուղղությունը փոխեց և մտավ Ծոփք ու գրավեց Մեծ Հայքից անջատված այդ երկրամասը, սպանեց թագավորին, որ Արտաշեսի ազգականն էր: Անտիոքոսը գրավեց նաև այլ երկրներ, այդ թվում Մարաստանը: Բայց Արտաշեսի պետություն մտնել չկարողացավ:

Փոքր Հայքից արևմուտք գտնվող Կապադովկիայի թագավոր Արիարաթը Ծոփքում թագավոր կարգեց այդտեղի սպանված թագավորի որդուն՝ Մեհրուժանին: Արտաշեսը շատ ջանքեր թափեց Ծոփքը կրկին Մեծ Հայքի մեջ մտցնելու համար, բայց արդյունքի չհասավ: Այդպիսով, Մեծ Հայքի միավորումը այդ մի կետում թերացավ:

Արտաշեսը երկրի ներսում էլ շատ գործեր կատարեց: Միառժամանակ Հայաստանում ապաստանեց Հռոմի ոխերիմ թշնամի կարթագենացի Հաննիբալը, որ խոշոր քաղաքականագետ էր և զորավար: Նրա հետ խորհրդակցելով՝ Արտաշեսը Արաքս և Մեծամոր գետերի միացման վայրում նոր մայրաքաղաք կառուցեց և իր անունով կոչեց Արտաշատ (ավերակները Խորվիրապի շրջակայքում են): Արտաշեսի ժամանակներում մի քանի նշանավոր քաղաք էլ կառուցվել է նրա հոր՝ Զարեհի անունով, այդ թվում երեք Զարեհավան (Ուրմիա լճի շրջանում, Բագրևանում և Հավնունիքում՝ Արաքսի ափին): Չգիտենք՝ այդ քաղաքները Արտաշեսի հայրն է կառուցել, թե Արտաշեսը:

Ապա՝ հողային բաժանումներ կատարեց. գյուղական համայնքների հողաբաժինները սահմանազատեց անհատ հողատերերի (իշխանների) հողամասերից: Այդ բաժանումների սահմաններում Արտաշեսը կանգնեցրեց քարե սալեր, որոնց վրա արամեերեն (քաղդեերեն) արձանագրություններ փորագրել տվեց: Արամեերենը պարսից Աքեմենյան կայսրության պետական լեզուն էր: Չնայած հելլենիստական այն դարաշրջանում Հայքում և հարևան երկրներում գրում էին հիմնականում հունարեն, բայց Արտաշեսը հին ավանդույթով իր արձանագրությունները գրել տվեց արամեերեն: Հիշենք, որ դեռևս Արարատի թագավորության վերջին շրջանում հայերն արդեն գրում էին արամեերեն:

Արտաշեսը նաև երկիրը բաժանեց զինվորական և վարչական չորս մասերի՝ հյուսիսային, հարավային, արևելյան, արևմտյան, այս մասերն էլ՝ ավելի փոքր գավառների:

Արտաշես Առաջինի ժամանակ Հայաստանի կյանքը բարեկեցիկ էր, երկիրը ծաղկում էր: Այդ է պատճառը, որ ժողովուրդը սիրեց իր թագավորին ու նրա կյանքի դեպքերը գեղեցիկ գրույցներ դարձրեց: Օրինակ՝ Մովսես Խորենացու գրքում պահպանվել է ալանների դեմ Արտաշեսի մղած պատերազմից մի նկարագրություն: Ալանների թագաժառանգը գերի է ընկնում հայերի ձեռքը, և նրա քույրը, բարձրանալով Քռի մյուս ափին գտնվող մի ժայռի վրա խնդրում է Արտաշեսին վերադարձնել եղբորը.

Քեզ եմ ասում, քաջ այր Արտաշես,
Որ հաղթեցիր ալանների քաջ ազգին,
Եկ, համաձայնիր իմ՝ ալանների աչագեղ դստեր խոսքերին
Եվ տուր այդ պատանուն:
Որովհետև օրենք չէ, որ դյուցազունները իբրև քեն
Ուրիշ դյուցազունների սերունդը ոչնչացնեն
Կամ որպես ծառա պահեն ստրուկների կարգում
Ու այդպես երկու քաջ ազգերի մեջ
Մշտական թշնամություն հաստատեն:

Արտաշես թագավորը սիրահարվում է ալանների գեղեցկուհուն և քանի որ այդ պահին չէր կարող աղջկա հետ ամուսնանալու համար վճարել տասնյակ հազարավոր ոսկիներ, փախցնում է նրան: Հայ ժողովրդական երգիչները՝ գուսանները երգելով պատմել են՝

Հեծավ քաջ արքա Արտաշեսն իր գեղեցիկ սև ձին
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը
Ու որպես սրաթև արծիվ անցնելով գետը
Եվ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը
Գցեց ալանների օրիորդի մեջքին,
Ու շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը
Նրան արագ իր բանակը հասցնելով:

Ապա նկարագրել են Արտաշեսի և Սաթենիկի հարսանիքը:

Հայոց գուսանները երգելով պատմել են նաև, որ Արտաշեսին մարդիկ շատ էին սիրում, ու նրա մահվան ժամանակ շատերն անձնասպան էին լինում: Իսկ թագաժառանգ որդին՝ Արտավազդը, ասում էր.

Երբ դու գնացիր
Ու ամբողջ երկիրը քեզ հետ տարար,
Ես այս ավերակների վրա
Ինչպես թագավորեմ:

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Արտաշես Առաջինից հետո շուրջ 60 տարի Հայաստանը խաղաղ էր: Արտաշեսն այնպես էր հզորացրել երկիրը, որ հարևան պետություններից որևէ մեկը չէր համարձակվում հարձակվել նրա վրա: Արտաշեսից հետո թագավորեց նրա ավագ որդի Արտավազդը, ապա մյուս որդին՝ Տիրանը: Այս ընթացքում, հավանական է, որ Հայքում իշխել է նաև Վաղարշակ թագավորը

Այդ ժամանակաշրջանում էր, որ Միջին Ասիայում ուժեղացան պարթևները: Դրանք, ինչպես գիտենք, իրան-

Տիգրան Մեծ (պատկեր հայկական դրամի վրա)

յաններ էին: Պարսից Աքեմենյան թագավորական տան անկումից հետո իրանյանների մեջ ամենաուժեղը դարձան պարթևների տիրակալները՝ Նրանցից մեկը՝ Արշակ անունով, մ.թ.ա. 247 թվականին իրեն հայտարարեց թագավոր: Այդպես, Միջին Ասիայում ստեղծվեց Պարթևական պետությունը. որը հետո մեծ դեր պիտի խաղար հայ ժողովրդի պատմության մեջ:

Այս պետությունը շատ արագ հզորացավ և սկսեց սպառնալ թե Սելևկյան պետությանը և թե Հայքին: Պարթևների թագավոր Միհրդատ II-ը, որ գահ էր բարձրացել մ.թ.ա. 123 թ., Սելևկյաններից նվաճեց Պարսկաստանը, Բաբելոնը և ապա հարձակվեց Արտավազդի հայկական զորքերի վրա: Նրան հաջողվեց պատանդ վերցնել թագաժառանգ Տիգրանին և տանել Պարթևստան: Տիգրանը բավական ժամանակ՝ ապրեց պարթևների արքունիքում, հմտացավ երկիր կառավարելու և պատերազմ վարելու արվեստներին:

Մ.թ.ա. 95 թ. Հայաստանը մնացել էր առանց թագավոր: Պարթևները Տիգրանին, որպես իրենց մարդու, ուղարկեցին Հայաստան: Եվ այդ նույն թվականին մոտ 45 տարեկան Տիգրանը հայոց գահ բարձրացավ: Պարթևները իբրև Տիգրանի արձակման գին հայերից վերցրել էին Մեծ Հայքի հարավային շրջաններից մի մեծ հողամաս, որ կոչվում էր Յոթանասուն հովիտներ:

Դառնալով թագավոր՝ Տիգրան II-ը անմիջապես սկսեց ինքնուրույն քաղաքականություն վարել: Նա իրեն նպատակ դրեց նախ իր թագավորությանը միացնել Մեծ Հայքի այն ընդարձակ հատվածը, որն Արտաշեսը չէր կա-

ողացել միացնել իր պետությանը: Դա Ծոփքն էր: Մ.թ.ա. 94 թ. հայկական զորքը մտավ Ծոփք և գրավեց այն: Այդպիսով, Մեծ Հայքը մոտեցավ ամբողջացման: Չմիացված մնացին մի քանի հողամասեր, որոնք Տիգրանը ծրագրում էր շուտով գրավել: Բայց պետք էր նախ ամրապնդել Ծոփքի միացումը: Մեծ Հայքի այս աշխարհը, գտնվելով երկրի հարավ-արևմտյան մասում, սահմանակից էր Փոքր Հայքին և մոտ Կապադովկիային: Վերջինս հովանավորում էր Ծոփքի հայոց թագավորությանը և պահում էր այն Մեծ Հայքից դուրս: Պետք էր հարվածել Կապադովկիային: Մ.թ.ա. 93 թվականին Տիգրանի զորքը արշավեց դեպի Կապադովկիա և ջախջախեց այդ երկրի թագավոր Արիոբարզանի զորաբանակը: Ծոփքը կրկին Մեծ Հայքի մեջ էր

[illegible]ծ Հայքից դուրս մնացած մի քանի հողամասեր էլ, այդ թվում Յոթանասուն հովիտները, գտնվում էին պարթևների իշխանության տակ: Ուրեմն, Տիգրանի գլխավոր ախոյանը դարձավ Պարթևաստանը, որն արդեն շատ էր հզորացել: Պարթևների դեմ պատերազմ սկսելուց առաջ Տիգրանը դաշինք կնքեց Պոնտոս կոչված պետության հետ: Պոնտոսի հողերը Սև ծովի հարավային ափերն էին և Ղրիմը: Այդ ժամանակ նրա թագավորն էր Միհրդատ Եվպատորը: Նա պարթև էր, հմուտ քաղաքականագետ, զորավար և գիտուն մարդ (գիտեր 40 լեզու): Տիգրանը Միհրդատ Եվպատորի հետ բարեկամության ու փոխադարձ օգնության դաշինք կնքեց և այն ամրապնդեց՝ ամուսնանալով Միհրդատի դստեր հետ: Դրանից հետո հայոց զորքը մտավ Յոթանասուն հովիտները, գրավեց այն ու միացրեց Մեծ Հայքին:

Ապա Տիգրանն արշավեց դեպի արևելք: Նա ջախջախեց պարթևական զորքերը, գրավեց Ատրպատականը (Մեծ Հայքից հարավ-արևելք), մտավ Մարաստան, հրդեհեց սրա մայրաքաղաք Եկբատանը: Պարթևների թագավոր Գոդերզը իրեն պարտված ճանաչ[illegible] և ընդունեց Հայքի գերիշխանությունը: Տիգրանը պարթևների թագավորին գրկեց արքայից արքա տիտղոսից և իրեն հայտարարեց արքայից արքա, այսինքն՝ թագավորների թագավոր:

Ապա Տիգրան Մեծի զորքերը արշավե[illegible]ն դեպի հարավ և գրավեցին Կորդուքը, որը Մեծ Հայքի հարավային Կորճայք աշխարհի մի մասն էր: Այդպես Մեծ Հայքն ամբողջացավ: Արարատյան հայոց թագավորների ջանքերով դեռևս վեց-յոթ [illegible]ր տարի առաջ միավորված Մեծ Հայքը կրկին միացյալ դարձավ՝ այն էլ մի նոր ու հզոր թագավորության մեջ:

Բայց Տիգրասր ծրագրերն ավելի մեծ էին: Նա սակ արշավեց Մեծ Հայքից հարավ դեպի Միջագետք և գրավեց Ադիաբեն[illegible] երկ[illegible]ը՝ Ասորեստանի Նինվե քաղաքով, հետո նվաճեց Մծբին հայտնի քաղաքը, գրավեց Օսրոյենե կոչվող երկրը [illegible]ա նշանավոր մայրաքաղաքով:

Պարթևներից հետո հաջորդ մեծ ուժը Հարավ-ա[illegible]ստյան Ասիայում Սե[illegible]երի պետությունն էր: Տիգրանը պետք է բախվեր նրա հետ: Բայց պատերազմ չեղավ: Տեսնելով Տիգրանի հզորությունը, մեկը մյուսի հետևից նրա տարած փայլուն հաղթանակները՝ Սելևկյանները երկիրը հանձնեցին նրան: Տիգրանը Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքում մ.թ.ա. 83 թ. գահ բարձրացավ որպես արքայից արքա: Սելևկյա[illegible]երի պետությունը վերացավ՝ դառնալով հայոց պետության մի մաս: Տիգրան Մեծի զորաբանակները [illegible]ակելով հոնց արշավանքը, գրավեցին Փյ[illegible]ան՝ Միջերկրական ծովի ափին, հրեաների երկրի մի մասը, [illegible]ով հյուսիս, հայկական զորքերը ստաս Կիլիկիա: Միջերկրական ծովի ափերը՝ Կիլիկիայից մինչև Եգիպտոս հայոց իշխանության տակ էին. Հայերի ձեռքին էին նաև հին աշխարհի այնպիսի մեծ նավահանգիստներ, ինչպիսիք են Տարսոնը, Լաոդիկեան, Սելևկիան, Տյուրոսը, Սիդոնը, Բերիթ[illegible] (Բեյ[illegible]թը) և այլն:

Տիգրանը [illegible]ավեց նաև Կոմմագենե երկ[illegible] Ծոփքից հարավ)՝ Միջագետքի և Պաղ[illegible]սի, [illegible]ինչպես և սրանցից հարավ գտնվող մի քանի ժողովուրդներ, այդ թվում արաբական մի [illegible]որ՝ գ[illegible]ր հնա[illegible]դություն [illegible]այտնեցին Տիգրան Մեծ[illegible]ությունն արեցին Մեծ Հայքից (Քուռ գետ[illegible]հյուսիս գտ[illegible] ու [illegible]ոքը:

Այդպես ստեղծվեց հայկական կայսրութ[illegible]ն, որն իր բն[illegible]յթով [illegible]սիստ[illegible]ան [illegible]: Այդ հսկա ու բազմազգ



[illegible]ան Մեծի Հայոց կայսրությունը

պետության պաշտոնական լեզուն հունարենն էր, իշխում էր հելլենիստական մշակույթը: Միաժամանակ դա [illegible] հա[illegible] խոսակցական լեզվի ավելի տարածման ժամանակաշրջան էր: Մեծ Հայքը ամբողջությամբ հայախոս լի[illegible]ում՝ հայերենը տարածվում էր նաև հարևան երկրներում: Տիգրան Մեծը Հայաստան բերած գերիներին էլ պար[illegible]տա[illegible]ում էր հայերեն խոսել: Օրինակ, նա Հրեաստանից շատ հրեաներ գերի բերեց Հայք (բնակեցրեց Վանի մո[illegible]տա[illegible]այքում) և պարտադրեց նրանց սովորել և խոսել հայերեն:

Անհրաժեշտ էր նաև նոր մայրաքաղաք կառուցել, որը լիներ նոր կայսրության ավելի կենտրոնական մի վայ[illegible]ում (Արտաշատն այլևս կենտրոն չէր): Մեծ Հայքի հարավային Աղձնիք աշխարհում Տիգրանն ընտրեց մի այդպի[illegible]սի տեղ: Դա իրոք մոտավոր կենտրոն էր իր պետության մեջ: Նա այդտեղ կառուցեց իր անունով կոչվող նոր մայ[illegible]ր[illegible]աքաղաք՝ Տ[illegible]ռանակերտը: Այն դարձավ մեծ ու շքեղ քաղաք՝ հսկա պարիսպներով, հոյակերտ պալատներով: Ապա՝ Տիգրանակերտ անունով մի քանի այլ քաղաքներ էլ կառուցվեցին Հայաստանում: Տիգրանը իր կայսրու

թյունը մասերի բաժանեց: Անտիոքում կառավարիչ կարգեց իր զորավար Բագարատին, իսկ Մծբինում՝ իր եղբայր Գուրասին: Երկրի առևտուրը զարգացնելու համար Տիգրանը Միջագետքի առևտրական ճանապարհները մարդաբնակ դարձրեց: Այդ ճանապարհների շրջակայքում նա բնակեցրեց իրեն դաշնակից արաբական մի քանի քոչվոր ցեղեր՝ նրանց արտոնություններ տալով: Դա ապահովեց ճանապարհների անվտանգությունը և նպաստեց առևտրի ծաղկմանը: Տիգրան Մեծը նաև արտոնություններ տվեց իր պետության բոլոր քաղաքներին՝ Եվ նրանք բարգավաճում էին:

Տիգրանյան Հայաստանը դեմ-հանդիման կանգնած էր Հռոմեական կայսրության առաջ: Արևելքում Հռոմը մնաց միակ ուժը, որից Տիգրանը պետք է զգուշանար:

Հռոմի նվաճած երկրներին ավելի մոտ էր Պոնտոսի թագավորությունը: Իսկ Հռոմն Արևելքը նվաճելու ծրագիր ուներ, և սկսվեցին պոնտա-հռոմեական պատերազմները: Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորը սկզբում հաջողություն ունեցավ, նա հռոմեական լեգեոնները դուրս վռնդեց Փոքր Ասիայից: Բայց հետո հռոմեացիները սկսեցին հաղթանակներ տանել: Նրանց զորավար Լուկուլլոսը ի վերջո մ.թ.ա. 71 թ. ջախջախեց Միհրդատի զորքերը, գրավեց Պոնտոսի թագավորությունը: Միհրդատը փախավ իր փեսայի՝ Տիգրանի մոտ: Լուկուլլոսի դեսպանը պահանջեց Միհրդատին: Տիգրանը մերժեց:

Հայկական զորքերը կռվում էին Եգիպտոսի մոտ: Տիգրանը մտադրվել էր գրավել ամբողջ Եգիպտոսը: Բայց այդ ժամանակ նա լուր ստացավ, որ Լուկուլլոսի հռոմեական զորաբանակը մտել է Հայք:

Հռոմեացիների դեմ նախ դուրս եկավ Տիգրանի Մեհրուժան զորավարը: Բայց պարտվեց: Հռոմեացիները պաշարեցին Տիգրանակերտը: Տիգրանի և Լուկուլլոսի բանակները հանդիպեցին Նիկեփորիոն գետի ափերին: Մ.թ.ա. 69 թվականի հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած ճակատամարտում հայկական բանակը պարտվեց: Իսկ Տիգրանակերտի հայկական կայազորի հույն զորամասը քաղաքի դարպասները բացելով ներս թողեց հռոմեական զորքին: Հռոմեացիները կողոպտեցին ու քարուքանդ արեցին հոյակերտ քաղաքը:

Լուկուլլոսը շարունակեց արշավանքը դեպի Արտաշատ: Հայերը որոշեցին անցնել վաղեմի իրենց ռազմավարությանը, որը դեռևս կիրառում էր Արամ թագավորը մ.թ.ա. 9-րդ դարում՝ հակառակորդին ճակատամարտ տալ լեռներում: Եվ Հայաստանի լեռներում փոքր ճակատամարտերով Տիգրանի զորքերը մաշեցին Լուկուլլոսի բանակները: Իսկ վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Արածանի գետի ափերին: Հռոմեական բանակը գլխովին ջախջախվեց: Լուկուլլոսը նահանջեց: Հռոմեացիները փախան Մեծ Հայքի սահմաններից:

Միհրդատ Եվպատորը հայկական մի բանակ առած հռոմեացիներից հետ նվաճեց Պոնտոսը: Հռոմի ծերակույտը (խորհրդարանը), տեսնելով Լուկուլլոսի անհաջողությունները, Արևելք ուղարկեց մի այլ զորավարի՝ Պոմպեոսին, որպես գլխավոր հրամանատարի:

ՏԻԳՐԱՆ ԵՎ ԱՐՏԱՎԱԶԴ[1]

Տիգրան Մեծի գործերը հաջող էին գնում: Նա կրկին հնազանդեցրեց Կապադովկիան: Հռոմեական լեգեոնները հայերի վրա չէին համարձակվում հարձակվել: Մեծ Հայքը միասնական էր ու խաղաղ: Տիգրանի նվաճած

---

[1] Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի ու նրանց ժամանակի մասին վկայում են հին աշխարհի օտար շատ պատմիչներ՝ Հուստինոսը, Ապիանոսը, Ստրաբոնը, Պլուտարքոսը, Դիոդորոսը, Հովսեփ Փլավիոսը և ուրիշներ, ինչպես և Մովսես Խորենացին ու Փավստոս Բուզանդը.

մյուս երկրները հայոց իշխանության տակ էին: Բայց այդ ժամանակ, մ.թ.ա. 67 թ., Տիգրան Մեծի դեմ ապստամբեց նրա որդին՝ Տիգրան Կրտսերը, որին հայրը նշանակել էր Ծոփքի կառավարիչ: Տիգրան Մեծի զորքերը հեշտությամբ հաղթեցին ապստամբներին: Տիգրան Կրտսերը փախավ պարթևների մոտ: Պարթևների թագավորը մեծ զորքով մտավ Հայք Տիգրան Կրտսերին հայոց գահին նստեցնելու համար:

Պարթևները հասան Արտաշատ, բայց քաղաքը գրավել չկարողացան: Ապա վրա հասած Տիգրան Մեծն իր զորքով ջախջախեց պարթևներին: Տիգրան Կրտսերը այս անգամ փախավ Հռոմի բանակը, Պոմպեոսի մոտ: Պոմպեոսը խոստացավ նրան հայոց գահը:

Իսկ Միհրդատ Եվպատորը դժգոհ էր Տիգրան Մեծից, քանի որ սա, զբաղված հայոց գործերով, չէր օգնել իրեն դժվար պահին: Նա Տիգրան Մեծին մեղադրելով ասում էր. «Երբ հարևանի տունը հրդեհ է ընկնում, պետք է օգնել հանգցնելու, թե չէ քո տունն էլ կհրդեհվի»: Բայց Տիգրանը, զգալով հռոմեական բանակների հզորությունը, չէր ուզում խառնվել պոնտա-հռոմեական գործերին: Նա գիտեր նաև, որ Միհրդատն օգնել էր իր դավաճան որդուն: Ի վերջո, Պոմպեոսը հաղթեց Միհրդատի բանակին, և սա փախավ Ղրիմ՝ իր թագավորության հյուսիսային թերակղզին:

Պոմպեոսը Տիգրան Կրտսերի ուղեկցությամբ հռոմեական մեծ զորքերով մտավ Հայք և հասավ Արտաշատ. Տիգրանը կշռադատելով ու համոզվելով, որ հռոմեական հսկա բանակին այդ պահին ինքը հաղթել չի կարող՝ դիմեց մի այլ քայլի: Երբ Պոմպեոսի բանակը Արաքսի ափին ճամբար էր խփել, այդտեղ երևաց միայնակ մի ծերունի, արքայական թագը գլխին, բոլորովին անզեն: Նա մոտեցավ Պոմպեոսին, թագը հանեց գլխից և դրեց Հռոմի զորքերի գլխավոր հրամանատարի ոտքերի մոտ: Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծին, հուզվեց, թագը գետնից վերցնելով՝ կրկին դրեց Տիգրանի գլխին: Դա նշանակում էր, որ Պոմպեոսը Տիգրանին ճանաչեց որպես հայոց թագավոր: 75-ամյա Տիգրանը հմտորեն օգտագործեց Պոմպեոսի գթասրտությունը: Իսկ Տիգրան Կրտսերը ապստամբեց Պոմպեոսի դեմ, բայց արդեն ուշ էր: Նրան շղթայեցին:

Մ.թ.ա. 66 թ. Արտաշատում Տիգրանի և Պոմպեոսի միջև կնքվեց բարեկամության պայմանագիր: Ամբողջ Մեծ Հայքն իր սահմաններում՝ 316 հազար քառակուսի կիլոմետր տարածքով, մնաց Տիգրանի իշխանության տակ որպես անկախ պետություն, իսկ Հայաստանի նվաճած բոլոր երկրներն անցան Հռոմին: Սա հայերի համար թեև պարտություն էր, քանի որ Տիգրան Մեծը կորցրեց նվաճած շատ երկրներ, բայց դա նաև հաղթանակ էր, քանի որ Մեծ Հայքի ամբողջությունն ու անկախությունը պահպանվեց, չնայած Հռոմի զորքերի գերազանց ուժին: Ապա նաև Պոմպեոսը բարեկամացավ Տիգրան Մեծի հետ: Այս անգամ հաղթեց դիվանագետ Տիգրան Մեծը: Պոմպեոսն օգնեց հայերին նաև այն ժամանակ, երբ պարթևները փորձում էին նորից գրավել Կորդվաց աշխարհը: Հռոմն այդ երկրամասը ճանաչեց որպես Մեծ Հայքի անբաժան մաս, և պարթևները նպիանջեցին, հայկական զորամասերը մտան Կորդվաց աշխարհ: Մեծ Հայքում շուրջ 10 տարի խաղաղություն էր ու բարգավաճում: Մ.թ.ա. 55 թ. խոր ծերության մեջ վախճանվեց Տիգրան Մեծը, հայոց բոլոր թագավորներից ամենահզորն ու ամենահաջողակը: Հայոց գահ բարձրացավ Արտավազդ II-ը

Տիգրան Մեծի մահից հետո պարթևների պետությունը իրեն ազատ զգաց. ասպարեզից դուրս էր եկել իր զորեղ հակառակորդը: Պարթևները ձգտում էին վերականգնել Աքեմենյանների մեծ կայսրությունը, և նրանց գլխավոր թշնամին դարձավ Հռոմը: Հռոմն էլ իր հերթին ձգտում էր վերականգնել Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունը իր իշխանությամբ: Ահա Արևելքի և Արևմուտքի այս երկու հզորացած ուժերի մեջտեղում էր Հայաստանը Հայերն այլևս չունեին Արամի կամ Արա Առաջինի, Արտաշեսի կամ Տիգրան Մեծի հզոր պետությունը: Ընդհակառակը, հայերի վիճակը ծանրացել էր. նրանցից արևմուտք և արևելք երկու հսկա կայսրություններ էին գոյացել

Ո՞ւմ կողմն անցնել: Մնալ չեզոք դժվար էր, անհնար: Հայքի այս վիճակը շարունակվեց շատ երկար, մոտ 300 տարի, և փորձը ցույց տվեց, որ այդ ընթացքում, երբ Հայաստանը կարողանում էր դաշնակցել և բարեկամ մնալ պարթևների հետ, ավելի հաջողակ էր լինում:

Արտավազդ II-ը բանաստեղծ էր, թատերագիր: Նրա թատերգությունները Արտաշատի բացօթյա թատրոնում բեմադրվում էին: Նա հայ թատրոնի հիմնադիրն է եղել: Բայց նա նաև դիվանագետ թագավոր էր: Հռոմեացիները նրան անընդհատ համոզում էին, որ իրենց հետ միանա, և միասին արշավեն պարթևների դեմ, բայց Արտավազդը խուսափում էր դրանից:

Այդ ժամանակ Արևելքում հռոմեական զորքերի հրամանատարն էր Կրասոսը՝ Հռոմի ամենահարուստ մարդը: Նա հռոմեական առաջին եռապետության անդամն էր՝ Հուլիոս Կեսարի և Պոմպեոսի հետ: Կրասոսը արյան մեջ խեղդել էր Սպարտակի ապստամբությունը և այժմ եկել էր Արևելք պարթևներին վերջնականապես ջախջախելու նպատակով: Տիգրան Մեծի և Պոմպեոսի կնքած բարեկամության պայմանագրի համաձայն Արտավազդը զորք էր տալիս Կրասոսին, բայց գաղտնի լավ հարաբերություն էր պահպանում պարթևների թագավոր Օրոդեսի հետ: Արտավազդի դուստրն ամուսնացավ Օրոդեսի որդի Բակուրի հետ:

Կրասոսի զորքերը Միջագետքով հարձակվեցին պարթևների վրա: Մ.թ.ա. 53 թ. Միջագետքի Խառան քաղաքի մոտ պարթևների զորքը Սուրեն զորավարի գլխավորությամբ ջախջախեց հռոմեական ամբողջ բանակը և սպանեց Կրասոսին: Սուրենի զինվորները Կրասոսի գլուխը բերեցին Արտաշատ և նետեցին այստեղի թատրոնի ասպարեզը: Թատրոնում ներկայացվում էր հույն ողբերգակ Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» թատերգությունը: Այդտեղ էին հայոց թագավոր Արտավազդը և պարթևների թագավոր Օրոդեսը: Այդպես, այս անգամ էլ պարտվեց հռոմեական բանակը: Պարթևները գերի վերցրին շատ հռոմեացիներ և նրանց արծվակիր դրոշակները: Հետո Օրոդեսը նախանձելով Սուրենի

Արտավազդ 2-ոտ (ատակեր հայկական դրամի վրա)

Հայկական դրամ՝ «Արքայից արքա Արտավազդ» մակ[illegible]բ (հունարեն)

փառքին՝ սպանել տվեց նրան: Ապա հայ-պարթևական զորքերը հայոց Վասակ և պարթև Բակուր զորավարների գլխավորությամբ սկսեցին Ասորիքում, Փյունիկիայում և այլուր հռոմեացիներից ազատագրել քաղաք քաղաքի հետևից: Ժողովուրդը, որ զզված էր Հռոմի դաժան տիրապետությունից, ցնծությամբ էր ընդունում հայերին ու պարթևներին: Իսկ Հռոմը զբաղված էր իր ներքին պատերազմով, որ միմյանց դեմ մղում էին Հուլիոս Կեսարն ու Պոմպեոսը: Հայերը օգնում էին Պոմպեոսին, բայց հաղթեց Կեսարը: Չնայած սրան էլ իր զինակիցները սպանեցին մ.թ.ա. 44 թ.:

Շուտով Արևելքում հայտնվեց Հռոմի Անտոնիոս զորավարը, Պտղոմեոսյան եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի ամուսինը: Նա հորդորում և ստիպում էր հայոց Արտավազդ II-ին իր զորքերի հետ արշավել Ատրպատական՝ պարթևների դեմ: Արտավազդը ձևականորեն համաձայնեց, զորք տրամադրեց հռոմեացիներին, բայց բարեկամությունը պարթևների հետ շարունակում էր: Անտոնիոսի զորքերը շրջապատեցին Ատրպատականի Փարասպա մայրաքաղաքը, բայց գրավել չկարողացան: Արտավազդը հայկական զորամասերը հետ կանչեց Հայաստան, քանի որ պարթևների դեմ արդեն տանուլ տված այդ պատերազմը կարող էր միայն պարթևներին վերջնականապես թշնամացնել հայերի հետ: Սա զայրացրեց Անտոնիոսին, և նա մեկնելով Եգիպտոս, այստեղ հաշտության դաշինք կնքեց պարթևների հետ:

Անտոնիոսն առիթ էր որոնում վրեժ լուծելու Արտավազդից: Նա ամեն կերպ համոզում էր հայոց թագավորին գալ իր մոտ բանակցելու: Արտավազդը հրաժարվում էր: Ի վերջո, Անտոնիոսը իր զորքով մտավ Հայաստան և նորից իր մոտ կանչեց Արտավազդին: Այս անգամ հայոց թագավորը հավատաց Անտոնիոսի հորդորներին և գնաց նրա մոտ: Դա մեծ սխալ էր, արված հայոց թագավորի կողմից: Անտոնիոսը խաբեց Արտավազդին, գերեց նրան ու նրա ընտանիքը և տարավ Եգիպտոս: Այստեղ Ալեքսանդրիա քաղաքում Անտոնիոսը ճոխ հանդես կազմակերպեց՝ հայերի նկատմամբ իր հաղթանակի առթիվ: Գերիներն անցնում էին գահին բազմած թագուհու՝ Կլեոպատրայի առջևով: Նրանց մեջ էին Արտավազդն ու իր ընտանիքը՝ շղթայված ոսկե շղթաներով: Անտոնիոսը նրանց հանձնեց Կլեոպատրայի ողորմածությանը: Հայերը պետք է երկրպագեին ու փառաբանեին Կլեոպատրային և այդպես ազատ արձակվեին նրա կողմից: Բայց հայերն այդ չարեցին, չխոնարհվեցին օտար թագուհու առաջ: Եվ Կլեոպատրան պատժեց նրանց: Հայոց Արտավազդ II թագավորին նա գլխատել տվեց:

ԱՐՏԱՇԵՍ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐ

Հայաստանը անարգված էր Անտոնիոսի անզուսպ փառասիրության և Կլեոպատրայի անգթության պատճառով: Հայքն ավելի նենգ թշնամի, քան Անտոնիոսը, չէր ունեցել: Հայոց Արտավազդ թագավորի գլուխը, որ հազարավորների ներկայությամբ չխոնարհվեց մեծապետական թագուհի Կլեոպատրայի առաջ, այդ նույն թագուհու հրամանով կտրվեց և ուղարկվեց մի ուրիշ Արտավազդի: Դա Ատրպատականի տիրակալ, ազգությամբ մար Արտավազդն էր՝ հայոց անհաշտ թշնամին և Անտոնիոսի բարեկամը:

Իսկ մինչ այդ, Անտոնիոսը Հայաստանի թագավոր էր կարգել իր և Կլեոպատրայի որդի՝ վեց տարեկան Ալեքսանդրին: Սա ևս ծաղր էր Հայքի նկատմամբ:

Սակայն ինչպես ամեն մի բռնակալ, Անտոնիոսն էլ իր վախճանին հասավ: Հռոմում Անտոնիոսի հակառակորդն էր Օգտավիանոսը: Սա պատերազմ սկսեց Անտոնիոսի և Կլեոպատրայի զորքերի դեմ: Մ.թ.ա. 31 թ. հաղթեց Օգտավիանոսը: Անտոնիոսն ինքնասպան եղավ, իսկ Օգտավիանոսը դարձավ Հռոմի կայսր՝ Օգոստոս (սրբազան) անունով: Ինքնասպան եղավ նաև Կլեոպատրան (թույլ տալով, որ օձն իրեն խայթի):

Օգտավիանոս Օգոստոսը եգիպտոսի Ալեքսանդրիայից Հռոմ էր բերել հայոց Արտավազդ թագավորի գերված երկու որդիներին՝ Տիգրանին ու կրտսեր Արտավազդին: Իսկ Արտավազդ թագավորի մյուս որդին՝ Արտաշեսը,

ճարպկորեն ազատվել էր Անտոնիոսի ձեռքից: Նա փախել էր պարթևների մոտ: Շուտով Արտաշեսը վերադարձավ հայրենիք: Այդ ժամանակ Հայաստանի վրա ուզում էր իր իշխանությունը տարածել Ատրպատականի մար Արտավազդը: Արտաշեսը հաղթեց սրա բոլոր զորքերին, իրեն էլ գերի վերցրեց: Ապա՝ մ.թ.ա 30 թվականին նա դարձավ հայոց թագավոր՝ Արտաշես Երկրորդ, արքայից արքա տիտղոսով:

Արտաշես II-ը եղավ հզոր թագավոր: Նա վերականգնեց Հայաստանի ուժերը, վերակազմեց հայոց բանակները: Այս թագավորը Արտաշես I-ի և Տիգրան Մեծի ոգին ուներ և շարժվում էր նրանց օրինակով Արտաշես II-ը անհաշտ պատերազմ սկսեց հռոմեական զորքերի դեմ: Նա տեսավ, որ իր հոր՝ Արտավազդ II-ի բարեհոգի բնավորությունը չարաշահեց Հռոմը:

Կարճ ժամանակում Արտաշես II-ը կարողացավ լիովին ջախջախել Հայքում գտնված հռոմեական բոլոր զորքերը, ողջ մնացածները մի կերպ փախան Հայաստանի սահմաններից: Արտաշես II-ը Հռոմի այնպիսի անզիջում հակառակորդ էր, որ անգամ Հայաստանի քաղաքներում գտնված հռոմեական բոլոր քաղաքացիներին էլ՝ առևտրականների, արհեստավորների և այլն, դուրս քշեց Հայքից:

Մեծ Հայքի սահմանները կրկին վերականգնվում էին: Արտաշես II-ը նաև որոշ երկրներ գրավեց Մեծ Հայքից դուրս ու կցեց իր թագավորությանը: Այդպես նա Հայքին միացրեց Ատրպատականը, Մարաստանի մի մասը: Ապա՝ Արտաշեսը Հռոմից պահանջեց իր երկու եղբայրներին, բայց Օգոստոս կայսրը հրաժարվեց վերադարձնել: Հռոմն իր նպատակներն ուներ:

Արտաշես II-ի տիրապետությունը դարձյալ ցույց տվեց, որ երբ Հայքը լավ հարաբերություններ էր պահպանում իր մշտական զորեղ հարևանի հետ, հաջողության էր հասնում: Այս անգամ այդ հարևանը պարթևներն էին:

Հռոմեացիներն էլ էին դա լավ հասկանում, ուստի և նրանք ամեն ջանք գործադրում էին, որ պարթևների ու հայերի միջև գժտություն առաջ գա: Նրանք նաև աշխատում էին, որ հենց հայերի մեջ, ինչպես և պար-

Քանդակ Արտաշատից

թևների մեջ երկպառակություն լինի՝ գրգռում էին հայերին հայերի, պարթևներին պարթևների դեմ: Սա Հռոմի հայտնի քաղաքականությունն էր, որ կոչվում էր՝ «Բաժանիր, որ տիրես»: Այս նշանաբանը գործադրելով էր Հռոմը տիրում աշխարհին:

Հռոմեացիները նախ պարթևների Հրահատ IV թագավորի դեմ ապստամբություն կազմակերպեցին, կարողացան իրենց մոտ բերել և որպես պատանդ պահել պարթևների թագաժառանգին: Պարթևները որոշեցին հաշտվել Հռոմի հետ, և մ.թ.ա. 20 թվականին նրանք վերադարձրին Կրասոսի զորքերից որպես ռազմավար խլված արծվակիր դրոշակներն ու հռոմեացի գերիներին: Հայաստանը զորեղ Հռոմի դեմ-հանդիման մնաց միայնակ:

Հռոմեացիները կարողացան նաև Հայաստանում կողմնակիցներ հավաքագրել, նրանց գրգռել Հռոմի անհաշտ հակառակորդի՝ Արտաշես II-ի դեմ: Հայ հռոմեասերները Օգոստոս կայսրից ստանում էին կաշառքներ ու մեծ նվերներ: Նրանք դավադրություն կազմակերպեցին իրենց Արտաշես II թագավորի դեմ ու սպանեցին նրան: Այդպես հայերի ձեռքով Հռոմն ազատվեց իր զորքերին սարսափ ազդող հայոց հզոր ու մեծ թագավորից՝ Արտաշես II-ից:

Այդ ժամանակ Հայաստան էր արշավում Հռոմի Տիբերիոս զորավարը: Նրա հետ էր Արտավազդ II թագավորի մյուս որդին՝ Տիգրանը, որ 10 տարի դաստիարակվել էր Հռոմում: Օգտավիանոս Օգոստոսը և նրա օգնականներն այն կարծիքին էին, որ Հռոմում մեծացած Տիգրանը կլինի իրենց հլու հնազանդ թագավոր: Եվ Արտաշես II-ի սպանությունն ու նրա եղբոր՝ Տիգրանի թագադրումը նրանք համարեցին Հռոմի մեծ հաղթանակը Հայքի նկատմամբ: Այդ առթիվ Հռոմում հատեցին դրամ, որի վրա գրված էր. «Հայաստանը նվաճված»: Հռոմի բանաստեղծներն էլ փառաբանում էին այդ հաղթանակը: Բայց Տիգրան III-ը այնքան էլ հռոմեասեր դուրս չեկավ, ինչքան կարծում էին: Նա ավելի քան 10 տարի թագավորեց, և նրա օրոք Մեծ Հայքը պահպանում էր իր ամբողջությունն ու անկախությունը: Նրանից միայն անջատվեց Ատրպատականը, որ ժամանակին նվաճել էր Արտաշես II-ը:

Արծաթե դրամ՝ թողարկված Հռոմում
«Հայաստանը նվաճված» մակագրությամբ (լատիներեն)

Տիգրան III-ը նույնպես գիտակցեց, որ Հայաստանի համար կարևոր է բարեկամությունը հարևան պարթևների հետ: Եվ նա այդ ուղղությունն էլ բռնել էր: Հայքի, Պարթևստանի և մյուս հարևան երկրների ժողովուրդների համար հռոմեական տիրապետությունը խորթ էր և անտանելի: Հարավ-արևմտյան Ասիայի գրեթե բոլոր երկրները հայերի ու պարթևների իշխանությունը գերադասում էին Հռոմի դաժան տիրապետությունից:

Տիգրան III-ի մահից հետո, մ.թ.ա. 8 թվականին հայոց թագավոր դարձավ Տիգրան IV-ը, որին գահակից էր իր քույրը՝ Էրատոն: Տիգրան IV-ը նույնպես հմուտ և ուժեղ թագավոր էր, ու նրա օրոք ևս Հայքը լիովին անկախ էր և ավելի հզոր, քան Պարթևստանը: Տիգրան IV-ը ևս ուներ արքայից արքա տիտղոսը: Հայքը գնալով ավելի զորեղ էր դառնում: Եվ եթե հռոմեացիները երազում էին Արևելքում իրենց իշխանության տակ վերականգնել Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունը, ապա հայերն էլ հիշում էին Տիգրան Մեծի կայսրությունը և ձգտում էին դրա վերականգնմանը:

Հռոմի Օգտավիանոս Օգոստոս կայսրը, տեսնելով Տիգրան IV-ի հզորացումը, մեծ զորք ուղարկեց Հայաստան: Տիգրան IV-ի բանակը չկարողացավ դիմադրել, հռոմեացիները մ.թ.ա. 5 թվականին մտան Հայք և Տիգրան IV-ին գահընկեց արեցին: Նրա փոխարեն թագավոր կարգեցին Արտավազդ II թագավորի մյուս որդուն՝ Արտավազդին, որը գրեթե ամբողջ կյանքն անց էր կացրել Հռոմում և էությամբ դարձել էր հռոմեացի՝ օտարախոս, օտարամտաց: Հայ ժողովուրդը, հայոց իշխանները մերժեցին, չընդունեցին այս նոր թագավորին: Շուտով նրան գահընկեց արեցին և կրկին գահ բարձրացրին Տիգրան IV-ին ու նրա քույր Էրատոյին:

Սակայն այս անգամ հյուսիսից Հայաստանի վրա հարձակվեցին լեռնական ցեղերը, և պատերազմում զոհվեց (մոտ. 6 թ.) Տիգրան IV-ը՝ հայոց Արտաշեսյան թագավորական տան վերջին թագավորը

Դրանով ավարտվեց առայժմ մեզ հայտնի հայոց հինգերորդ թագավորական տան՝ Արտաշեսյանների իշխանությունը, որը տևեց մոտ 200 տարի· Հայոց հաջորդ թագավորական սունը Արշակունիներինն էր, որոնք հետո ընդունեցին քրիստոնեություն:

Այդպես անցան հայոց պատմության հազարամյակներն ու նրանցում դարերը՝ մինչև մեր թվականության սկիզբը, մինչև քրիստոնեական դարաշրջանը: Որպես ամփոփում հիշենք այդ ընթացքում Հայաստանում իշխած հայոց թագավորական տները՝ Կարաննի-Աննիյա տունը՝ մ.թ.ա. 15 — 13-րդ դարերում (ժամանակակից՝ Խաթթիին), Արամյանները՝ մ.թ.ա. 9 — 7-րդ դարերում (ժամանակակից՝ Ասորեստանին), Երվանդունիները՝ մ.թ.ա. 7 — 3-րդ դարերում (ժամանակակից՝ մարերի, պարսիկների և Ալեքսանդր Մակեդոնացու հզոր պետություններին), Արտաշեսյանները՝ մ.թ.ա. 2 — 1 դարերում, մինչև մ.թ. սկզբները (ժամանակակից՝ Սելևկյանների, Հռոմի և պարթևների պետություններին):

Արտաշեսյաններից հետո ավելի քան 50 տարի Հայաստանում խառը վիճակ էր: Հռոմը չէր համարձակվում Մեծ Հայքը դարձնել իր մարզերից (պրովինցիաներից) մեկը, այլ ուզում էր, պահպանելով հայոց թագավորությունը, այնտեղ թագավոր կարգել իրեն հնազանդ մարդկանց: Եվ այդ տարիների ընթացքում այդպես էլ անում էր:

63 թվականին հայոց թագավոր դարձավ Տրդատ I Արշակունին: Դրանով սկիզբ առավ հայոց Արշակունիների թագավորական տունը, որը Հայքում իշխեց մինչև 428 թվականը: Դա մի նոր դարաշրջան եղավ հայ ժողովրդի պատմության մեջ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

ԽԱՌԸ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Մեր թվականության առաջին դարում Հայաստանում երկու շատ կարևոր իրադարձություններ կատարվեցին. Ամրացավ հայ Արշակունիների թագավորական տունը, որը Հայաստանում իշխեց մոտ 400 տարի, ամբողջ Մեծ Հայքում՝ մոտ 350 տարի: Ապա առաջին դարում քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստան, հիմնադրվեց հայոց եկեղեցին, որը Արշակունիների թագավորության անկումից հետո հայոց մշակույթի և հասարակական կյանքի կենտրոն եղավ շատ հարյուրամյակներ:

Առաջին դարի սկզբին, Արտաշեսյան թագավորության անկումից հետո մոտ 50 տարի Հայաստանում խառը ժամանակներ էին. հայոց գահի վրա արագ միմյանց էին փոխարինում այլազգի թագավորներ: Արտաշեսյանները խնամիական կապեր ունեին մոտակա երկրների՝ Պարթևստանի, Պոնտոսի, Հրեաստանի, Վրաստանի, Ատրպատականի թագավորական տների հետ: Երբ հայոց գահը մնաց թափուր, այդ բոլոր թագավորական տները ձգտում էին՝ իրենցից նշանակել հայոց թագավոր: Իսկ Հռոմը ծրագրում էր իրականացնել իր վաղեմի ցանկությունը՝ Մեծ Հայքը դարձնել Հռոմեական կայսրության նահանգ (պրովինցիա): Հայերի համար հռոմեական տիրապետությունն անտանելի էր: Հայ իշխանները, ժողովուրդը մերժում էին հռոմեական տիրապետությունը: Հայոց ղեկավարները բարեկամական հարաբերություններ էին պահպանում պարթևների հետ, որոնց կայսրությունն այդ ժամանակ շատ էր հզորացել: Դեռևս մ.թ.ա. մոտ 248 թվականին Պարթևստանում թագավոր էր դարձել սկյութական պարն ցեղի առաջնորդ Արշակը, և այդպես հիմնադրվել էր պարթևական Արշակունիների թագավորական տունը: Ըստ որոշ տվյալների, դեռևս մ.թ.ա. II դարի երկրորդ կեսին Հայաստանում եղել է պարթև Արշակունիների իշխանություն (նախքան Տիգրան Մեծի գահակալությունը): Ինչ էլ եղած լինի, մի բան հաստատ է, որ պարթև Արշակունիները ազգակցական կապեր ունեին Արտաշեսյան տան հետ և ապա՝ լավ հարաբերության մեջ էին հայերի հետ, իսկ նրանց մի ճյուղը հետո լիովին հայացավ: Եղան դեպքեր, երբ պարթև Արշակունիներն էին հայոց թագավոր նշանակում, երբեմն էլ հայ Արշակունիներն էին պարթևների թագավոր կարգում:

Հռոմը ոչ մի կերպ չէր ուզում, որ Հայաստանի գահի վրա հաստատվեն Արշակունիները, և Հայքում թագավոր էր կարգում իր մարդկանց՝ դրածոնե[illegible]

Առաջին դարի սկզբին, Արտաշեսյան վերջին թագավոր Տիգրան IV-ի զոհվելուց հետո, նրա քույ[illegible] Երատոն, որ գահակից թագուհի էր, հրաժարվեց գահից Հռոմի Կայոս զորավարը՝ Օգտավիանոս Օգոստոս կայսրի թոռը, իր լեգեոններով մտավ Հայք և հայոց թագավոր հռչակեց Ատրպատականի Արիոբարզան թագավորին Սա Հռոմի կամակատարն էր: Այդպիսով, փաստորեն Հայաստանը կցվում էր Ատրպատականին Հռոմի գերիշխանության տակ: Հայ իշխանները ապստամբեցին Հռոմի դրածոյի դեմ, Կայոսը ճնշեց այդ ապստամբությունը, բայց հայ իշխաններից զորավար Ատոմը սպանեց հռոմեացի հրամանատարին.

Արիոբարզանի մահից հետո Հռոմը Հայաստանի գահին նստեցրեց նրա որդի Արտավազդին: Հայ իշխանները սրան ևս սպանեցին: Այս անգամ Հռոմը Հայաստանի թագավոր հռչակեց Հրեաստանի հայտնի թագավոր Հերովդես Առաջինի թոռ Տիգրանին (հերովդյանները նույնպես ազգակցական կապեր ունեին հայոց Արտաշեսյան թագավորների հետ): Սա Տիգրան V-ն էր: Բայց նա էլ երկար չիշխեց Հայքո[illegible]

Այսպես, հայերը ոչ մի կերպ չէին համակերպվում հռոմեա[illegible]ն [illegible]ապետությանը, չէին հանդուրժում Հռոմի դրածոներին: Այդ բախտին արժանացավ նաև Հռոմի մի այլ դրածո՝ Վանոնը (թագավորել է 11 — 16 թվականներին): Ապա՝ 18 — 34 թվականներին Հայաստանում թագավորեց պոնտացի Զենոնը, որը հայերին հաճելի լի[illegible]նելու համար իրեն անվանեց Արտաշես (նա ևս ազգակցական կապեր ուներ հայ Արտաշեսյանների հետ):

34 թվականին Հայաստանում գահ բարձրացավ Արշակունի թագավոր, Արշակ անունով, որին նաև Սանատրուկ էին կոչում: Փաստորեն այս ժամանակ է Հայքում սկիզբ առնում Արշակ[illegible]ների տիրապետությունը, թեև դեռևս այդ թագավորական տունը հայոց գահին հաստատ չէր տիրացել, ժառանգական չէր դարձել: Արշակ-Սանատրուկը Հայոց Միջագետքում կառուցեց Մծբին քաղաքը և դարձրեց [illegible]ն մայրաքաղաք (ավերա[illegible]ները գտնվում են Սիրիայի Ղամշլի քաղաքի մոտ): Այս թագավորին հայ իշի[illegible]ները, հայերն առհասարակ պաշտպանում էին, քանի որ անկախ քաղաքականություն էր վարում: Բայց Հռոմը դեմ էր նրա[illegible], ուզում էր հայոց գահին նորից նստեցնել իրեն հնազանդ մեկին: Եվ վրաց թագավոր Միհրդատի հրահրանքով հռոմեացիները սպանել տվեցին հայոց Արշակունի այս թագավորին:

Վրաց թագավորները, որոնք ևս ազգակցական կապ ունեին հայոց Արտաշեսյան տան հետ, Հռոմի օգնությամբ նույնպես ուզում էին տիրանալ հայոց գահին: Նրանք իրենց նաև համարում էին Արշակունի: Վրաց Փարսաման զորավարը ալանական (օսական) և բուն Աղվանքի (Քուռ գետից ձախ) [illegible]ձու զորքերով [illegible]տավ Հայաստան: Կռիվներ եղան հայ-պարթևական և վրացիների ղեկավարած ա[illegible]սա-աղվանական զորքերի մի[illegible] Հռոմի Վիտելիոս զորավարի լեգեոնների օժանդակությամբ հաղթեցին վրացիները: Շուտով (37 թ.) Հռոմը և Պարթևստանը դաշինք կնքեցին. Հայաստանի թագավոր հռչակվեց Հռոմի կամակատար [illegible]սցի Միհրդատը: Այդ ժամանակ Հռոմի կայսրն էր Տիբերիոսը: Նրան հաջորդեց Կալիգուլան, որը Միհրդատին Հռոմ կանչեց և աքսորեց: Շուրջ 6 տարի Մեծ Հայքի տիրակալ եղավ հայոց Ն[illegible]խարար Գիսակ Դիմաքսյանը: Սակայն Հռոմի նոր կայսրը [illegible]վլավդիոսը վրաց Միհրդատին հռոմեական զորքով ուղարկեց Հայք: Գիսակ իշխանը հայկական զորքով դիմադրում էր հռոմեացիներին, բայց պարտվեց հայերի երկպառակության պատճառով, և Միհրդատը կրկին դարձավ հայոց թագավոր: Նրա եղբայրը և աները (Միհրդատն ամուսնացած էր [illegible]ր աղջկա հետ)՝ վրաց թագավոր Փա[illegible]սամանը իր որդի Հռադամիզդին մեծ զորքով ուղարկեց Հայաստան: Հռադամիզդը Գառնի ամրոցում իր հորեղբո[illegible] Միհրդ[illegible]տին և քրոջը (Միհրդատի կնոջը) խեղդեց գորգ[illegible]ի տակ: 51 թ հայոց գահ բարձրացավ այդ Հռադա[illegible] մեական դրածո թագավորների օրոք Հայաստանի իրական ղեկավարը [illegible]ռոմն էր որը Մեծ Հայքում նշանակո[illegible]

երկու պաշտոնյա՝ պրեֆեկտ (կուսակալ) և ցենտուրիոն (ոստիկանապետ): Սրանց հլու հնազանդ ենթարկվում էր դրածո թագավորը: Հայաստանի քաղաքներում կային հռոմեական զորքեր (կայազորներ)

Նույն 51 թվականին պարթևների թագավոր դարձավ Վաղարշ Առաջին Արշակունին: Սա հզոր թագավոր էր: Պարթևները նախքան այդ էլ իրենց երկիրը ազատում էին հունական (հելլենիստական) մշակույթից, հունարենի փոխարեն փորձում էին գրավոր և բանավոր գործածել իրենց լեզուն՝ պահլավերենը (կամ պարթևերենը, — համարվում է միջին պարսկերեն): Վաղարշը այդ գործն ավելի մեծ եռանդով շարունակեց: Նա ձգտում էր նաև իր եղբորը՝ Տրդատ Արշակունուն կարգել հայոց թագավոր: Դրան համաձայն էին հայոց իշխանները:

Հայքի խառը ժամանակներն անցնում էին, թեև նրանց հետևանքը ծանր եղավ հայոց համար: Անընդհատ պատերազմները, գահակալների փոփոխումները հոգնեցրել էին բոլորին: Իսկ ամենավատն այն էր, որ այդ ժամանակներում Մեծ Հայքից անջատվեցին Հայոց Միջագետքը հարավում և Գոդերձականը հյուսիսում:

ՏՐԴԱՏ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Հնում, ինչպես գիտենք, մի երկրի թագավորական գահը ժառանգական էր: Վախճանված թագավորի գահին բազմում էր նրա որդին: Եթե թագավորը զավակ չուներ՝ գահ էր բարձրանում եղբայրը կամ որևէ ազգական: Հաճախ էլ այնպես էր լինում, որ միևնույն թագավորական տան անդամներ իշխում էին մի քանի երկրներում: Ինչպես ասվել է, պարթև Արշակունիները հայ Արտաշեսյաններին ազգական էին, և նրանք հայոց գահի ամենաօրինական տերն իրենց էին համարում:

Պարթևների Վաղարշ Առաջին թագավորը հայտարարեց, որ Հայաստանը անկախ պետություն է Արշակունիների տան իշխանության ներքո: Դա եղած պայմաններում հայերի ուզածն էր: Կարևոր է հիշել նաև, որ հայերն ու պարթևները իրենց սովորություններով, կենցաղով շատ մոտ էին, ապա՝ հայ և պարթև շատ իշխանական տներ կապված էին իրար հետ խառն ամուսնություններով: Վաղարշ Առաջինը իր եղբայր Տրդատ Արշակունուն հռչակեց հայոց թագավոր: 52 թվականին Տրդատը պարթևա-հայկական զորքով մտավ Հայաստան: Հայ ժողովուրդը և մեծամեծները նրան ցնծությամբ ընդունեցին՝ համարելով իրենց հին թագավորության (Արտաշեսյան) օրինական ժառանգը: Հռադամիզդը փախավ Վրաստան: Փախչելիս նա իր հղի կնոջ՝ Զենոբիայի խնդրանքով սրով խփեց նրան և ծանր վիրավոր գցեց Արաքս գետի արագահոս ջրերի մեջ: Հայ հովիվները փրկեցին Զենոբիային, տարան գյուղ, բուժեցին նրան և հետո տեղափոխեցին Արտաշատ: Հայոց Տրդատ Առաջին թագավորը վրաց ժողովրդի դստերը՝ պատվավոր տեղ տվեց հայոց արքունիքում:

Հռադամիզդը 53 թ. մեծ զորքով վերադարձավ Հայք ու կրկին գահ բարձրացավ: Տրդատն իր զորքով նահանջեց: Սակայն հայ իշխանները ապստամբեցին Հռադամիզդի դեմ, և սա նորից փախավ Վրաստան ու այս անգամ փորձեց տիրանալ իր հոր՝ վրաց թագավոր Փարսամանի գահին: Շուտով նա սպանվեց հոր ձեռքով, և այդպիսով ասպարեզից դուրս եկավ հայոց գահի այդ համառ հավակնորդը՝ Հռոմի կամակատարը:

54 թվականին Տրդատը նորից Հայաստանում էր և շարունակում էր գահակալել:

Բայց հռոմեացիները ոչ մի կերպ չէին համակերպվում այն մտքի հետ, որ Հայաստանում թագավորում է Մեծ Հայքի անկախությանը նախանձախնդիր Արշակունի մի թագավոր:

Աղվանքում թագավոր էր հռչակվել Պարթևստանի Վաղարշ թագավորի մյուս եղբայրը՝ Բակուր Արշակունին, և այդպես ստեղծվել էր հայ-պարթևա-աղվանական ամուր դաշնակցություն Հռոմի դեմ:

54 թվականին Հռոմի կայսր դարձավ Ներոնը (իշխել է մինչև 68 թ.), որը նպատակ դրեց խորտակել այդ դաշ-

Տրդատ I-ի հունարեն արձանագրությունը՝ Նիգ դավառը Գնթունիներին նվիրելու մասին (Ապարան)►

նակցությունը: Հռոմի այդ հռչակավոր կայսրը զորք ուղարկեց Հայաստան զորավար Դոմիտիոս Կորբուլոնի ղեկավարությամբ: 57 թ. Կորբուլոնի լեգեոնները մտան Հայք, և սկսվեց հայ-հռոմեական պատերազմ: 59 թ. հռոմեացիները շարժվեցին դեպի Արտաշատ: Մի շարք կատաղի մարտեր տեղի ունեցան:

Պարթևների Վաղարշ թագավորը այդ ժամանակ պատերազմում էր հարևան մի երկրի դեմ և չկարողացավ օգնել հայերին: Հայաստանի լեռներում հայերը փոքր զորամասերով հարձակվում էին հռոմեացիների վրա: Սա հայոց զորքերի պատերազմելու այն հին եղանակն էր, որ նրանք կիրառել էին Արարատի թագավորության օրերում, Տիգրան Մեծի և այլ ժամանակաշրջաններում: Սակայն ուժերը շատ էին անհավասար, և Կորբուլոնը գրավեց Արտաշատն ու հիմնահատակ քանդեց այն: Ապա ծանր կռիվներից հետո գրավեց նաև Տիգրանակերտը և Մեծ Հայքի թագավոր ձեռնադրեց Հռոմի մի այլ կամակատարի՝ Տիգրան VI-ին, որ Հրեաստանի թագավոր Հերովդեսի ծոռն էր, հեռավոր ազգական Արտաշեսյաններին: Տրդատը փախավ Մծբին: Շուտով Վաղարշը պարթևական մեծ զորքով օգնության հասավ հայերին: Վաղարշը Մծբինում հանդես կազմակերպեց և թագադրեց Տրդատին: Իսկ հռոմեացիները գերադասեցին հաշտություն կնքել: Ներոնը նոր զորք ուղարկեց Հայաստան Կեսենիոս Պետոսի գլխավորությամբ: 63 թ. Արածանի գետի ափին գտնվող Հռանդեայում հայ-պարթևական զորքերը հաղթեցին հռոմեացիներին: Կնքվեց հայ-հռոմեական պայմանագիր. Ներոնը համաձայնեց Տրդատին ճանաչել Մեծ Հայքի թագավոր, բայց այն պայմանով, որ Տրդատը գնա Հռոմ և իր՝ Ներոնի ձեռքից թագ ստանա:

65 թ. Տրդատը մեկնեց Հռոմ: Նրա հետ էին կինը, զավակները, եղբայրները, 3000 հայ և պարթև իշխաններից ու զինվորներից բաղկացած շքախումբը: Բոլորը գնում էին ձիեր հեծած, և ինը ամսվա ճանապարհորդությունից հետո հասան Իտալիա: Ներոնը հայոց պատգամավորությանը մեծ շքեղությամբ ընդունեց: Կազմակերպեց գլադիատորների մարտեր, նետաձգության մրցումներ, որի ընթացքում Տրդատը մի նետով երկու ցուլ սպանեց և արժանացավ մրցանակի: Տրդատը հմուտ մարզիկ էր: Նա ոչ միայն դիպուկ նետաձիգ էր, այլ նաև թռիչքի, վազքի վարպետ

Հռոմ քաղաքի Ֆորում կոչված հրապարակում մեծ ու շքեղ հանդիսությամբ Ներոնը հայոց թագը դրեց Տրդատի գլխին, ապա այդ առթիվ Պոմպեյ քաղաքի թատրոնում ներկայացում տրվեց: Թատրոնը զարդարված էր ծիրանագույն դիպակներով և ոսկով: Ժողովուրդը ցնծությամբ շնորհավորում է Տրդատին: Ապա տրվեց ճոխ խնջույք: Այդպես, Տրդատը հռչակվեց **Մեծ Հայքի մեծ թագավոր:**

Ինչպես տեսնում ենք, Ներոնը, որ, ընդհանրապես, դաժան կայսր էր, Հայաստանի նկատմամբ բարյացակամ գտնվեց: Նա Տրդատ Առաջին Արշակունուն ճանաչելով հայոց թագավոր՝ վերջ դրեց Հայաստանում մի քանի տասնամյակ տևած գահակալական պատերազմներին: Հայաստանին խաղաղություն բերեց: Նա Տրդատին տրամադրեց նաև շատ մեծ գումար և կառուցող վարպետներ՝ քանդված Արտաշատը վերականգնելու և ուրիշ նոր կառուցումներ անելու համար:

Այդպես, Մեծ Հայքի համար վերականգնվեց մոտավորապես այն վիճակը, որը ստեղծվել էր մ.թ.ա. 66 թ. Արտաշատում Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև կնքված պայմանագրով: Հռոմը ճանաչում էր իր նկատմամբ բարյացակամ գտնվող Մեծ Հայքի անկախ թագավորությունը:

66 թ. Տրդատն արդեն Հայաստանում էր: Նա թագավորեց մինչև 75 թվականը (այլ հաշվումներով՝ մինչև 88-ը): Տրդատ Առաջինը շինարար թագավոր էր: Նա վերականգնեց Արտաշատը, և ըստ վկայությունների, նոր Արտաշատն ավելի շքեղ ու գեղեցիկ էր, քան նախքան ավերվելը:

Տրդատի կառուցումներից է Գառնիի ամրոցը: Հին բերդը նա ամբողջովին նորոգեց, ապա նոր ապարանքներ ու այլ շինություններ կառուցեց այդտեղ: Իսկ ամենակարևորը 77 թ. կառուցեց հեթանոսական սյունազարդ տաճար՝ Արարատի թագավորության շրջանի Արդինիի հայկյան տաճարի ճարտարապետական ձևերով: Դա հայկական

Խճանկար Գառնիի ամրոցի բաղնիքում

ճարտարապետության հրաշալի կոթողներից է: Այդ տաճարն ավերվել էր երկրաշարժից և վերականգնվել է 1975 թ.

70-ական թվականներին հյուսիսից Հայաստանի վրա դարձյալ արշավեցին ալանները (օսերը): Տրդատ Առաջինը պատերազմեց նրանց դեմ և հաղթելով դուրս քշեց երկրից:

Տրդատ Առաջինին հայ ժողովուրդը սիրեց: Նրա մասին գովասանական երգեր ու պատմություններ ստեղծվեցին ժողովրդի մեջ:

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԳԱՀԸ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Է

Տրդատ Առաջին Արշակունու թագավորելը Հայաստանի համար մի շարք տարիների խաղաղության սկիզբ դրեց: Հայաստանի և Հռոմի հարաբերությունները կարգավորվեցին: Այո, հարյուր տարի անց վերականգնվեց այն վիճակը, որը հաստատվել էր Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև (մ.թ.ա. 66 թ.) Արտաշատում կնքված պայմանագրով: Նորից հիշենք՝ ըստ դրա Հայաստանը համարվում էր հռոմեական ժողովրդին դաշնակից և բարեկամ: Այս ձևակերպման տակ Հռոմը հասկանում էր գերիշխանություն Հայաստանի նկատմամբ, իսկ հայերն այն մեկնաբանում էին իբրև Հայաստանի անկախության և Հռոմի հետ պարզ բարեկամության բանաձև: Եվ իրոք: Տրդատ Առաջինի ժամանակ Հայաստանը իրական անկախություն ուներ. արևելքից հայերը սերտ բարեկամություն էին պահպանում պարթևների հետ, արևմուտքում լավ հարաբերություններ ունեին Հռոմի հետ: Թագավորը հայոց գահ բարձրանում էր պարթևների համաձայնությամբ, իսկ Հռոմը ձևականորեն հաստատում էր գահակալությունը: Նախքան այդ, Մեծ Հայքից բավական ժամանակ անջատված Ծոփքը նորից միացվեց մայր երկրին, և այդ բանին օժանդակեց Հռոմը: Մեծ Հայքը պահպանում էր իր ամբողջությունը այն սահմաններում, որ կար Տիգրան Մեծի կյանքի վերջին շրջանում: Ավելին, հայերը ձգտում էին Մեծ Հայքին միացնել նրանից հարավ-արևմուտք գտնվող Օսրոյենե երկիրը, որ Ասորիքի մի մասն էր:

Այդ ժամանակաշրջանում Պարթևների թագավորությունը սկսել էր թուլանալ: Դա երկու գլխավոր պատճառ ուներ: Առաջինն այն է, որ Հյուսիսային Կովկասից Պարթևական պետության վրա անընդհատ հարձակվում էին լեռնականները՝ ալանների (օսերի) ղեկավարությամբ: Նրանք հարձակվում էին նաև Վրաստանի ու Հայաստանի վրա: Մյուս կողմից, Պարթևական կայսրության արևելքում գոյացել էր քուշանական հզոր պետությունը, որը լրջորեն նեղում էր պարթևներին: Քուշանների օգնությամբ Պարթևստանից անջատվեցին նրա հյուսիսային և հյուսիս-արևելյան որոշ մասերը:

Պարթևները և հայերը խնդրեցին Հռոմին պաշտպանելու կովկասյան լեռների ուղիները լեռնականներր հարձակումներից: Հռոմը զորքեր տեղադրեց այդ լեռանցքների ու ճանապարհների վրա:

Ըստ որոշ հաշվումների, Տրդատ I-ը մահացել է 88 թվականին: Նրան հաջորդել է Սանատրուկ II-ը, որը, հավանաբար, հայոց գահ է բարձրացել նախքան Տրդատի մահը:

Ըստ հռոմեական պատմիչ Արիանոսի վկայության, «Հայոց թագավոր Սանատրուկը միջահասակ էր, բայց մեծ գործերի սեր ուներ, մանավանդ՝ ռազմական գործերի: Նա արդարադատության հավատարիմ պահապան էր, կենցաղով զուսպ, չափավոր ու ողջախոհ՝ ինչպես հույներից և հռոմեացիներից լավագույնները»:

Սանատրուկ II-ը 91 թ. նվաճեց Օսրոյենե երկիրը՝ եդեսիա գեղեցիկ քաղաքով ու այն միացրեց Մեծ Հայքին: Նա Արածանի գետի հովտում, ուր Բյուրակն գետը միանում է Արածանիին և որտեղ գտնվում էր հայերի կրոնական հին կենտրոն Աշտիշատը, կառուցեց նոր մայրաքաղաք՝ Մծուրք անունով: Դա նաև մշակութային կենտրոն էր: Այդտեղ է ապրել Մարաբա փիլիսոփան, որը, ըստ Սեբեոս պատմիչի վկայության, գրել է հայոց պատմություն: Նույն Սեբեոսի վկայությամբ, Մծուրքում Սանատրուկ թագավորի պալատի դիմաց եղել է հունարեն արձանագրություն, որտեղ գրված էր հայ և պարթև առաջին թագավորների պատմությունը:

Առաջին դարում թե Հռոմեական կայսրության մեջ և թե Մեծ Հայքում ու Պարթևստանում տարածվում էր քրիստոնեությունը: Քրիստոնյաներն իրենց ուսմունքը գաղտնի էին տարածում, Հռոմում էլ, Հայքում ու Պարթևստանում էլ նրանց խստորեն հալածում էին՝ գցում էրն վայրի գազանների առաջ, խաչում էին, տանջում ու սպանում: Բայց ինչքան մեծանում էր հալածանքը, քրիստոնեությունն այնքան շատ էր տարածվում: Քրիստոնյաների այդպես սպանվելը կոչվում էր նահատակություն, սպանվողները համարվում էին նահատակներ:

Տապանաքար Էունարեն արձանագրությամբ (13-րդ դար)

Հայաստանի համար քրիստոնեության ընդունումը վճռական նշանակություն էր ունենալու երկրի հետագա ամբողջ պատմության ընթացքում: Ուստի՝ մի քանի խոսք քրիստոնեության ծագման մասին:

Քրիստոնեությունը ծագել է Հռոմի իշխանության տակ գտնվող Հրեաստանում, այդ երկրի հյուսիսային Գալիլեա երկրամասում: Քրիստոնեության հիմնադիրը Հիսուս Նազարեթցին (Նազովրեցին) է, որ հետո կոչվեց Քրիստոս: Նա ծնվել է 1 թվականին և բնակվել է Գալիլեայի Նազարեթ քաղաքում, աշխատել է որպես հյուսն (ատաղձագործ): 30 տարեկանից սկսել է քարոզել իր ուսմունքը: Այդ ուսմունքի մասին պատկերացում կազմելու համար մի քանի օրինակ բերենք Նազարեթցու խոսքերից. «Երանի խաղաղություն անողներին», «Խաղաղություն ձեզ», «Ես եկա, որ ճշմարտության համար վկայեմ», «Ուրիշի նկատմամբ վարվիր այնպես, ինչպես որ ուզում ես ուրիշը քեզ հետ վարվի», «Քո մտերիմին սիրիր ինչպես ինքդ քեզ», «Բարի արեք ձեզ ատողներին», «Երանի նրանց, որ սրտով մաքուր են», «Ներիր քո դեմ հանցանք գործածին», «Երանի նրանց, որ հալածական են արդարությունը պաշտպանելու պատճառով»: Հետո հրեաների քահանաներն ու քահանայապետը Հիսուսին մահվան դատապարտեցին և հանձնեցին հռոմեական [illegible] Պիղատոս Պոնտացու ձեռքը: Հռոմեական կայսրության մեջ հռոմեացիներին մահապատիժ էին ենթարկում գլխատելով կամ ձեռքի երակը կտրել տալով, իսկ ոչ

հռոմեացիներին խաչում էին՝ ձեռքերն ու ոտքերը մեխում էին փայտե խաչին, ու մահապատժի ենթարկվածը շուտով մահանում էր: Հիսուս Նազարեթցուն այդպես խաչեցին:

Սիրո և խաղաղության գաղափարներն էին պատճառը, որ քրիստոնեությունը շատ արագ տարածվեց աշխարհում և արդեն առաջին դարում հասավ Հայաստան, Պարթևստան, նույնիսկ, ըստ որոշ տվյալների, Հնդկաստան:

Ըստ քրիստոնեական հին վկայության, քրիստոնեությունը Հայաստան բերել են Հիսուս Նազարեթցու երկու աշակերտներ, որոնք կոչվում էին առաքյալներ: Այդ պատճառով հայոց եկեղեցին կոչվում է Առաքելական:

Առաքյալներից մեկը Թադևոսն էր, որը եկավ Հայաստանի Արտազ գավառը Սանատրուկ Ի-ի (Արշակի) օրոք և մնաց այստեղ 35 — 43 թվականների ընթացքում: Նրա քարոզչությամբ շատ հայեր, այդ թվում Սանատրուկի աղջիկը՝ Սանդուխտը, քրիստոնեություն ընդունեցին: Հայոց թագավորը սպանում էր քրիստոնյաներին: Նրա աղջիկն էլ, Թադևոսն էլ նահատակվեցին: Թադևոսի գերեզմանի տեղում վանք է կառուցված (Թադեի վանք, Մակու քաղաքի մոտ).

Քրիստոնյա եկեղեցիների ավանդության համաձայն, Հայք եկած մյուս առաքյալը Բարդուղիմեոսն է, որը նախ Պարթևստանում էր քարոզում, ապա՝ Սյունիքում և Գողթան գավառում (Նախիջևանի մոտ): Նրա քարոզչությամբ նույնպես շատ հայեր, այդ թվում թագավորի քույր Ոգուհին, քրիստոնեություն ընդունեցին: Հայոց թագավորը դրանց էլ սպանել տվեց: Բարդուղիմեոսի գերեզմանը Մեծ Հայքի Աղբակ գավառում է (Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք):

Մինչև 301 թվականը Հայաստանում քրիստոնեական համայնքները մնացին գաղտնի և հալածական, իսկ այդ թվականին քրիստոնեությունն ընդունվեց իբրև համազգային կրոն:

Լատիներեն արձանագրություն Հայաստանից (185 թ.)

ՎԱՂԱՐԾ ԱՌԱՋԻՆ ԵՎ ՎԱՂԱՐԾԱՊԱՏ

Փոքր պետություններն աշխատում էին հզորանալ եվ հզորանում էին հարևան պետություններին հպատակեցնելով: Հետո եթե իրար դիմաց էին կանգնում հզորացած երկու պետություններ, մեկն աշխատում էր մյուսին հաղթել ու հնազանդեցնել: Այսինքն՝ աշխարհում տիրում էր ուժի օրենքը: Մովսես Խորենացին մեզ հայտնում է այդ օրենքի բանաձևը՝ «Քաջերի սահմանը իրենց զենքն է»: Այդպես, պետությունների միջև «օրենքը» զենքի ուժն էր, բռնությունը: Դա գայլի օրենք էր:

Սա վատ է, անշուշտ, քանի որ ոչ թե արդարությունն էր հաղթում, այլ բռնի ուժը, որը հաշվի չէր առնում, թե ինչն է արդար, ինչը՝ անարդար, ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Պետությունների, ժողովուրդների մեջ իշխող ուժի ու բռնության այդ օրենքը հնուց է գալիս և շարունակվելով հազարամյակներ, հասել է մինչև մեր օրերը:

Աշխարհի այն մասում (Հարավ-արևմտյան Ասիայում), որտեղ Հայաստանն էր, այդ օրենքի գործադրությունը շատ հստակ է երևում: 2-րդ դարում այդտեղ դեմ-հանդիման կանգնել էին հզորացած երկու պետություններ՝ Հռոմը և Պարթևստանը: Շրջակայքում կային և մի շարք ուրիշ երկրներ, որոնք կամ այդ հզորներից որևէ մեկին էին կցված, անկախությունը բոլորովին կորցրած, կամ կիսանկախ վիճակում էին՝ հնազանդ դարձյալ այդ երկուսից մեկին

Հայաստանը թեև անկախ էր, բայց նրա վիճակը շատ ծանր էր, քանի որ նա ոչ թե այդ երկու հզոր տերություններից որևէ մեկի հարևանն էր, այլ երկուսի հարևանը միաժամանակ, երկուսի միջև գտնվող: Հայերի այդ վիճակը ծանր էր մանավանդ նրանով, որ Հայքը, ինչպես արդեն գիտենք, կորցրել էր իր վաղեմի հզորությունը. չկար Մեծ Հայքի Արարատյան թագավորության սասանիչ զորությունը, որ ընկճում էր բոլոր չորս կողմերի պետություններին ու երկրներին, չկար Տիգրանի հայոց կայսրությունը, որ դիմագրավում էր ու հաճախ հաղթում Հռոմին ու Պարթևստանին: Հայքը

Կնոջ գլուխ, հայկական քանդակ, 3-րդ դար

ռազմական տեսակետից նախկին անպարտելի ուժը չուներ, բայց, բարեբախտաբար, հայոց ինքնության և պետականության ոգին պահպանվում էր: Հայ իշխանների ու թագավորների համար անխախտ էր մնում Մեծ Հայքը որպես անկախ պետություն պահպանելու սկզբունքը, ասպարեզից հանված չէր Նաև Տիգրանյան կայսրությունը վերականգնելու հեռանկարը: Բայց պարթևներն էլ իրենց ծրագիրն ունեին՝ մինչև Բալկանյան թերակղզի (Հունաստան) վերականգնել Աքեմենյան պարսից կայսրությունը և դեռ ընդարձակել՝ հասցնել մինչև Հռոմ (Իտալիա)՝ հաստատելով Արևելքի միանձնյա տիրապետությունը աշխարհի այդ մասերում: Հռոմն էլ, ինչպես գիտենք, իրեն համարում էր Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության հետևորդը և նպատակ էր դրել մինչև Հնդկաստան հասնել ու աշխարհակալ, մեծ կայսրություն հիմնել Արևմուտքի գերիշխանության ներքո:

Ահա այս ծրագրերի և ուժերի այսպիսի հարաբերության մեջ էր ընթանում Հայոց պատմությունը 2-րդ և 3-րդ դարերում:

Քրիստոնեությունը անաղմուկ տարածվում էր այդ նույն տարածքում. նրա սահմաններն էին արևելքում Հնդկաստանը, արևմուտքում Հռոմը և դեռ նրանից էլ հյուսիս ու արևմուտք: Բայց և ամենուրեք մնում էր հալածական: Իսկ պետությունների մեջ շարունակում էր կատաղիորեն գործել գայլի օրենքը

Հայոց Սանատրուկ II Արշակունու մահից (109 թ.) հետո 110—114 թվականներին հայոց գահը պարթևական երկու դրածո թագավորների՝ նախ Աշխադարի, ապա Պարթամասիրի ձեռքին էր: Դրանք Սանատրուկի ժառանգները չէին և իրենց գահակալությամբ ընդհատում էին հայ Արշակունիների թագավորական տան ժառանգական հաջորդականությունը: Այդ դրածոներին դեմ էին ոչ միայն Հռոմը, այլև հայոց իշխանները: Եվ մի պատրվակ անելով, 114 թ. Հայաստան մտան Հռոմի Տրայանոս կայսեր լեգեոնները:

63 թ. Հռանդեայի պայմանագրով հայոց թագավորները պետք է թագ ստանային Հռոմից, մինչդեռ պարթևները առանց Հռոմի համաձայնության հայոց գահ էին բարձրացրել Վերոհիշյալ Պարթամասիրին: Հռոմը սա համարեց պայմանագրի խախտում և մեծ զորքեր մտցրեց Հայաստան: Ապա՝ Տրայանոսն իր արշավանքը շարունակելով, պարթևներից գրավեց նաև Միջագետքը՝ Բաբելոնով հանդերձ, պարթևների Տիզբոն մայրաքաղաքը, Սելևկիա և Եդեսիա քաղաքները, հասավ մինչև Պարսից ծոց, նվաճեց նաև արաբական Խարաքս երկիրը (այժմյան Քուվեյթի տեղում): Տրայանոսը ծրագրում էր արշավանքը շարունակել մինչև Հնդկաստան, բայց 117 թ. վախճանվեց Կիլիկիայում:

Տրայանոսն իր նվաճած երկրները զրկում էր որևէ տեսակ ինքնավարությունից ու անկախությունից և դարձնում էր հռոմեական նահանգ՝ պրովինցիա: Այդպես Մեծ Հայքն էլ նա հայտարարեց Հռոմեական պրովինցիա և այնտեղ նշանակեց հռոմեացի կուսակալներ (լեգատներ):

Բայց Տրայանոսի նորաստեղծ պրովինցիաներում ժողովուրդն ու ազնվականությունը դժգոհում էին հռոմեացիների խորթ, իրենց համար անտանելի տիրապետությունից, և մի շարք վայրերում ապստամբություններ եղան: Հայաստանում հակահռոմեական պատերազմը ղեկավարում էր հայոց Սանատրուկ թագավորի որդի Վաղարշ Արշակունին: Հայերը հաղթեցին, և հռոմեական լեգեոնները քշվեցին երկրից: 117 թ. Վաղարշը հռչակվեց որպես Մեծ Հայքի թագավոր:

Վաղարշ I-ը ջանում էր երկիրը ծաղկեցնել: Այդ նպատակով նա հնարավորություններ ստեղծեց Հայաստանում առևտրի զարգացման համար: Նա նախկին Վարդգեսավան առևտրաշատ ավանի տեղում հիմնադրեց նոր քաղաք, որը սկզբում հենց այդպես էլ կոչվում էր՝ Նոր քաղաք, բայց հետո թագավորի անունով սկսեց կոչվել Վաղարշապատ (այժմ Էջմիածին): Այս քաղաքը դարձավ հայոց նոր մայրաքաղաք, թեև Արտաշատն էլ մայրաքաղաքի իր իրավունքը դեռ երկար ժամանակ պահպանում էր:

Վաղարշապատը շուտով դառնալու էր նաև հայոց մշակույթի գլխավոր կենտրոնը Մեծ Հայքում և այդ դերը պահպանելու էր շատ դարեր, մինչև 1918 թվականը:

Իսկ Արևելքում Տրայանոսի ստեղծած և իրենց գոյությունը շատ կարճ պահպանած պրովինցիաները Հռոմ
որպես գերիզոր կայսրության վերջին աշխարհասասան հաղթանակների արդյունքն էին: Դրանք ապարդյուն դա
ձան Տրայանոսի մահով: Հայաստանից բացի, նրա գրաված մյուս երկրներն էլ անկախացան կամ անցան Պա
թևատանի գերիշխանության տակ:

Հռոմի թուլացումն Արևելքում ընդհանուր առմամբ դրական երևույթ էր, բայց և ուներ իր բացասական կողմ
Դրա մի արտահայտությունն այն էր, որ լեռնական ալանները նորից սկսեցին ասպատակել Աղվանքը, Հայաստան
Ատրպատականը, նույնիսկ հասան մինչև Կապադովկիա (Մեծ Հայքից արևմուտք).

Վաղարշ Ի-ը մասամբ կանգնեցրեց նրանց արշավանքը՝ նվերներ տալով առաջնորդներին: Բայց Հռոմում տե
նելով, որ Հայաստանը կրկին հզորանում է, Վաղարշ Ի-ն էլ անկախ քաղաքականություն է վարում, որոշեցին ազա
վել նրանից: 138 թ. Հռոմի կայսր դարձած Անտոնիոս Պիոսը զանազան խարդավանքներով 144 թ. գահընկեց արե
Հայոց Վաղարշ Ի-ին և նրա փոխարեն Հայաստանի գահին բազմեցրեց Հռոմին հնազանդ Սոհեմոս անունով մ
կին, որը Ասորիքի Էմեսա քաղաքի թագավորիկն էր: Նա Հայքում իշխեց մինչև 180-ական թվականների կեսեր
(3 տարի ընդմիջումով):

Առանց պարթևների համաձայնության Հայաստանում իր ուզած մարդուն թագավոր կարգելով՝ Հռոմն իր հե
թին խախտեց Հռանդեայի պայմանագիրը: Դա էլ չհանդուրժեց Պարթևստանը, և նրա թագավոր Վաղարշ III Պերոզ
(Հաղթողը), 148 թ. գահ բարձրանալով, սկսեց հզորացնել իր երկիրը և պատրաստվել Հռոմի դեմ պատերազմի: Ի
Հռոմում գահ էր բարձրացել (161 թ.) Մարկոս Ավրելիոս կայսրը, որը բարքով մեղմ մարդ էր, մեծ փիլիսոփա և Հա
յաստանի նկատմամբ էլ մեղմ քաղաքականություն էր վարում: Գուցե դա էր պատճառը, որ նրա գահակալությա
առաջին իսկ տարում պարթևական զորքերը մտան Հայաստան, Սոհեմոս թագավորը փախավ Հռոմ և այնտեղ դա
ձավ սենատոր: Իսկ Հայաստանի գահին տիրացավ Արշակունի Բակուրը: Սա իշխեց շուրջ 2 տարի, քանի որ 163 թ
հռոմեական լեգեոնները դարձյալ մտան Հայաստան, գրավեցին Արտաշատն ու Վաղարշապատը և մի տարի ան
Սոհեմոսին նորից հայոց թագավոր հռչակեցին:

Հայ իշխանները վերջնականապես զզված էին հռոմեական դրածոյից ու Հռոմի գերիշխանությունից: Եվ նրան
ապստամբություն բարձրացրին Հռոմի դեմ: Հայերի դեմ պատերազմելիս սպանվեց Հռոմի զորքերի առաջնոր
Ստատիոս Պրիսկոսը: Ապա հակահռոմեական շարժումը սկսեց ղեկավարել հայոց մի նախարար՝ Տրդատ անունո
Հռոմի զորահրամանատար Լուկիոս Վերոսը հայերի դեմ օգնության կանչեց հենիոխներին (բնակվում էին Սև ծով
հարավային շրջանում): Տրդատը սպանեց սրանց թագավորին, ապա սուրը հանած սպառնաց իրեն՝ Լուկիոս Վ
րոսին: Բայց ի վերջո հաղթեց հռոմեացիների մեծաքանակ բանակը: Ըստ երևույթին, հռոմեացիները խորամանկո
թյամբ իրենց ձեռքը գցելով Տրդատին, հաշիվ տեսան հայոց զորքի հետ: Նրան մահապատիժ էր սպասում: Բայ
կայսր Մարկոս Ավրելիոսը ինչ-որ չափով մեծահոգի եղավ և որոշեց բավարարվել աքսորով: Հայոց խիզախ առաջ
նորդ Տրդատն աքսորվեց հեռավոր Բրիտանիա:

Սակայն Տրդատի ապստամբությունն ու պատերազմը իզուր չանցան: Հռոմը, որ ուզում էր Մեծ Հայքը ու
ղակի կցել իր կայսրությանը, դարձնել հռոմեական պրովինցիա, հայերի դիմադրության պատճառով հրաժարվե
իր այդ ծրագրից. 166 թ. հայկական պատերազմն ավարտվեց: Մեծ Հայքը կրկին դարձավ անկախ պետությու
180-ական թվականների կեսերին (հավանաբար 185 թ.) Վաղարշապատում հայոց գահ բարձրացավ Վաղարշ
Արշակունին: Այս գահակալությունը հայոց պատմության մեջ կարևոր էր նրանով, որ հայ Արշակունիների գահ
դրանով դարձավ խստորեն ժառանգական, հորը փոխարինում էր որդին, և այդպես պահպանվեց մինչև 428 թվ
կանը:

Հայոց պատմության մեջ սկսվեց նոր դարաշրջան.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին. Հայ ժողովրդի ծագումը 5
Թվականներ, աղբյուրներ 5
Հայկական լեռնաշխարհ կամ Մեծ Հայք 9
Ծագումը 9
Մի քիչ լեզվաբանություն 11
Մայր հայրենիքը 12
Վկայում են բառերը 15
Հայաստանի հնագիտությունը 18
Գլուխ երկրորդ. Հայոց հնագույն պատմությունն ըստ վկայությունների 25
Հայաստանի և հայերի ամենահին հիշատակությունները արձանագրությունների մեջ 25
Հայքը և Խաթթին 28
Երկիր Նաիրի 34
Գլուխ երրորդ. Վանի Արարատյան թագավորությունը 40
Արարատի հայոց թագավորության արձանագրությունները 42
Լսենք Մովսես Խորենացուն 48
Հայոց արքա Արամը 52

Սարդուր, Իշպուհինի, Մենուա 56
Մենուա 61
Արա Առաջինը և Մեծ Հայքի միավորումը .. 67
Արա Առաջինից հետո 74
Արա Երկրորդ, թագավոր խաղաղության 80
Ռուշա Երկրորդ 83
Գլուխ չորրորդ. Հայոց Երվանդունիները 89
Երվանդունիների հաղթանակը 89
Երվանդ Սակավակյաց և Տիգրան Առաջին 93
Հայքը նորից անկախություն է նվաճում 96
Պարսից Աքեմենյան կայսրության խորտակումը և
Հայքի անկախությունը 102
Հայկական հնագույն արվեստը, բանահյուսությունը, կրոնը 105
Գլուխ հինգերորդ. Արտաշեսյաններ 126
Երվանդ Չորրորդից մինչև Արտաշես Առաջին 126
Արտաշես և Արտաշեսյան տուն 129
Տիգրան Մեծ 133
Տիգրան և Արտավազդ 137
Արտաշես Երկրորդ և վերջին Արտաշեսյաններ ... 140
Գլուխ վեցերորդ. Արշակունիների թագավորության սկիզբը 144
Խառը ժամանակներ 144
Տրդատ Առաջին Արշակունի 146
Արշակունիների գահն ամրապնդվում է 153
Վաղարշ Առաջին և Վաղարշապատ 156

ՃԱՆԱՉՄԱՆԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՌԱՖԱՅԵԼ ԱՎԵՏԻՍԻ ԻՇԽԱՆՅԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք I

Զրույցներ

Դպրոցական միջին տարիքի համար

ПОЗНАВАТЕЛЬНОЕ ИЗДАНИЕ

РАФАЕЛЬ АВЕТИСОВИЧ ИШХАНЯН

ИЛЛЮСТРИРОВАННАЯ ИСТОРИЯ АРМЕНИИ

Книга I

Беседы

Для среднего школьного возраста

Художник М. Г. Кечоглян

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван 1990

Խմբ. վարիչ Ա. Տ. Սարգսյան
Խմբագիր Ա. Ա. Դուկասյան
Նկարիչ Մ. Հ. Քեչոգլյան
Լուսանկարները Տ. Հ. Փաշայանի
Հ. Ե. Սիմոնյանի, Վ. Ա. Թոչարի Վ. Հ. Սարգսյանի
Գեղ. խմբագիր Խ. Ջ. Հակոբյան
Տեխ. խմբագիր Ա. Վ. Հովհաննիսյան
Վերստուգող սրբագրիչ Է. Ա. Սեդրակյան

ИБ № 568

Պատվեր՝ նախորդ հրատարակությունից Ստորագրված է տպագրության 1 08 90 թ Չափը 84×90¹/16
Թուղթ՝ օֆսեթ Տառատեսակ՝ «Արարատ». Տպագրություն՝ օֆսեթ 14,0 պայմ տպ մամ , 56,0 պայմ ներկ թերթ
16 06 հրատ մամ. Տպաքանակ՝ 50 000 (1 ին թողարկում՝ 1 — 25.000)· Պատվեր՝ 1527 Գինը 2 ռ. 50 կոպ

«Սովետակ» հրատարակչություն Երևան — 9, Տերյան 91
Издательство «Аревик», Ереван — 9 ул. Теряна, 9

Հայկական ԽՍՀ. հրատարակչությունների, պոլիգրաֆիայի
և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի
ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ծովակալ Իսակովի պող. 48

ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Госкомитета Армянской ССР по делам
издательств, полиграфии и книжной торговли
Ереван — 82 пр Адмирала Исакова, 48